

ՀՀ ԳԱԱ Հ.ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅԵՐԵՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐ

Ժողովածուն նվիրվում է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի
անվան լեզվի ինստիտուտի հիմնադրման
75-ամյակին

ԵՐԵՎԱՆ
2018

Հրապարակվում է ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագիրներ՝

բ.գ.դ. Վ. Լ. Կատվայան

բ.գ.դ. Լ. Ս. Հովսեփյան

բ.գ.թ. Ն.Մ.Սիմոնյան

բ.գ.թ. Ա. Ս. Գալստյան

Հայերենագիտության արդի խնդիրներ (գիտական
հոդվածների ժողովածու): – Ե., 2018:

[http://www.language.sci.am/hy/conferences/institute-75-
years-conference](http://www.language.sci.am/hy/conferences/institute-75-years-conference)

Ժողովածուում գետեղված հոդվածներում քննվում են
արդի հայերենի, հայ բարբառագիտության, կիրառական
լեզվաբանության տեսական և գործնական կարևորություն
ունեցող մի շարք հարցեր:

ISBN 978-9939-9199-1-1

©ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, 2018
30.01.19 (Էլ. հրատ.)

**ԿԱՅՈՒՆ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԺՈՂՈՎՐԴԻ
ՊԱՏԿԵՐԱՎՈՐ ԼԵԶՎԱՍՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԻՉ**

Բարբառագիտական ասլասի նյութերի հավաքման ծրագրում (այսուհետ՝ Ծրագիր) ¹ հայերենի բարբառների բառապաշարի տարածքային տարբերություններին որոշակի տեղ է հատկացված, ինչը համեմատություններ կատարելու հնարավորություն է ընձեռում ուսումնասիրողներին: Մակայն բառակազմական խնդիրներն այդ ծրագրում հարցման հատուկ առարկա չեն դարձել, թեև բառանվանողական նյութերի գրանցումներում կարելի է գտնել տեղեկություններ նաև բառակազմության վերաբերյալ: Բարբառագիտաբար, բարբառագիտական մենագրություններում, ազգագրական- բանահյուսական ուսումնասիրություններում, հայ ժողովրդական հեքիաթներում առկա նյութերը հուսալի շտեմարան են հայերենի բարբառների բառակազմական իրողություններն ուսումնասիրելիս:

Մեր այս քննության շրջանակներում անդրադառնանք բաղադրյալ բառերի յուրօրինակ տեսակ կազմող *կայուն բառակապակցություններին*, որոնք անբաժանելի են՝ որպես մեկ բառիմաստ արտահայտող միասնություն և ունենալով անվանողական դեր՝ նախադասության մեջ հանդես են գալիս իբրև մեկ անդամ: Դրանք առաջանում են հիմնականում շարահյուսական կապակցություններից բառերի՝ երկարատև միասին գործածվելու, պարբերաբար կրկնվելու հետևանքով՝ նպաստելով սերտ ու միասնական իմաստ արտահայտելուն և մեկ բառային միավորի վերածվելուն:

Ըստ իմաստային առանձնահատկությունների և ծագման՝ կայուն կապակցությունները լինում են բաղադրական և դարձվածային: Վերջիններս իրենց առաջացմամբ կապվում են խոսքի հետ. նախապես եղել են սովորական շարահյուսական կապակցություններ և հետագայում, գործածվելով

1 Տե՛ս Հայերենի բարբառագիտական ասլասի նյութերի հավաքման ծրագիր, 1977:

փոխաբերաբար, աստիճանաբար վերածվել են ինքնուրույն բառակապակցության ու ստացել բառային իմաստ հենց այդ փոխաբերական նշանակությամբ՝ ձեռք բերելով բառին հատուկ անվանողական դեր²:

Քննության առնենք դարձվածային կայուն կապակցությունների մի քանի օրինակ՝ որպես բառանվանողական հետաքրքիր ձևեր հայերենի բարբառներում:

Քեսաբի բարբառի ուսումնասիրության մեջ նշվում է, որ դրանք առավելապես առնչվում են կենդանիների, բույսերի, բնության երևույթների անուններին: Այդ բարբառում հետաքրքիր բառանվանումներ կան երկնային մարմինների, համաստեղությունների և բնական երևույթների համար՝ հավանաբար, խոր հնադարից եկող: Ասենք, օրինակ՝ **եռօթթը աղբըրտաք** կամ **կէնկէոն** (կանգուն) **կըշիեռք** համաստեղությունների անունները կամ կենդանիների և բույսերի անվանումները՝ նկարագրորեն տվյալ առարկան կամ երևույթը ճանաչելի ու ընկալելի դարձնող: Այդ բարբառում **չաթալօկ եգիկ** ասում են ծիծեռնակին (երկճղի պոչիկով), իսկ, ասենք, կարիճին՝ **կուրկուր ագա** (կեռ պոչ): Պատկերավոր լեզվամտածողության առումով շատ հետաքրքիր են բուսանունները: Օրինակ՝ Քեսաբի Կարադուրան գյուղի խոսվածքով ցողունի վրա իջնող մազմզուկներով բույսը՝ **խուրուզը վարտեք** (աքլորի վարտիք) է կոչվում: Հետաքրքիր է, որ կլորիկ և մեջտեղում փոսիկ ունեցող ուտելի բույսն անվանում են **իրիսկընը պուրտ**՝ երեցկնոջ թմբիկ փորին, հավանաբար, նմանեցնելով: Կա նաև՝ **մէքը դըմու՞կ** (մաքու դմակ) բուսանունը³: Ճիշտ այդպիսի նկարագրական արժեք ունի Արարատյան բարբառի խոսվածքներում խաղողի մի տեսակի անվանումը՝ **գառան դըմակ**:

15-րդ դարի մեծ բժշկապետ *Ամիրդովլաթ Ամասիացին* իր *<Անգիտաց անպէտ>* աշխատության մեջ բուժիչ խոտաբույսերի լատիներեն և գրաբարով ավանդված անվանումից բացի նշում է նաև ժողովրդի խոսքում առավել գործածական անվանումները՝ նկարագրական եղանակով խոտաբույսը ճանաչելի դարձնող: Օրինակ՝ բորբոքային հիվանդություններ բուժող **անմոռուկ** բույսի

² Տե՛ս **Հ. Պետրոսյան**, *Հայերենագիտական բառարան*, օ., 1987, էջ 138:

³ Տե՛ս **Յ. Չոլաքեան**, *Քեսապի բարբառը*, օ., 2009, էջ 187:

համար նշում է ժողովրդին առավել հասկանալի՝ *մկան ականջ* բառակապակցությունը: Կամ, ասենք, *ուղտի լեզու, եզան լեզու* և այլն⁴:

Բանահյուսական նյութերը լայն հնարավորություն են տալիս հայտնաբերելու կայուն բառակապակցությունների եզակի օրինակներ: Ասենք, միայն Սասունի բարբառում կա *աղվիս խըրդուկ* – դեղին ծաղիկներով մի բույս (ասում են՝ աղվեսը խրտնում է դրանից):

Յուրօրինակ և ազգագրական այլ գոտիներում չհանդիպող բառակապակցություններ ենք գտել Մշո բարբառին նվիրված ուսումնասիրության մեջ օգտավործված բանահյուսական նյութերում: Շատ հետաքրքիր է *անկրնեզ ցորեն* բառակապակցությունը, որը նշանակում է՝ *անցյալ տարվա հնձից թափված ցորենի հատիկներից աճած ցորեն*՝ (*անկ-անկրնեզ-ընկած*)⁵ : Նույն ուսումնասիրության մեջ գտել ենք ինքնատիպ մի դարձված՝ *բ'ագ բ'ըռնել*, որ նշանակում է արևի կամ լուսնի (որևէ լուսատուի) խավարելը⁶ : Այդ բառակապակցությունը մեզ հանդիպել է նաև Սասունի ժողովրդական խաղիկներում՝ *լուսնազրն բագ պըռնիրը* արտահայտության կազմում, և մեծ է գայթակղությունը այն բացատրելու այսպես՝ *լուսնի լույսը բակն է բռնել*: Սակայն *բակ* բառը բացակայում է նշված բարբառներում: Ճիշտ թարգմանությունն է՝ *լուսինը խավարել է*:

Ծագումնաբանական-գործառական ուսումնասիրության ժամանակ ի հայտ եկող բառանվանողական տարբերությունները բացի լեզվաբանական հետաքրքրությունից ունեն նաև պատմամշակութային արժեք, քանզի ներառում են բնության երևույթների մասին վաղնջական պատկերացումներ և հազարամյակների փորձով հաստատված աշխարհաճանաչողություն:

Վերոհիշյալ Ծրագրով հավաքչական աշխատանքներ կատարելիս նկատել ենք, որ բարբառախոսներն անմիջապես չեն կողմնորոշվում *Արև եղանակին բարակ անձրև* հասկացության՝ տվյալ խոսվածքում առկա համապատասխանությունը ներկայացնելիս (Ծրագրի 12-րդ կետի հարցումով): Այդ

⁴ Տե՛ս Ամիրդովլաթ Ամասիացի, *Անգղիտաց անպէտ*, օ., 1992, էջ 15:

⁵ Տե՛ս Ս.Բաղդասարյան-Թափալցյան, *Մշո բարբառը*, օ., 2009, էջ 184:

⁶ Տե՛ս Նույն տեղում:

բառակապակցությունը թարգմանելիս բարբառախոսները գրեթե միշտ խնդրում են մեզ հուշել հենց այդ նպատակով Ծրագրում զետեղված ձևերը, ինչպես՝ *գիլածընուկ-գելցրկնուկ-գելցրոթել-կուլաշաղ... արևմաղ-արևցող* և այլն: Այդ դեպքում բարբառախոսներն արդեն մտաբերում են իրենց մեծերից լսած համարժեք ձևեր՝ հիմնականում կայուն բառակապակցություններով արտահայտված: Դժվար չէ նկատել, որ դրանք աղերսվում են այդ ոչ հաճախադեպ երևույթի մասին սերնդեսերունդ ավանդված ինչ-որ հավատալիքների հետ: Մշո բարբառի *Մկրագում, Քրդագում, Հացիկ, Բոստաքյանդ, Կոպ* գյուղերի խոսվածքները գրառելիս համատարած գրանցել ենք *գ'իլու հարսնիկ* բառակապակցությունը: Գործառում է նաև անանցումով ձևը՝ *գելցրոտուգ*: Օրինակ՝ *Գելցրոտուգ մէ թալէծ: Բդաղ գ'իլու հարսնիկ է:*

Խուրթի գավառի Բիջունք գյուղի խոսվածքով բնության այդ երևույթը խրատաբանական ասույթի ձևով է ներկայանում.

Արեվօվ անձրեվ օր գ'իկը, գ'էլ սար գըցըռտը:

Բոստաքյանդ գյուղի խոսվածքով՝

Իմ ջ'օճօն կըսէր՝ հանդէ գ'էլ սար ցըռտէց:

Քանի որ ամառային անձրևը կարող էր ուղեկցվել նաև կայծակով, երեխաներին արգելում էին դուրս գալ տնից՝ պատճառաբանելով, թե դրսում գայլեր կան.

Լա'օ, դ'ուս մէ'րտա, գ'իլու հարսնիկ է:

Վան-Վասպուրականի ազգագրական գոտու բանահյուսության մեջ առկա է արևով անձրևի ժամանակ մարդաշատ վայրերում գայլերի հայտնվելու մասին ակնարկող ասույթը՝ որպես շուտասելուկ.

Արեվօվ անձրեվ կուկէր ,

Պէլն ի շուկէն շուռ կու կէր:

Նմանատիպ ասացվածք կա նաև Մշո բարբառի ուսումնասիրության մեջ.

*Արեվօվ անձրեվ գ'իքա, գ'էլ ի շուգէն ժուռ գ'իքա*⁷:

⁷ Տե՛ս Ս.Բաղդասարյան-Թափալցյան, *Մշո բարբառը*, օ., 1958, էջ 211:

Անտիոքի բարբառախմբի Քեսաբի բարբառում շնագայլին **թէրէկ** են ասում, և վերոհիշյալ բառահոդվածի դիմաց այդ բարբառում գրանցել ենք **թէրէկին հարսնէկ** բառակապակցությունը:

Կրոնափոխ համշենահայերի բարբառին և բանահյուսությանը նվիրված մենագրության մեջ Խոփայի խոսվածքում **ղյափօն հայսնիք** բառակապակցությունն է վկայված⁸:

Արևելյան խմբակցության բարբառներից Արարատյան բարբառի Աշտարակի խոսվածքը գրառելիս տարեց բարբառախոսը մեր հարցումին տվել է այսպիսի պատասխան.

Արեկ յէղանագին անձրեկ անէր, պապս կասէր՝ էրէկըմ ա՝ ջելը սարը ցըրթէց:

Կարծում ենք՝ գայլի հետ կապված նկարագրական նմանատիպ բառանվանումները խարսխված են հնագույն հավատալիքների վրա: Աշխարհի ժողովուրդների առասպելաբանությանը նվիրված հատորներում հետաքրքիր նյութեր կան գայլի պաշտամունքի մասին: Թե դա ի՞նչ հավատալիք է և ինչու՞ է տարբեր ազգագրական գոտիների ասացվածքներում դրսևորվել, փորձել ենք պարզել գայլի պաշտամունքի մասին հանրագիտարանային նյութերից: Շատ ժողովուրդների հավատալիքներում գայլը երկակի արժեք ունի: Մի դեպքում գայլը տոտեմ է, նախնի և տվյալ ժողովրդի սկզբնավորման ակունքներում դրական դեր կատարած կենդանի (հիշենք Հոռմի հիմնադիր երկվորյակներին՝ Ռոմին ու Ռոմուլոսին իր կաթով մեծացրած գայլին) և մյուս դեպքում, ասենք, սկանդինավյան և սլավոնական ժողովուրդների հեքիաթներում՝ կերպարանափոխվող և մարդկանց մեծ վնաս պատճառող չարիք: Տարբեր ժողովուրդների բանահյուսության մեջ ամուսնության ծիսակարգերին բնորոշ հավատալիք կա, որ փեսան կամ թագավորը պիտի պահապաններով (ընկերներով) շրջապապատված լինի՝ չար ուժերի ազդեցությունից զերծ մնալու համար: Իբր

⁸ Տե՛ս Ս. Վարդանյան, *Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը*, ՊՀ հրատ., 2009, էջ 80:

փեսան կարող է վերափոխվել մարդագայլի: Սկանդինավյան ժողովուրդների հեքիաթներում այդ մարդագայլն իջնում է մարդաշատ վայր, ասենք, շուկա ու վնասում մարդկանց: Ռուսական հեքիաթներում էլ մարդագայլը կերպարանափոխվում է և մարդկանց մեջ զուգընկեր է փնտրում՝ շարունակելու համար իր սերունդը⁹:

Մեր կարծիքով՝ արևով անձրևի ժամանակ գայլի կերպարանափոխության և սերունդ տալու մասին հայ բարբառներում առայսօր գործառող բառանվանումներն ուղղակիորեն աղերսվում են դարերի խորքից եկող այդ հնագույն հավատալիքի հետ: Մարդկանց և ընտանի կենդանիների համար մեծ վտանգ ներըկայացնող այդ գիշատչից պաշտպանվելու համար ստեղծվել են տարատեսակ հմայիլներ և *գելկապի աղոթքներ*: Կար հավատալիք, որ այդ անձրևը սարերում ծնող գազանի համար յուրատեսակ վարագույրի դեր է կատարում: Մարդագայլի կերպարանք կարող են ստանալ հատկապես չարաբարո մարդիկ՝ ըստ մեր նախնիների հավատալիքների:

Այն, որ այս բառակապակցությունը գրեթե համատարած է հայ բարբառներում, փաստում են նաև բանահյուսական նմուշները: Կայուն բառակապակցությամբ ներկայացող դարձվածքը նույն կազմով կամ անդամներից մեկի փոփոխակով հանդիպում է ազգագրական տարբեր գոտիներ ներկայացնող բանահյուսական նյութերում՝ ինքնին վկայելով ժողովրդի պատկերավոր լեզվամտածողության մասին:

Джемма Барнасян - Устойчивые словосочетания как показатель образного мышления народа. - Неопределенность чужда лингвистическому мышлению народа, и в диалектах есть словообразовательные формы и средства для того, чтобы сделать слово более узнаваемым, смысл слова - более воспринимаемым, для того, чтобы выразить смысловые оттенки, создавая прекрасные образцы иллюстративного мышления. Так как язык в первую очередь является языковым мышлением, не удивительно, что в словесном продукте разных народов часто выступают идентичные словообразовательные шаблоны- часто совпадая также в

⁹ Տե՛ս *Мифы народов мира*, Москва, Советская энциклопедия, том 1, стр. 242:

смысловом поле. Как известно, в течение исторических контактов заимствование иностранных слов обусловлено смысловыми и применяемыми оттенками. Кроме того, что разницы номинативных слов, обнаруживающиеся в результате генеалогически-функционального изучения, представляют лингвистический интерес, они также имеют историко-культурную ценность. Они могут также представить великолепный материал этнографам и историкам, так как они включают в себя представления о явлениях природы, исходящие с древних времен, самобытное мировосприятие и утвержденное опытом столетий миропознание.

Содержа в своей глубине генеалогические, семантические данные, во многих случаях из диалектических фактов перерастает в историю армянского языка, этнографию, существенные факты для психологической лингвистики и других научных категорий.

Գյուրջինյան Դավիթ (Հայաստան,
ՀՀ ԿԳՆ Լեզվի կոմիտե)

ՀԱՅ ԱՌԱՋԱՐԱՐԱԴՐԻՉՈՎ ՀԱՏՎԱԾԱԿԱՆ ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՊԱԿՑԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

Կապակցելիությունը¹⁰ լեզվական միավորներին (նվազագույն միավորներից՝ հնչյուններից սկսած) բնորոշ ամենաէական հատկությունն է: Բառերի կապակցելիությունը բնութագրվում է որպես բառային նշանակության մեջ պարփակված ներուժ, այլ կերպ ասած՝ լիմաստ ուրիշ բառ իրեն ձգելու, քերականորեն կապելու ունակություն, որը խարսխվում է կապակցվող բառերի իմաստային հարաբերությունների, նրանց «իմաստային համաձայնության»¹¹ վրա, այսինքն՝ «կապակցությունները կազմվում են առաջին հերթին բաղադրիչների իմաստային գուգորդումների հնարավորության դեպքում»¹²: Տվյալ միավորն ամբողջական է դառնում, նրա իմաստը հստականում է, երբ ձևավորվում է լրացում-լրացյալի կապակցությունը:

Կապակցելիությունը միաժամանակ տարաբնույթ երևույթ է. այն թե՛ շարահյուսական է, թե՛ բառաքերականական, թե՛ իմաստային¹³ և պայմանավորված է քերականական, բառային և իմաստային գործոններով:

Հայ առաջնաբաղադրիչով հատվածականները¹⁴ բառային միավորներ են ընկալվում¹⁵, ածականի արժեք ունեն և այդ արժեքով (խոսքի մասերի

¹⁰ Կապակցելիություն գլխաբառ չունեն հայերենի լեզվաբանական (տերմինաբանական), բացատրական բառարանները, **գուգորդելիություն** բառի հետ այն կա Ա. Հ. Նազարյանի «Լեզվաբանական տերմինների ֆրանսերեն-ռուսերեն-հայերեն ուսումնական բառարանում» (Երևան, 1993, էջ 101):

¹¹ Տե՛ս Лингвистический энциклопедический словарь, Москва, 1990, էջ 483:

¹² Տե՛ս Վ. Ա. Քոսյան, *Ժամանակակից հայերենի բառակապակցությունները*, Երևան, 1975, էջ 111:

¹³ Հմմտ. А. Г. Назарян, *Фразеология современного французского языка*, Москва, 1987, էջ 70-71:

¹⁴ Հանգամանորեն տե՛ս Դ. Գյուրջինյան, *Հայ առաջնաբաղադրիչով հատվածական բաղադրությունները*, Գիտական հոդվածների ժողովածու (նվիրվում է Գր. Ղափանցյանի ծննդյան 130-ամյակին), «Ասողիկ» հրատ., Երևան, 2017, էջ 57-72, Դ. Գյուրջինյան, *Հայ առաջնաբաղադրիչով հատվածական բաղադրությունների բառարանային մշակումը*, «Ջահուկյանական ընթերցումներ» գիտական հոդվածների ժողովածու, «Ասողիկ» հրատ., Երևան, 2018, էջ 35-45:

¹⁵ Հայերենագիտական աշխատություններում դրանք անվանում են «անվանական կիսահարադրական բարդ բառեր» (տե՛ս Ս. Գ. Աբրահամյան, *Ժամանակակից գրական հայերեն*,

կապակցելիության օրենքների համաձայն) շարահյուսական հարաբերությունների մեջ մտնում և բառակապակցություններ կազմում գոյականների հետ ¹⁶ :
Հատվածականները լրացյալի նկատմամբ միշտ առաջադաս դիրք ունեն:

Հայ առաջնաբաղադրիչ ունեցող հատվածական բաղադրություններով կապակցությունները, որ գործածվում են պաշտոնական, քաղաքական, դիվանագիտական խոսքում, որոշակի գաղափար են տալիս հայերի, Հայաստանի և ուրիշ ժողովուրդների ու պետությունների հարաբերությունների, պատմական և ժամանակակից տարբեր իրողությունների մասին, ուշագրավ տեղեկություններ հաղորդում: Լեզվական նյութը, այսպիսով, դառնում է յուրատեսակ հաղորդիչ, առարկայական աշխարհի, իրականության բացահայտման միջոց:

Հայ առաջնաբաղադրիչով հատվածականների կապակցելիական առանձնահատկությունների մասին խոսելիս հարկավոր է պարզել՝ ա) ո՞ր բառերի հետ է կապակցվում հատվածական տվյալ բաղադրությունը, բ) ո՞ր բառերի հետ են կապակցվում **հայ** առաջնաբաղադրիչով հատվածականներն առհասարակ: Կդիտարկենք ամենահաճախական վեց բաղադրություններով (**հայ-թուրքական, հայ-ռուսական, հայ-վրացական, հայ-ադրբեջանական, հայ-ամերիկյան, հայ-իրանական**) կազմված կապակցությունները՝ հիմք ընդունելով Արևելահայերենի ազգային կորպուսի (ԱՐԵՎԱԿ) ընձեռած նյութը ¹⁷ : Նախ կքննենք բաղադրություններն առանձին, ապա կբացահայտենք ընդհանուր գծերը:

ՀԱՅ-ԹՈՒՐԿԱԿԱՆ: **Հայ-թուրքական** բաղադրությունը գործածության մեջ է մտել 20-րդ դարի սկզբներին, հայոց պատմության բեկումնային, ամենամոայլ ժամանակաշրջանում, ուստի բնական է, որ պատմաքաղաքական գործոնների թելադրանքով շատ ավելի քիչ գործածվում է չեզոք, հազվադեպ նաև դրական ընկալվող միավորների հետ, ինչպես՝ **հաշտեցման հանձնաժողով, հաշտեցում, կապեր, առնչություններ, (գաղտնի, բարձր մակարդակի) բանակցություններ,**

Երևան, 1981, էջ 98), «հարադրության տեսակ պետք է համարել նաև այն բարդությունները, որոնց առաջին բաղադրիչը առանց ածանցի կամ կրճատաբար է գործածվում» (տե՛ս **Ա. Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզու**, Երևան, 1990, էջ 71):

¹⁶ Գոյականի լրացումը ածականով հարցի շուրջ տե՛ս **Վ. Ա. Քոչյան**, նշվ. աշխ., էջ 110-126:

Լրացումների մեծաթիվ օրինակների մեջ, սակայն, հատվածական բաղադրություններ չկան:

¹⁷ Տե՛ս www.eanc.net:

ֆուտբոլային դիվանագիտություն, հնարավոր համագործակցություն, երկխոսություն, քննարկում, հանդիպում, մերձեցում, սահմանակետ և այլն:

Ամենահաճախական լրացյալներն են **հարաբերություններ** և **սահման** բառերը, որոնք ևս չեզոք իմաստ ունեն: Կապակցվող մյուս բառերը (բառաձևերը) և բառակապակցությունները՝ **պատերազմ, հակամարտություն, ռազմաճակատ, կոտորած(ներ), (արյունահեղ) ընդհարում, կռիվ, հակասություն, թշնամանք / թշնամություն, առճակատում, կոնֆլիկտ** և այլն, մեծ մասամբ բացասական իմաստ են արտահայտում: Դրանք արտացոլում են հարևան ժողովուրդների և երկրների պատմության բնորոշ կողմերը, հատկապես վերջին հարյուրամյակի արյունալի իրադարձությունները կամ նրանց արձագանքները:

Մամուլում հանդիպող կապակցություններից մի քանիսը հազվադեպ են (**միջգերատեսչական պայմանագիր, պլատֆորմ**) կամ ոչ տիպական, դիպվածային (**բարեկամություն**):

Երբեմն կապակցությունները հեզնական բնույթ ունեն՝ **ֆիրտ, եղբայրություն**, ինչպես՝ «Այ այսպիսի **հայ-թուրքական** եղբայրություն Տավիանիների ֆիլմում» («Առավոտ», 10.07.2007): **Հայ-թուրքական** բաղադրությունը որոշակի խոսքաշարում միասնության գաղափարի ցուցիչ է, հմմտ. «Արագած լեռան գագաթ էր բարձրացել **հայ-թուրքական** մի արշավախումբ՝ լեռան գագաթին հայկական պետական դրոշի կողքին դնելով թուրքական դրոշը» («Ազգ», 21.04.2007):

Հանդիպում են նաև սխալ կապակցություններ՝ «Երևանում **հայ-թուրքական ֆուտբոլային թիմերը** կմրցեն երկու նախագահների երկրպագությամբ» («Առավոտ», 06.09.2008), «Անդրադառնալով **հայ-թուրքական** քարոզչությանը, նկատեց...» («Առավոտ», 19.09.2008), «Կա՞ն արդյոք տարածաշրջանային հիմնահարցեր, որտեղ **հայ-թուրքական** շահերը համընկնում են» («Առավոտ», 03.01.2008): Այստեղ, բնականաբար, հատվածական բաղադրություն չպիտի գործածվեր, այլ համապատասխան համադասական կապակցություններ՝ **հայկական և թուրքական ֆուտբոլային թիմեր / քարոզչություն** կամ **հայերի և թուրքերի / հայկական և թուրքական կողմերի**:

ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ: Հայ-ռուսական բաղադրիչով կապակցությունները նախորդներից բոլորովին տարբեր են. գերիշխում են բարեկամություն, համագործակցություն և նման հասկացություններ արտահայտող դրական բովանդակությամբ բառերը, կան նաև չեզոք վերաբերմունքի ցուցիչ բառեր: Որպես լրացյալ՝ բաղադրությունը գործածվում է **հարաբերություններ, (տնտեսական, մշակութային, գիտական) կապեր, առնչություններ, (տնտեսական, քաղաքական, ռազմական, միջխորհրդարանական) համագործակցություն, բարեկամություն¹⁸, դաշինք, համալսարան, բաժին, դասարան, միջկառավարական հանձնաժողով, բանակցություններ, համատեղ արտադրություն՝ ձեռնարկություն՝ ընկերություն, զորախմբավորում, զորավարություններ** լրացյալների հետ:

Բոլորովին չկան «կռիվ, պատերազմ», «հակամարտություն» և համանման հասկացություններ արտահայտող բառեր, քանի որ երկու ժողովուրդների բազմադարյա հարաբերությունների պատմությունը բնութագրվում է համագործակցությամբ կամ զինակցությամբ, ընդհարումներ երբևէ չեն եղել:

ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ: Այս բաղադրությունը ևս ամենից շատ կապակցվում է **հարաբերություններ** բառաձևին, որն ստանում է **միջպետական, պետական, քաղաքական, տնտեսական, առևտրատնտեսական, բարիդրացիական, բարեկամական, եղբայրական, եկեղեցական, ազգամիջյան, երկկողմ, բարդ, մշուշոտ, նորմալ, խաղաղ, անխնդիր, պատմական, գրական** լրացումները:

Կապակցությունները տեսանելի արտացոլում են հայ և վրացի հարևան ժողովուրդների ջերմ, բազմաբնույթ, միևնույն ժամանակ նաև բարդ, հակասական և հարափոփոխ հարաբերությունները հատկապես վերջին դարերի ընթացքում:

Բաղադրությանը կապակցվող մնացած միավորներն ըստ բովանդակության կարող ենք բաժանել երկու խմբի:

Առաջին խմբում դրական և չեզոք իմաստ արտահայտող կապակցություններն են՝ **հարաբերություններ, առնչություններ, բանակցություններ, շփումներ, խորհրդակցություններ, համաձայնություն, բարեկամություն, եղբայրություն, միջկառավարական / միջխորհրդարանական**

¹⁸ Հանդիպում է նաև չակերտյալ «բարեկամություն». «Պետք չէ այսօր մարդասեր ձևանալ և շահարկել **հայ-ռուսական «բարեկամությունը»**» («Ազգ», 20.10. 2004):

հանձնաժողով, աշխատանքային խումբ, գործարար համաժողով, հոչակագիր, համատեղ ձեռնարկություն / ընկերություն, պատմամշակութային ընդհանրություններ, բանասիրություն, բաժին և այլն:

Այս տեսակի բառակապակցությունները կարելի է նաև դասակարգել ըստ իմաստային ենթախմբերի: Այսպես.

- **հայ-վրացական միացյալ բանակ / զորքեր / զորաբանակ / զորագունդ / ուժեր / ջոկատներ / էսկադրոն / կայազոր / աշխարհազոր,**
- **միավորյալ թագավորություն / տերություն / պետություն,**
- **ռազմական դաշինք / զինակցություն / (համատեղ) ազատագրական պայքար, ապստամբություն, դաշնակցություն,**
- **սահման, սահմանակետ, սահմանագլուխ,**
- **տնտեսական / գործարար / մշակութային / գիտական / շախմատային համագործակցություն,**
- **գրական / թատերական / մշակութային / առևտրատնտեսական կապեր,**

Երկրորդ խմբում բացասական բովանդակություն ունեցող կապակցություններն են՝ **հայ-վրացական բախումներ, հակամարտություն, առճակատում, պատերազմ, ընդհարում, սահմանային / եկեղեցական վեճ(եր), կռիվներ, անհաշտություն, լարվածություն, վիճահարույց խնդիրներ, հերթական կոնֆլիկտ, տարակարծություն, հակասություն:**

Դրական (և չեզոք) բովանդակություն ունեցող միավորներն անհամեմատ շատ են և հաճախական: Դրանք արտացոլում են հայ-վրացական դարավոր առնչությունների իրական վիճակը:

Բացասական բովանդակություն ունեցող միավորները թե՛ փոքրաթիվ են և թե՛ սակավադեպ: Այսպես, **հայ-վրացական ընդհարում(ներ)** բառակապակցությունը ԱՐԵՎԱԿ-ում հանդիպում է 10 անգամ, **հայ-վրացական բախումներ-ը՝ 4**, իսկ **հայ-վրացական հակամարտություն-ը** և **առճակատում-ը՝ 1**-ական: Համեմատության համար ասենք, որ **հայ-վրացական հարաբերություններ** կապակցությունը գործածվել է 200-ից ավելի համատեքստում, իսկ **հայ-վրացական բարեկամություն-ը՝ 28**:

ՀԱՅ-ԱՂԲԵՋԱՆԱԿԱՆ: Գործածվում է **հակամարտություն / կոնֆլիկտ, հարաբերություններ, սահման, շփման գիծ, բանակցություններ, բախումներ, կռիվներ, ընդհարումներ, պատերազմ, դիմակայություն, առճակատում, հիմնախնդիր, շփումներ, ճակատ, սահմանային գոտի, հաշտեցման հանձնաժողով, հաշտության համաձայնագիր, երկխոսություն, երկաթուղի, թշնամություն, հանդիպում, համատեղ հայտարարություն, լարվածություն / լարում, տարածքային վեճ** և այլ միավորների հետ: Ակնհայտ է, որ կապակցվող միավորները հիմնականում ոչ բարեկամական, թշնամական, ընդգծված բացասական բովանդակություն ունեն, թեև կան նաև չեզոք վերաբերմունք արտահայտող կապակցություններ:

Հայաստանի և Ադրբեջանի հատկապես ներկա հարաբերությունները հիմք են դարձել **հայ-ադրբեջանական և հայ-թուրքական** հատվածականներով կապակցությունների նմանվելուն. մի շարք լրացյալներ նույնական են: Հետաքրքրական է, որ հիշյալ հատվածականները երբեմն գործածվում են միևնույն համատեքստում: Հմմտ. «... **հայ-ադրբեջանական և հայ-թուրքական** հավերժ թշնամության մասին հայտարարություններ են անում» («Առավոտ», 22.07.2004), «**Հայ-թուրքական և հայ-ադրբեջանական** հարաբերությունները այդպես էլ առաջընթաց չեն ունենում» («Հայկական ժամանակ», 24.08.2005):

Հանդիպում են նաև արտասովոր կամ ոչ տիպական կապակցություններ. Ինչպես՝ «Մի պահ ենթադրենք, որ ԼՂ-ն անկախ ու **հայ-ադրբեջանական համատեղ պետություն** է...» («Հայկական ժամանակ», 18.11.2006), «**Հայ-ադրբեջանական միասնական մենթալիտետի** փայլուն օրինակ են նաև Ընտրական օրենսգրքի աղմկոտ քննարկումները» («Առավոտ», 07.06.2003), «**Հայ-ադրբեջանական ոչ պաշտոնական դաշինք** Վրաստանի ներսում» («Հայկական ժամանակ», 17.06.2006):

Խորհրդային շրջանում հարևան հանրապետությունները մեկ պետության մեջ էին, ուստի հազվադեպ, հատկապես անցյալի մասին խոսելիս, հանդիպում են նաև այսպիսի կապակցություններ՝ **հայ-ադրբեջանական (թատերական, գրական) կապեր, առնչություններ**: Ժամանակին մամուլում սովորական էր, թեպետև հաճախ կեղծ, **հայ-ադրբեջանական բարեկամություն** բառակապակցությունը, որի

փոխարեն այժմ գործածվում է առավելաբար **երբեմնի բարեկամություն** կապակցությունը:

Կան նաև ակնհայտ սխալ գործածություններ, ինչպես՝ «Ղարաբաղյան կարգավորման **հայ-ադրբեջանական իշխանությունների** քայլերին ավելացել ու օրեցօր ավելանում են այսպես կոչված հասարակական նոր նախաձեռնությունները» («Ազգ», 10.07.2004): Պետք է լիներ «Հայաստանի և Ադրբեջանի իշխանություններին» կամ թերևս «հայկական և ադրբեջանական իշխանություններին», այլապես միացյալ իշխանություններ են ընկալվում, որ անհեթեթություն է:

ՀԱՅ-ԱՄԵՐԻԿԱՆ: **Հայ-ամերիկյան** հատվածական բաղադրությունը հետաքրքրական է նրանով, որ Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ Հայաստանի առնչությունները ժամանակային նվազ ընդգրկում ունեն, ի տարբերություն նախորդների՝ ԱՄՆ-ը դրացի երկիր չէ, ոչ էլ նույն տարածաշրջանում է, տարբեր է երկու ժողովուրդների և երկրների հարաբերությունների բնույթը: Սա ենթադրում է կապակցվող բառերի համակազմի որոշակի տարբերություն: Բաղադրությունն ավելի հաճախ կապակցվում է **հարաբերություններ, համագործակցություն, համաձայնագիր, պայմանագիր, առողջության կենտրոն, ընկերություն՝ կազմակերպություն՝ ձեռնարկություն՝ արտադրություն, աշխատանքային խումբ, հանձնաժողով, խորհուրդ, կոմիտե, հանդիպում, բանակցություններ, խորհրդակցություն, զորավարություններ, բարեկամություն, ծրագիր, տնտեսական համաժողով, օրակարգ, մշակութային միություն** լրացյալներին: Սրանք ընդգրկում են պետական, հասարակական, քաղաքական, տնտեսական, մասամբ նաև մշակութային կյանքի զանազան ոլորտները, դրական կամ չեզոք բովանդակություն ունեն, բացակայում են բացասական իմաստներ արտահայտող բառերը:

Հանդիպում են նաև սխալ գործածության դեպքեր, ինչպես օրինակ՝ «Հայաստանի զինված ուժերի շտաբի պետն արժանացավ «Պատվո լեգեոն» մեդալի **հայ-ամերիկյան պաշտպանական գերատեսչությունների** միջև կայուն և կառուցողական կապերի հաստատման համար» («Ազգ», 10.11.2004):

ՀԱՅ-ԻՐԱՆԱԿԱՆ: Իբրև լրացում՝ **հայ-իրանական** բաղադրությունը կապակցվում է այնպիսի միավորների հետ, որոնք ցույց են տալիս հասարակական-քաղաքական, տնտեսական, գիտական և մշակութային կյանքի, պետական կառավարման տարբեր բնագավառների հասկացություններ՝ **հարաբերություններ, համագործակցություն, գործակցություն, սահման, սահմանագիծ, սահմանազուլի, սահմանակետ, կապեր, ընդհանրություններ, համաձայնագիր, պայմանագիր, միջկառավարական հանձնաժողով, գործարար համաժողով, էներգետիկ նախագիծ / ծրագիր, գազամուղ / գազատար, բարեկամություն, լեզվական / գրական առնչություններ / փոխազդեցություններ, քննարկումներ, հանդիպումներ, փոխայցեր, ակումբ, հուշագիր, օրակարգ, միացյալ ճակատ, պանթեոն:**

Հետաքրքրական են **հարաբերություններ** լրացյալի որոշիչները՝ **բարեկամական, փոխշահավետ, քաղաքական, դիվանագիտական, տնտեսական, առևտրատնտեսական, էներգետիկ, բազմադարյա, ջերմ, սերտ, բարիդրացիական, մշակութային, գիտամշակութային, համակողմանի:** Թվարկվածներից ոչ մեկը բացասական իմաստ չունի, ընդհակառակը՝ կան շեշտված դրական իմաստ ունեցող բառեր: Բացառություն է 20-րդ դարի 90-ականներին վերաբերող դիպվածային հետևյալ գործածությունը. «Մենք անցած տասնամյակը սկսեցինք շրջափակումով և հայ-վրացական ու **հայ-իրանական մշուշոտ հարաբերություններով....**» («Առավոտ», 02.11.2002):

Ըստ վերջին տասնամյակների հայ մամուլի լեզվական տվյալների՝ **հայ-իրանական** հարաբերությունները գնահատվում են միայն դրական, և դա համապատասխանում է իրականությանը: Այնինչ **հայ-պարսկական** բաղադրությանը կապակցվող բառերի մեջ հանդիպում են **պատերազմ, կռիվներ, ընդհարումներ**, որոնք, սակայն, վերաբերում են պատմական անցյալին (և կրկին ճշմարտորեն արտացոլում են իրականությունը):

Համադրելով վերևում բերված փաստերը՝ պարզենք, թե **հայ** առաջնաբաղադրիչով հատվածականներն ընդհանրապես ո՞ր բառերին ու բառաձևերին են կապակցվում:

Հայ-ով հատվածական որևէ բաղադրություն գործածելիս մեքենաբար, ինչպես ուրիշ դեպքերում, խոսողի կամ գրողի մտքին առաջինը գալիս է **հարաբերություններ** բառածևը, այլ կերպ ասած՝ ինչպես որ ամեն մի քերականական ձև թելադրում է որոշակի կառույց, այնպես էլ «ամեն մի բառ ենթադրում է որոշակի բառերի կապակցելիություն»¹⁹ : **Հարաբերություններ** լրացյալն ստանում է **ազգամիջյան, առևտրատնտեսական, բարդ, բարիդրացիական, բարեկամական, դիվանագիտական, եկեղեցական, եղբայրական, թշնամական, միջպետական, պատմական, ջերմ, տնտեսական, քաղաքական** և նման այլ լրացումներ: Փոխադարձության իմաստի թելադրանքով լրացյալը հաճախ հոգնակի թվով է դրվում՝ **աղերսներ, առնչություններ, բանակցություններ, կապեր, շփումներ, փոխշփումներ**:

Սահմանակից երկրների անունների հիմքով բաղադրված հատվածականներով բառակապակցություններում հաճախական է **սահման-ը (հայ-թուրքական, հայ-իրանական, հայ-ադրբեջանական, հայ-վրացական սահման)**:

Բարեկամ ժողովուրդների անուններից բաղադրված հատվածականների հետ գործածվում են **բարեկամություն կամ եղբայրություն** բառերը (օրինակ՝ **հայ-ռուսական բարեկամություն**), **թշնամիների** և **հակառակորդների** հետ՝ **հակամարտություն, պատերազմ, թշնամանք, ընդհարում, բախում(ներ)** (օրինակ՝ **հայ-ադրբեջանական հակամարտություն, հայ-թուրքական թշնամանք**) և այլն:

Այսպիսով՝ կարող ենք որոշ եզրակացություններ անել:

1. **Հայ** առաջնաբաղադրիչ ունեցող հատվածականներով կապակցությունները հիմնականում ճիշտ գաղափար են տալիս հայերի, Հայաստանի և այլ ազգերի ու պետությունների այժմյան և անցյալի հարաբերությունների մասին:

¹⁹ Տե՛ս Է. Բ. Աղայան, *Հոգելեզվաբանական մի փորձի արդյունքները*, Լրաբեր հասարակական գիտությունների, 1973, հ. 8, էջ 77: Հմմտ. «Լեզվական համակարգը վերածվում է սերող մոդելների համակարգի և խոսքի մեջ այնպիսի մեքենականությամբ է կատարվում խոսքի սերումը, որ ամեն մի հաղորդված խոսք, կարծես, հենց սկզբից ի վեր, պատրաստի վիճակում կար արդեն խոսողի գիտակցության մեջ» (նշվ. աշխ., էջ 76):

2. Հայ առաջնաբաղադրիչով հատվածականները կապակցվում են չեզոք, դրական և բացասական իմաստ արտահայտող բառերի հետ, ինչպես՝ **հարաբերություններ, կապեր, առնչություններ, համագործակցություն, սահման, համաձայնագիր, պայմանագիր, գորագույն...** (չեզոք), **բարեկամություն, եղբայրություն, զինակցություն...** (դրական) և **հակամարտություն, թշնամություն, պատերազմ, ընդհարում, բախում(ներ)...** (բացասական): Գերիշխում են չեզոք և դրական նշանակություն ունեցող լրացյալները:

3. Հայ-ռուսական, հայ-ամերիկյան, հայ-իրանական հատվածականները, որպես կանոն, կապակցվում են դրական կամ չեզոք իմաստ արտահայտող լեզվական միավորների, **հայ-թուրքական-ը** և **հայ-ադրբեջանական-ը**՝ առավելաբար բացասական, **հայ-վրացական-ը**՝ ինչպես դրական և չեզոք, այնպես էլ բացասական նշանակություն ունեցող միավորների: Վերջինս գուցորդելիության առումով ամենից բազմազանն է:

4. Ամենահաճախական հատվածական բաղադրությունները գործածվում են **հարաբերություններ, առնչություններ** և **կապեր** լրացյալների հետ, սահմանակից երկրների առնչությամբ՝ **սահման, բարեկամ ազգերի** և **գործընկեր պետությունների** վերաբերմամբ՝ **բարեկամություն, համագործակցություն, պայմանագիր, համաձայնագիր**, հակառակորդ կամ թշնամի պետությունների դեպքում՝ **հակամարտություն, թշնամանք, պատերազմ** և այլն:

5. Պատմական զարգացումների թելադրանքով կապակցվող միավորների կազմը և բնույթը տարբեր ժամանակաշրջանների առնչությամբ փոփոխվում են: Այդպես է **հայ-վրացական** հատվածական բաղադրությամբ կապակցությունների դեպքում. մի կողմից ունենք **հայ-վրացական ռազմական դաշինք** կամ **եղբայրություն** և **հայ-վրացական պատերազմ** կամ **բախումներ**՝ մյուս կողմից:

6. Հատվածական բաղադրությունների լրացյալները դրվում են ինչպես եզակի (**հայ-իրանական գործընկերություն, հայ-ադրբեջանական հակամարտություն, հայ-վրացական սահմանակետ**), այնպես էլ հոգնակի թվով (**հայ-ռուսական հարաբերություններ, հայ-ամերիկյան կապեր, հայ-թուրքական բանակցություններ**):

ԱՐԵՎՍՏԱՀԱՅ ԽՈՍՎԱԾՔՆԵՐԻ ԼԵԶՎԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ.

ՊԱՐՏԻԶԱԿ

Բարբառագիտության և հայոց լեզվի պատմության կարևոր խնդիրներից է արևմտահայ խոսվածքների համակողմանի ու ամբողջական քննությունը, որը գիտական հետաքրքրություն է ներկայացնում հատկապես նյութի առումով: Բանն այն է, որ Արևմտյան Հայաստանի բազմաթիվ բնակավայրերի խոսվածքներ իրենց կրողների հետ անդարձ կորել են. օրեցօր նվազում են նաև այդ բարբառների մասին տեղեկություններ ստանալու հնարավորությունները: Բարբառախոսների նվազումը, լեզվական միասնական միջավայրի բացակայությունը, ինչպես և արտաքին ազդեցությունները սահմանափակում են խոսվածքների գործառության շրջանակները. դրանք առավելագույնը տարիների կենսունակություն ունեն: Նկատի ունենալով, որ միայն պահպանված միավորների քննությունը կարող է ինչ-որ չափով լրացնել բացը, հողվածում ներկայացրել ենք արևմտահայ խոսվածքներից մեկի՝ Պարտիզակի հնչյունաքերականական համակարգերի նկարագիրը:

Պարտիզակի խոսվածքը գործածվել է Նիկոմեդիայի շրջանի Պարտիզակ քաղաքում: Պարտիզակը Նիկոմեդիայից մոտավորապես 20 կմ հեռավորության վրա էր: Մոտակա գյուղերն էին՝ Սյօլյօզ, Մեծ գյուղ, Արմաշ, Խասկալ: Ըստ «Հայ սփյուռք» հանրագիտարանի՝ Պարտիզակը (այժմ՝ Բախչեջիկ) 16-րդ դարում հիմնադրել են Սեբաստիայի նահանգի Պարտիզակ գյուղից գաղթած հայերը: 20-րդ դարի սկզբին այն ունեցել է մոտ 10000 հայ բնակիչ: Եղել է Կ. Պոլսի հայ մտավորականության ամառանոցը: Բնակչությունը հիմնականում զբաղվել է ծխախոտագործությամբ, շերամապահությամբ, փայտի ու փայտածուխի արտադրությամբ: Գործել են առաքելական, կաթոլիկ և ավետարանական եկեղեցիներ, 8 դպրոց, որոնցից մեկը՝ բարձրագույն: Հրատարակվել են «Փարոս», «Պայքար», «Մեղու» և այլ պարբերականներ: 1915-ին Պարտիզակի հայերը ենթարկվել են տեղահանության և կոտորածի: 1918-ին ջարդից փրկված 3,5 հազար

պարտիզակցի վերահաստատվել է Պարտիզակում, սակայն 1920-ին՝ հույն-թուրքական պատերազմի ժամանակ, կրկին տեղահանվել: Մոտ 50 ընտանիք հայրենադարձվել են [Հայաստան](#), իսկ պարտիզակցիների մի ստվար խումբ վերաբնակվել է [Հայեպոլ](#)²⁰:

Հռոմեացի Պարտիզակի խոսվածքի²¹ լեզվական բնութագիրը տրվում է՝ ըստ Հայերենի բարբառագիտական ատլասի ծրագրով գրանցված «Պարտիզակի խոսվածքը» աշխատանքի ²² : Պարտիզակի խոսվածքը լրացվել է Ներսես Կարապետի Ջաջիկյանի (ծնվ. 1926 թվ.) օգնությամբ Արարատի շրջանի Արմաշ գյուղում 1985 թվ. աշնանը: Այն Հայերենի բարբառագիտական ատլասի (այսուհետ՝ ՀԲԱ) ծրագրով գրանցել է բարբառագետ Դարիկո Կոստանդյանը: Ըստ նրա վկայության՝ Ներսես Ջաջիկյանը Պարտիզակի բարբառը լսել և սովորել է պարտիզակցի ծնողներից, որոնք Պարտիզակից տեղափոխվել են Պոլիս, իսկ 1926 թվ.՝ Հայաստան: Դարիկո Կոստանդյանը նաև փաստում է, որ Ներսես Ջաջիկյանը, որը հրաշալի կերպով յուրացրել էր Պարտիզակի խոսվածքը, մեծ սիրով ու եռանդով է հաղորդել այն: Բարբառի գրանցմանը օժանդակել է նաև նրա կինը՝ Սաթենիկ Ջաջիկյանը, որը, երկար տարիներ ապրելով սկեսուրի հետ, սովորել էր նրա բարբառը²³:

Պարտիզակի խոսվածքը, ըստ միահատկանիշ ձևաբանական դասակարգման, պատկանում է Կը ճյուղին, ըստ վիճակագրական-բազմահատկանիշ դասակարգման՝ Փոքր Ասիայի կամ արևմտյան բարբառախմբի Պոլսի միջբարբառին²⁴:

Հինհայերենյան ձայնավորները՝ *ա, ի, է, օ, ու, ը*, գործառնելով Պարտիզակի խոսվածքում, որակական փոփոխությունների չեն ենթարկվել: Ա ձայնավորը հանդիպում է տարբեր դիրքերում՝ հինհայերենյան *բ, գ, դ, ձ, ջ* ձայնեղ հնչյուններին

²⁰ Հայ սփյուռք, 2003, էջ 182:

²¹ Պարտիզակի խոսվածքի վերաբերյալ բարբառագիտական գրականության մեջ կան մասնակի դիտարկումներ (տե՛ս **Հ. Աճառյան**, *Հայոց լեզվի պատմություն*, մաս 2, Երևան, 1950, էջ 352-353, **Գ. Ջահուկյան**, *Հայ բարբառագիտության ներածություն*, Երևան, 1972, էջ 52, 71, 83, 109):

²² Տե՛ս *Հայերենի բարբառագիտական ատլասի նյութեր* (այսուհետ՝ ՀԲԱՆ), Պարտիզակի խոսվածք, հ. 284:

²³ Տե՛ս *Հայերենի բարբառագիտական ատլասի նյութեր* /այսուհետ՝ ՀԲԱՆ/, Պարտիզակի խոսվածք, հ. 284:

²⁴ Տե՛ս **Գ. Ջահուկյան**, *Հայ բարբառագիտության ներածություն*, Երևան, 1972, էջ 133:

կամ դրանցից առաջացած խուլերին հաջորդող(*բարձ-պարց, բարակ-պարակ, բան-պան, դաս-տաս, դանակ-տանակ, ձագ-ծաք*), *մ*, *ն* ռնգայիններին նախորդող (*ամիս-ամիս, ամպ-ամբ, թան-թան, համար-համար, մանել-մանել, քամել-քամել, նշան-նիշան* և այլն), ինչպես նաև շչականներին նախորդող և հաջորդող դիրքերում (*ճանճ-ջանջ, բաժին-պաժին, խաչակնքել-խաչ հանել, խարշել-խաշել, արժել-արժել, կարճ-գարջ* և այլն: *Ու-ն* և *ի-ն* փոփոխության չեն ենթարկվել ինչպես շեշտակիր դիրքում (*թունդ-թունդ, փուշ-փուշ, սուտ-սուտ, կնիկ-կրնիկ, կծիկ-գրձիկ, քենի-քենի* և այլն), այնպես էլ ձայնեղներից կամ դրանցից առաջացած խուլերից հետո (*բութ-բութ, գութան-գութան, տուն-դուն, դուռ-դուռ, ձուկ-ձուկ, ջուր-ճուր* և այլն):

Ո և *ե* տառերը խոսվածքում չեն գործառում: *Ո-ի փոխարեն* միավանկ և երկվանկ բառերի *սկզբում* (*որբ-օրփ, որդ-օրթ, ով-վօվ, ոչխար-օշխար, ոջիլ-օշիլ, որդնել-օրթօղել, որսալ-օրսալ, ոռնալ-օռնալ, ոսկի-օսկի* և այլն), հինհայերենյան ձայնեղներին (*բ, գ, դ, ձ, ջ*) կամ դրանցից առաջացած խուլերին հաջորդող (*բողկ-փողգ, գործ-քորձ, ձոր-ծօր* և այլն), ինչպես նաև բառամիջի շեշտակիր և նախաշեշտ դիրքերում (*թոք-թօք, լողալ-լօկնալ, կոշտ-կօշտ, մոմ-մօմ, խոնարհ-խօնար* և այլն) գործածվում է *օ-ն*: Խոսվածքում չգործառող *ե-ի* դիմաց միավանկ և երկվանկ բառերի *սկզբում* (*ելանել-էլլալ, երես-երէս, երևալ-երէվնալ, երկար-երգան են*), բառամիջի շեշտակիր (*խելք-խէլք, ցեց-ցէց, ավել-ավէլ, ավեր-ավէր են*), ինչպես նաև *ռ* ձայնորդին նախորդող *դիրքերում* (*մեռնել-մէռնէլ, սիսեռն-սիսէռ, մեռոն-մէռուն են*) առկա է է ձայնավորը:

Պարտիզակի խոսվածքում հինհայերենյան երկբարբառները վերածվել են ձայնավորների: Այսպես՝ շեշտակիր *այ* երկբարբառի դիմաց գործածվում է *ա* ձայնավոր (*այդ-ադ, լայն-լան, ծայր-ծար, ձայն-ձան, մայր-մար* և այլն), *ա* երկբարբառի փոխարեն բոլոր դիրքերում գործածվում է *օ* հնչյուն (*աւր-օր, աւձ-օց, աւծել-օծէլ, աւրհնել-օրշնէլ, տաւն-տօն, էաւթն-յօթ* և այլն), *ոյ* և *իւ* երկբարբառների դիմաց՝ *ու* ձայնավոր, այսպես՝ *բոյն-բուն, թոյլ-թուլ, բոյթ-բութ, ոյժ-ուժ* և *ալիւր-ալուր, աղբիւր-ախպուր, հարիւր-հարուր, հիւսել-հուսէլ, նեղութիւն-նէղութին* և այլն:

Պարտիզակի խոսվածքում ձայնեղ պայթականների և կիսաշփականների (բ, գ, դ, ձ) *դիմաց առկա հնչյունները, ըստ* խոսվածքը գրանցողի՝ Դ. Կոստանդյանի, ոչ հստակ ձայնեղ են, ոչ էլ հստակ խուլ²⁵: Արտաբերական հստակություն չունեն նաև խուլ պայթական և պայթաշփական բաղաձայնները. դրանք, պայմանավորված հնչյունական շղթայում նրանց նախորդող հնչյունի բնույթով (խուլից հետո՝ խուլ, ձայնավոր, ձայնեղ և ձայնորդ հնչյուններից հետո՝ ձայնեղ) մերթ ձայնեղ (բ,գ,դ, ձ, ջ), մերթ խուլ (պ, կ, տ, ծ, ճ) հնչյուններ են արտաբերվում: Այս մասին փաստում է Դ. Կոստանդյանը. «Նույն երևույթն է առկա նաև հինհայերենյան խուլ պայթական և կիսաշփական հնչյունների դիմաց լսվող բաղաձայններում, որոնց գրանցման համար դարձյալ կիրառել ենք վերոնշյալ սկզբունքը՝ դ/տուն, ձ/ծունգ և այլն»²⁶: Շարունակելով իր միտքը՝ Դ. Կոստանդյանը վկայում է, որ խոսվածքում այնքան ազատ է խուլ և ձայնեղ պայթականների և կիսաշփականների ազատ փոխանցումը, որ վերջինս գործում է նույնիսկ միջձայնավորային և բառավերջի դիրքերում՝ ածել/աձել, ակիշ/ագիշ, պատ/բադ և այլն²⁷:

Հինհայերենյան *խ և հ* խուլ հնչյուններին բառի բոլոր դիրքերում համապատասխանում է խուլ *խ և հ*, օրինակ՝ *խրատ-խրրադ, ծախել-ձախել, նախիր-նախիր, գլուխ-գըլօխ, մուխ-մուխ հազ-հազ, հալել-հալել, հինել-հինել, ռեհան-ռքհան* ևն: Պայթական և կիսաշփական հնչյուններին նախորդող *ը* ձայնորդը ևս մնում է անփոփոխ, այսպես՝ *արծաթ-արձաթ, գորտ-գօրդ, զարթուն-արթուն* ևն: Բառամիջի և բառավերջի դիրքերում *գործառող ո* ձայնորդը նույնպես փոփոխություն չի կրում, օրինակ՝ *ախոռ-ախօռ, կռունկ-կըռունկ, վառել-վառել, փռել-փըռել* և այլն: Փոփոխության չեն ենթարկվում նաև օտար բառերի բառասկզբի *ջ* և *ղ* հնչյուններ, այսպես՝ *ջինջան-ջիլջան, լլան-լըլան, դարիբ-դարիբ* ևն:

ՀՖԱ-ի ծրագրով տրված հասկացական-բառանվանողական զուգաբանություններին Պարտիզակի խոսվածքում համապատասխանում են հնչյունական տարբերակներ և բառային տարբեր արտահայտություն ունեցող ձևեր: Ստորև ներկայացնում ենք հասկացական-բառանվանողական այն

²⁵ Տե՛ս ՀՖԱՆ, Պարտիզակ, 284:

²⁶ Նույն տեղում:

²⁷ Նույն տեղում:

զուգաբանությունները, որոնց իմաստը Պարտիզակի խոսվածքում դրսևորվում է բառային այլ արտահայտությամբ: Դրանք են՝ *զագաթ-թէփէ, անտառ-մէշէ, քամի-հով /զովություն/, ֆըրթընա /ուժեղ քամի/, ծիածան-ձիրան գողի, ցող-շաղ, կաթիլ-պուտ, սառույց-բուզ, ստվեր-շուք, կողմ-թին/թարաֆ, գիծ-խազ, առաստաղ-առիք, զուգարան-պէտքարան, ջրհորդան-օլուխ, եկեղեցի-ժամ, ցեխ-չամուռ, աթար-թըրիք, արմատ-քոք, տերև-յափրախ, կեղև-ղաբուխ, կորիզ-գուդ, սերմ-հունդ, եգիպտացորեն-միսիր, լոբի-ֆասուլյա, դեղձ-շըֆթըլու, կաղին-ֆորնդըխ, նուշ-պաղէմ, բարդի-ղավախ, սաճիլ-ֆիդան, զագար-հավուջ, դանդուռ-փըրփըրէմ, հասկ-սափ, կողով-սէքէթ, փոցխ-տըմըրըխ, եղան-դիյրէն, հէսան-սըրաքար, մեխ-զամ, ակիշ-տաշտըքէր, թթխմոր-մայա, խցան-մանթար, ձագար-հունի, շյուղ-շիշ, պարան-չուվան, կապերտ-չուլ, անկողին-յաթախ, համրիչ-թըզբէհ, օձիք-յախա, քղանցք-փէշ, տրեխ-չարուխ, տրեխի քուղ-սըրիմ, ճոճ-սալընջախ, բարուր-դօնդախ, օժիտ-ճըհէզ, նոր տարի-կաղանդ, ծննդկան-լօղուսա//տըղացկան, երեխա-չօջուխ, տատ-մէնձ մար, տերտերակին-իրիսկին, քահանա-տէրտէր, անորորդի-անէրծաք, ամուսին-էրիկ, մորեղբայր-տայտայ//տայի, տագերկին-ներ, ծերունի-էխտիյար, արու զավակ-մանչ, հարևան-դըրացի, ջրաքաշխ-ջիվար, որսորդ-ավյի, հովիվ-չօբան, անասուն-հայվան, կրիա-թօսպաշի, չղջիկ-քիշէրամուզ, մողես-խլէզ, սարդ-մամուզ, բոռ-մօզ, թռչուն-դուշ, հնդկահավ-ձօքձօք, հոպուպ-իբիբիզ, աքաղաղ-խօրօզ, թուխս-կուռթ, ձու-հավգիթ, խայթոց-փուշ, աստամն-ագոռ, բուռ-ավուջ, բռունցք-յումըրուխ, ազդը-բալդըր, պարանոց-ճիտ, կոկորդ-բօղազ, մեջք-կըռնազ, եղջյուր-կօտօշ, թևատակ-դօլթուխ, շրթունք-պըռդը, արտևանունք-թարթիչ, միզապարկ-փուշիկ, պզուկ-պուշտ, վերք-յարա, քարխեշ-նասըր, հարբուխ-նավագիլ, թույն-զէհիր, հում կաթի սեր-դայմախ, ճարպ-ճըրաքու, դոշաբ-բէքմէզ, ձավար-բուլդուր, ճոճանակ-սալընջախ, տիկնիկ-պէքէք, ճան-վէք, համբույր-պաք, ապտակ-շամառ, երկյուղ-վախ, ոխ-քէն, ժամանակ-ատէն, գեղեցիկ-աղվօր, լավ-աղէզ, մեծ-խօջաման, գեր-շիշման, նվազ-զախֆ, նիհար-զայիֆ, դառն-լէղի, ամուր-բինդ, բուր-քօռ, սպիտկա-ճերմակ, շեկ-սարը, փոքրիկ-բըզդիզ, թանկ-սուղ, կաղ-թօփալ, կորամեջք-ղամբուռ, համր-լալ, խուլ-սաղըր, պեպնոտ-պէնգօտ, ծաղկատար-չօփուռ, փափուկ-կագօղ, մաքուր-էթմիզ, ժլատ-կըծծի, մերկ-չըլբախ,*

սառն-բաղ, խոնավ-թավ, կիսրար-օրթախ, թխել-էփել, աշխատել-բանել, քանդել-քազել, մտցնել-խօթել, պլոկել-փըրցընել, կեզնել-մաքրել, խուտուտ տալ-ղըղիզ տալ, մեխել-գամել, հավաքել-ժողվել, հանգցնել-մարել, պարզաջրել-ցողվել, փակել-կօցել, ավարտվել-լըմըննալ, սառչել-բաղել, հանդիպել-ըռաստ կալ, հայտնել-խաբար տալ, կոպտել-չէխել, փափկել-կազօղնալ, սպիտակել-ջերմըզնալ, թիկնել-կըռթըննալ, առողջանալ-աղէկնալ, ամուսնանալ-կարքըվել, նվազել-չալել, համբուրել-պաքնել, զբոսնել-բըղըղէլ, փաթաթել-բըլլել, հարվածել-զարնել, ցրել-տարդըղնել, բարկանալ-հէրսօղել, զգվել-գանել, այժմ-հիմա, ճիշտ-շիտակ, դարձյալ-նօրէն, իզուր-պարապ, կարծես-կիդէս քի, ինչպես-ընդօր, ներքն-վար, այնուհետեւ-ատըէ յէտ, փոխարէն-էվէզ, բացի-գատ, ափսոս-մէխք:

Պարտիզակի խոսվածքում գործառող –էր (էր) և -ներ (ներ) հոգնակերտների գուգորդելիությունը թվանիշ հիմքերին պայմանավորված է դրանց ձևաիմաստային առանձնահատկություններով: -էր (էր) վերջավորությունը բաղադրվում է միավանկ բառերին (փաղ-փաղէր, միս-միսէր, բարց-բարցէր, թէվ-թէվէր են), կենդանիների՝ միավանկ հիմքով անուններին (ուլ-ուլէր, էզ-էզնէր, էշ-էշէր են), գրաբարյան -ն վերջնահնչյունով միավանկ բառերին, որոնց գերակշիռ մասը հատկանշվում է հոգնակերտից առաջ ն վերջնահնչյունի անկմամբ (տուտ «դուռն»-տուտէր, ձունգ-ձունգէր, պէռ «բէռն»-պէռէր, կառ «գառն»-կառէր, մուգ-մուգէր, նուռ-նուռէր են), գաղտնավանկ վերջնավանկով երկվանկ բառերին, այսպես՝ ասիս «աստղ»-ասիսէր, սայր-սայրէր, մանր-մանրէր են, ինչպես նաև միավանկ վերջնաբաղադրիչով այն բարդ բառերին, որոնց վերջնաբաղադրիչը պահպանում է իր իմաստային ինքնուրույնությունը, այսպես՝ տանդէր-«տանտեր»-տանդէրէր, հօրքուր «հորաքույր»-հօրաքուրէր, աղճուր «աղաջուր»-աղճուրէր, զընքամար-«կնքամայր»-զընքամարէր են: -Ներ (ներ) հոգնակերտ վերջավորությունը բաղադրվում է բազմավանկ բառերին, այսպես՝ ընգէր «ընկէր»-ընգէրնէր, իլիկ «իլիկ»-իլիկնէր, խընձօր «խնձոր»-խընձօրնէր, ձաղիկ «ծաղիկ»-ծաղիկնէր են:

Պարտիզակի խոսվածքը հատկանշվում է հոլովանիշ վերջավորությունների և հերթագայությունների առկայությամբ, ինչպես նաև եզակի թվի հարացույցում ի հոլովանիշ թեքույթի, իսկ հոգնակիում՝ ու հոլովանիշի ընդհանրական արժեքով: Բ

հոլովանիշ վերջավորությունը գործածվում է գրաբարյան *ն* վերջնահնչյունով (*տուռ* «դուռն»-*տուռի(ն)*, *ձունգ* «ձունկն»-*ձունգի(ն)*, *ծուգ* «ծուկն»-*ծուգի(ն)*, *մաղ-մաղի(ն)*, *օտք* «ոտք»-*օտքի(ն)* և *ք* հոգնակերտով բառերի (*փառք-փառքի(ն)*, *միտք-մըտքի(ն)*, *հարսնիք-հարսնիքի(ն)* ևն), ինչպես նաև, կենդանիների և թռչունների անունների (*կաքավ-կաքավի(ն)*, *կատու-կատուի(ն)*, *հավ-հավի(ն)*, *աղվես-աղվեսի(ն)* ևն) եզակի թվի հարացույցում՝ կազմելով նրանց սեռական-տրական հոլովաձևը: Անձնանունները (*Դիքրան-Դիքրանի(ն)*, *Անուշ-Անուշի(ն)*, *Ներսես-Ներսեսի(ն)* ևն) և տեղանունները (*Պարտիզակ-Պարտիզակի, Ադափագար-Ադափագարի, Արմաշ-Արմաշի* ևն) նույնպես այս հոլովման են ենթարկվում: Հոլովանիշ հիմքի և -ոջ թեքույթի համադրությամբ են բաղադրվում ազգակցական հարաբերություն ցույց տվող բառերի սեռական հոլովաձևերը, օրինակ՝ *քուր* «քույր»-*քրոջ, տէր-տէրոջ, դաքըր* «տեգր»-*դաքըրոջ, կեսուր* «սկեսուր»-*կեսրոջ, դալ* «տալ»-*դալոջ, ընգեր-ընգերոջ* ևն: Ժամանականիշ բառերի սեռական հոլովաձևերը կազմվում են *-վան* հոլովական վերջավորությամբ, այսպես՝ *առդուն* «առավոտ»-*առդվան, քիշեր* «գիշեր»-*քիշերվան, իրգուն* «երեկո»-*իրգըվան, գեսոր* «կեսոր»-*գեսորվան, օր-օրվան* ևն: Բացառական հոլովը ձևավորվում է *-էն* հոլովանիշ թեքույթի և հոլովանիշ հիմքի զուգորդելիությամբ, այսպես՝ *աղվեսէն* «աղվեսից»-*աղվեսներէն, թռչէն* «թռից»-*թռչերէն, լերէն* «լեռից»-*լերներէն, գեղէն* <<*գետից*>>-*գեղերէն* ևն: Գործիական հոլովի իմաստը արտահայտվում է *-ով* հոլովանիշ վերջավորությամբ բաղադրված կազմություններով, այսպես՝ *բերանով-բերաններով, ամսով* «ամսով»-*ամսըներով, քարով-քարերով, լեզվով-լեզուներով* ևն: Ներգոյական հոլովի իմաստը դրսևորվում է ուղղականաձև հայցականով /գեղը, աշխարը, գեղը ևն/ կամ *մէջ* հետադրության և տրական հոլովաձևի բաղադրությամբ (*խօղին մէջը, ճուրին մէջը, տաշտին մէջը, աշխարին մէջը, փօրին մէջը* ևն): Հոգնակի թվաձևերի սեռական հոլովաձևերը կազմվում են *ու* հոլովական վերջավորությամբ, այսպես՝ *գօվեր* «կովեր»-*գօվերուն, շուներ* «շներ»-*շուներու/ն/, ճուրեր* «ջրեր»-*ճուրերու/ն/, դուներ* «տներ»-*դուներուն, քաղաքներ-քաղաքներուն* ևն:

Ես, դու, մենք, դուք անձնական դերանունների տրական հոլովը կազմվում է գրաբարյան հոլովաձևերի (ինձ, մեզ, քեզ, ձեզ) հնչյունական տարբերակների և *ի*

հոլովանիշ թեքույթի զուգորդությամբ, այսպես՝ *ընծի, քեզի, մեզի, ձեզի*²⁸։ Հայցական հոլովը տրականաձև է (*զըսիրէ ընծի, քեզի, մեզի, ձեզի*)։ Անձնական դերանունների բացառական հոլովաձևը կազմվում է տրականի հիմքի և *-մէ* հոլովանիշ թեքույթի (*ինծիմէ, քեզմէ, մեզմէ, ձեզմէ, իրենմէ, իրենցմէ*), իսկ գործիականը՝ տրականի հիմքի և *-մով* վերջավորության համադրությամբ (*ինզմով, քեզմով, մեզմով, ձեզմով, իրենմով, իրենցմով*)²⁹։

Գրաբարյան 4 լծորդություններից (ա, ի, ե, ու) Պարտիզակի խոսվածքում պահպանվել են 2-ը՝ *ա, է*, օրինակ՝ *կիտնալ, վըլալ, դէսնալ, առնէլ, խըմէլ, դընէլ* ևն։ Խոսվածքում բացակայում են անկատար և ապառնի դերբայները։ Վաղակատար դերբային բնորոշ է *-էր* վերջամասնիկը՝ *մընացէր իմ, զարմացէր իմ* ևն, հարակատարին՝ *-աձ*, այսպես՝ *էփաձ, նըշանվաձ, զարմացաձ* ևն։ Ա խոնարհման բայերի ենթակայական դերբայը բաղադրվում է անցյալի հիմքով, օրինակ՝ *կօղցօղ, զարմացօղ, մօտէցօղ, հասկըցօղ, վախցօղ* ևն։ Ժխտական դերբայը իմաստը արտահայտվում է անորոշի հիմքի և *-էր, -ար, -իր* թվադիմանիշ թեքույթների զուգորդությամբ՝ (*չիմ*) *ըսէր, (չիմ) մընար, (չիմ) խօսիր* ևն։

Պարտիզակի խոսվածքում եղանակային իմաստները դրսևորվում են 4 կառուցատիպերով, որոնց բովանդակության պլանում համապատասխանում է եղանակային 5 իմաստ՝ սահմանական-ենթադրական, հարկադրական, ըղձական և հրամայական։ Խոսվածքում ըղձական եղանակի ժամանակաձևերի իմաստով գործածվում են գրաբարյան ներկա և անցյալ անկատար բայաձևերը, որոնք, կրելով միայն հնչյունական փոփոխություններ, ձևային տարբերակվածությամբ չեն հատկանշվում, այսպես՝ *կըրէի, կըրէիր, կըրէր, կըրէինք, կըրէիք, կըրէին*։ Իմաստային տարբերակվածություն են դրսևորում *կու* (*զը/զ*) և *պիտի* (*տը/տ*) եղանականիշ մասնիկներով կազմությունները։ Հրամայական եղանակի եզակի թվի իմաստը արտահայտվում է *է, ա, իր* վերջավորություններով բաղադրված կազմություններով։ *Է* վերջավորություն են ստանում *է* խոնարհման պարզ բայերը, այսպես՝ *զըրէ, զարէ, պաղմէ, սիրէ, նըսդէ, փօխէ, քամէ* ևն, *-ա* վերջավորություն՝ *ա*

²⁸ Տե՛ս նույն տեղը։

²⁹ Տե՛ս նույն տեղը։

խոնարհման պարզ բայերը, օրինակ՝ *մընա՛, խընդա՛, կարթա՛, հավադա՛* նն: Եւ ա խոնարհման ածանցավոր բայերի հրամայականի ձևերը կազմվում են *-իր* վերջավորությամբ, այսպես՝ *էլի՛ր, իճի՛ր, իմացի՛ր, հասկըցի՛ր*, և այլն: Ա խոնարհման ածանցավոր բայերը *-իր* վերջավորությունը հավելում են անցյալի ցոյական հիմքին, այսպես՝ *մէծցի՛ր, մօղեցի՛ր* նն, իսկ *ե* խոնարհման բայերը՝ ներկայի հիմքին՝ *հասի՛ր, մըղի՛ր*: Հրամայականի հոգնակի թվի ձևերը բաղադրվում են *-էք* վերջավորությամբ, որը համադրվում է անցյալի ցոյական հիմքին, այսպես՝ *մաղեցէ՛ք, բաղմեցէ՛ք և պարսըցէ՛ք, իմացէ՛ք, վըլացէ՛ք* նն: Կու եղանականիշով բաղադրված կառույցները արտահայտում են ենթադրական ապառնիի և անցյալի ապառնիի, սահմանական ներկայի և անցյալ անկատարի իմաստներ (*կըկըրէմ Տգրում եմ, կըկըրէս, կըկըրէ, կըկըրէնք, կըկըրէք, կըկըրէն, գուղիմ Տուտում եմ, գուղէս, գուղէ, գուղինք, գուղիք, գուղին, կըսէյի, կըսէյիր, կըսէր, կըսէյինք, կըսէյիք, կըսէյին*), իսկ *պիտի*-ով կազմությունները՝ սահմանական և հարկադրական ապառնիների (*պիղի ուղիմ, պիղի ուղիս, պիղի ուղէ, պիղի ուղինք, պիղի ուղէք, պիղի ուղին*) և անցյալի ապառնիի (*պիղի ուղէյի, պիղի ուղէյիր, պիղի ուղէր, պիղի ուղէյինք, պիղի ուղէյիք, պիղի ուղէյին*): Պարտիզակի խոսվածքում տարբերակվում են ընդհանրական և շարունակական ներկաները: Շարունակականի իմաստը դրսևորվում է ընդհանրական ներկայի ձևերի և **օր** բառ-մասնիկի գուգորդություններով, այսպես՝ *կուղիմ օր, կուղէս օր, կուղէ օր, կուղինք օր, կուղէք օր, կուղին օր*: Անցյալ կատարյալի իմաստը արտահայտվում է պարզ ժամանակաձևներով՝ *խըմեցի, խըմեցիր, խըմեց, խըմեցինք, խըմեցիք, խըմեցին*:

Ժխտական խոնարհման կառուցատիպերը ձևավորվում են նախամասնիկների գուգորդությամբ: Եղանականիշ նախամասնիկ չունեցող ժամանակաձևերի (դերբայակազմ ժամանակաձևեր, անցյալ կատարյալ, ըդձական (անցյալ-ապառնի) ժխտական կազմությունները ձևավորվում են չ ժխտական մասնիկով, որը համադրվում է հաստատական խոնարհման ձևերին, այսպես՝ անց. կատ.՝ *չըգըրէցի, չըգըրէցիր, չըգըրէց, չըգըրէցինք, չըգըրէցիք, չըգըրէցին, ըդձ. ապառնի՝ չըխըմիմ, չըխըմէս, չըխըմէ, չըխըմինք, չըխըմէք, չըխըմին*: Կը (կ) եղանականիշ մասնիկ ունեցող կազմությունների ժխտական ձևերը բաղադրվում են

ժխտական դերբայի (կամ նրա փոփոխականների) և օժանդակ բայի ժխտական ձևերի հարադրությամբ, այսպես՝ *չեմ սիրեր, չես սիրեր, չըսիրեր, չենք սիրեր, չեք սիրեր, չեն սիրեր*: Պիտի եղանականիշով բաղադրված կազմությունների ժխտական խոնարհման ձևերում *չ /չի/* մասնիկը նախորդում է եղանականիշին, այսպես՝ *չի բիդի խըմիմ «չպիտի խմես», չի բիդի խըմես, չի բիդի խըմե, չի բիդի խըմինք, չի բիդի խըմեք, չի բիդի խըմեն*: Արգելական հրամայականի իմաստը արտահայտվում է *մի /մը/* արգելական մասնիկի նախադաս կիրառությամբ, այսպես՝ *մը՝ խաղար, մը՝ էրթար, մը՝ գարթար, մը՝ խօսիր* ևն:

Պարտիզակի խոսվածքը հատկանշվում է *մը* անորոշ հոդի հետադաս գործածությամբ, այսպես՝ *Մարթ մը, գընիգ մը գըլլան* «Մի մարդ ու մի կին են եղել»: *Օր մը աս մարթը կըհիվանտանա* «Մի օր այս մարդը հիվանդանում է»: Խոսվածքում որոշյալությունը դրսևորվում է *ը* և *ն* որոշիչ հոդերով (*Ձառը ձաղգեցալ «Ծառը ծաղկեց»: Էնօր քեչին սաղգեցալ «Նրա այծը սատկեց»*): Ն որոշիչ հոդը գործառում է ձայնավորահանգ բառերի դեպքում: Հատկացուցիչի և հատկացյալի համաձայնությունը արտահայտվում է համանիշ կառույցների գործածությամբ՝ որոշյալ հատկացյալի հետ որոշյալ հատկացուցիչ (*ծառին յափրախը «տերև», արդին խօղը, Մարթիսին դըղան*) և որոշյալ հատկացյալի հետ անորոշ հատկացուցիչ (*ծառի յափրախը, արդի խօղը, Մարթիսին դըղա*): Ենթակայի և ուղիղ խնդրի շարադասությունը ազատ է: Ուղիղ խնդիրը գործածվում է ստորոգյալին նախադաս դիրքով (*Կադուն մուգ բըռնեց, Քեռին խօտ կըքաղէ*): Անձի անունների դեպքում ուղիղ խնդիրը տրականաձև կամ ուղղականաձև հայցականով է ձևավորվում (*Մարը կըսիրե Անուշը//Անուշին «Մայրը սիրում է Անուշին», իսկ իրի անունների դեպքում՝ ուղղականով (Ագօփը դուն գըշընէ «Հակոբը տուն է շինում»: Հօղը բադին դագը լեցու՛ր «Հողը պատի տակ լցու՛»)։ Տրականաձև հայցականով է դրվում անորոշ դերբայով արտահայտված նպատակի պարագան, այսպես՝ *Գացինք խընձօր հավաքելու «Գնացինք՝ խնձոր հավաքելու», Գընաց արդը ճըրելու «Գնացին՝ արտը ջրելու*: Տեղի պարագայի իմաստը դրսևորվում է վերլուծական (*մէչ կապ+սեռական հոլովաձև՝ Ամանին մէչը ճուր չիքա «Ամանի մեջ ջուր չկա», Տաշտին մէչը հաց չիքա «Տաշտում հաց չկա»*) և համադրական*

(հայցական հոլովաձև՝ *Էքին կըպանին «Այգում աշխատում են», Գէղը կաբրի «Գյուղում կապրի»*) կառույցներով: *Խոսվածքը հատկանշվում է հետ, մոտ, մեջ, վրա, առջև* կապերի հետադաս կիրառությամբ, այսպես՝ *քարին քովը* «քարի մոտ», *ախպօրը քովը* «եղբոր մոտ», *ընգերներուն հեղ* «ընկերների հետ», *դունին առչելը «տան առաջ», ճամփուն վըրա* «ճանապարհի վրա», *ճուրին մէջը* «ջրի մեջ» են:

Այսպիսով, Պարտիզակի խոսվածքը բնութագրվում է հնչյունաքերականական ու բառապաշարային զուգաձևությունների առատությամբ և ներկայանում է որպես բարբառային հայերենի ինքնատիպ մի դրսևորում: Աշխատանքը կարևորվում է արևմտահայ տարածքի կորստյան վտանգի առջև կանգնած բարբառային միավորի պահպանված վիճակի ամրագրմամբ և բարբառային նյութը անդառնալի կորստից փրկելու փաստով:

The speech of Partizak is characterized by the abundance of pairs phonetical grammar character and vocabulary couples, and is presented as a unique manifestation of Armenian dialectic. The work is important for the preservation of the preserved state of the dialectic unit facing the loss of the Western Armenian territory and the fact that the dialectic material is saved from irreversible loss.

Հովհաննես Զաքարյան (Հայաստան, «Տաթև» ԳԿՀ)

ՕՏԱՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԴՐՈՍՈՒՄՆԵՐ

Որևէ լեզվում հայտնված օտարաբանությունները հետևանք են լեզվական շփումների և լեզվաքաղաքական ազդեցությունների ու ճնշումների՝ ընդհուպ մինչև վարչական պարտադրանքը: Այդ ազդեցություններն ու ճնշումները արտացոլվում են հանրային մակարդակում որպես գրական ու խոսակցական լեզուների համօրինակներ (ստանդարտներ), իսկ անհատական մակարդակում՝ որպես տուրքնորաձևությանը կամ ավանդույթին: Բնականաբար առաջանում են օտարաբանությունների նկատմամբ գիտակցական ու ենթագիտակցական վերաբերմունք, գիտական, քաղաքական ու հոգեբանական տարաբնույթ ընկալումներ, վերջիններիս բախումներ ու պայքար: Այդ ընկալումները ճիշտ հասկանալու և գնահատելու համար անհրաժեշտ է պարզել օտարաբանությունների գործածության անձնական (սուբյեկտիվ) դրդապատճառները: Դրանք շատ են ու տարաբնույթ, բայց և փոխկապակցված ու իրար լրացնող, միմյանց հատող ու խաչաձևվող, մեկը մյուսին պատճառաբանող կամ մեկը մյուսից բխող: Քննարկենք դրանցից մի քանի կարևորները:

1. Խոսքի ոչ անկեղծությունը

Երբ կարիք կա ասելիքի ինչ-որ կարևոր նրբերանգ թաքցնելու, քողարկելու, անհստակ արտահայտելու, ապա «օգնության» են գալիս օտարաբանությունները՝ հաճախ վերածվելով բառ-ծածկագրերի: Ինչպես հայտնի է, նենգ, դավադիր խոսքը կա՛մ գաղտնագրվում է, կա՛մ արտահայտվում կողմնակի լսողին անհասկանալի օտար լեզվով կամ ծածկալեզվով: Մասամբ նույն դերը կատարում են օտարաբանությունները՝ այլ լեզուներից փոխառված բառերը:

Ասում են՝ խոսքը ոչ միայն մտքեր արտահայտելու, այլև մտքեր թաքցնելու համար է: Նոր ներմուծված օտար բառերը սովորաբար իրենց բուն բովանդակությունը թերի են արտահայտում: Այս հանգամանքը երբեմն օգտագործվում է ինչ-ինչ հասկացություններ կամ դրանց նրբերանգներ քողարկելու նպատակով: Օրինակ՝ **հեթանոս** բառը հունարեն **էթնոս** («ազգ») բառի աղավաղված տարբերակն է: Հետևաբար «հեթանոսական կրոն» արտահայտությունը պարզապես նշանակում է «ազգային կրոն»՝ ի տարբերություն ոչ ազգային քրիստոնեության: Բայց եթե ասեին «ազգային կրոն»,

ապա դա կընկալվեր որպես սեփական, դրական, լավ երևույթ: Մինչդեռ դա մերժվում ու հալածվում էր քրիստոնեության կողմից: Օտար հիմքով **հեթանոսական** անհասկանալի բառը հայի կողմից չի ընկալվում իբրև ազգային, դրական: Ահա թե ինչու այդ անմեղ թվացող բառը շուտով կորցրեց իր իսկական իմաստը և ստացավ «անհավատ, վայրենի, կռապաշտ, անաստված» բացասական իմաստները, ինչն էլ պետք էր քրիստոնյաքարոզիչներին:

Մեկ այլ ցայտուն օրինակ է **գենդեր** հասարակագիտական եզրույթը: «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» տխրահռչակ օրենքում գործածված են **գենդեր, գենդերային** բառերը, որոնց շուրջը ՀՀ կառավարությունում, խորհրդարանում, մամուլում քանակեճեր էին ծավալվել 2011-2013 թթ.: Հանրությունը պահանջում էր թարգմանել այդ օտար բառերը և գրել **սեռ, սեռային**:

Պահանջը միանգամայն արդարացի է: **Գենդեր**-ը անգլերեն **ջենդր** (gender = «սեռ») բառի ռուսերենացված ձևի (կամ գուցե միտումնավոր աղավաղված) տառադարձումն է: Հայերենի բառարաններում այդպիսի բառ չկա, և ըստ էության ոչ էլ դրա կարիքը կա: Եթե ինչ-որ ուժեր ուզում են հայերենում այդպիսի բառ ներմուծել, ապա նպատակը հայերենը հարստացնելը կամ խոսքը ավելի հասկանալի դարձնելը չէ: Այստեղ կա մի այլ նպատակ: Դա ինչ-որ հասկացություն մթագնելն ու թաքցնելն է, մարդկանց զանգվածային թյուրիմացության մեջ գցելը և լեզվական աճապարարությամբ պարտադրելը այն, ինչ սթափ ուղեղը պիտի մերժեր: Դա հայտնի «պղտոր ջուրն» է, որի մեջ ինչ «ձուկ» ուզես, կբռնես:

Պատահական չէ, որ ժողովրդին համոզելու համար այդ ոչ հայերեն բառերը որակում են որպես «միջազգային բառեր»: Վերջինս մի ամբոխավարական պիտակ է՝ արդարացնելու համար օտար բառերի անհարկի ներմուծումը որևէ լեզու: Այդպիսի նպատակ ունենում են ծավալապաշտ կայսրությունները, որոնք ջանում են տարածել իրենց լեզուն ու մշակույթը և լեզվափոխ անել ու ձուլել հպատակ ժողովուրդներին: «Միջազգային բառերի» մասին առասպելով մեզ՝ հայերիս էլ են շատ բան պարտադրել ու պարտադրում՝ փչացնելով մեր լեզուն և աղավաղելով մեր մտածողությունը:

Երբ գրում ու ասում են **գենդեր**, սովորական հայր, բնականաբար, ոչինչ էլ չի հասկանում: Նա գիտի, որ դա հայերեն չէ և գուցե նաև գիտի, որ ոչ էլ իսկական անգլերեն է: Հետևաբար նրա գիտակցության մեջ ներմուծվում է անորոշ կամ դատարկ հասկացությամբ մի նոր բառ: Հենց դա էլ պետք է տխրահռչակ օրենքը մեզ պարտադրողներին: Օրենքի ընդունվելուց հետո՝ ժամանակի ընթացքում, մեր գիտակցության մեջ առաջացած դատարկությունը կամ անորոշությունը աննկատ կերպով կլցվի մի այնպիսի հասկացությամբ, որը մեզ համար հիմա խիստ անընդունելի է: Դա կարող է լինել «ձեռքբերովի սեռ»-ը կամ «հասարակական սեռ»-ը կամ մի այլ վտանգավոր բան, որ ինչ-ինչ ուժեր փորձում են մեր ազգի վզին փաթաթել:

Ի դեպ, տխրահռչակ օրենքում **գենդեր** բառի սահմանումը անհեթեթության վառ օրինակ է. «**Գենդեր**. գենդերային՝ տարբերսեռիանձանց՝ ձեռքբերովի, սոցիալապեսամրագրվածվարք,

կանանցևտղամարդկանցմիջնհարաբերություններիսոցիալականհայեցակետ,

որնարտահայտվումէհասարակականկյանքիբոլորոլորտներում,

ներառյալքաղաքականությունը, տնտեսությունը, իրավունքը, գաղափարախոսությունը, մշակույթը, կրթությունը, գիտություննուառողջապահությունը»: Ստացվում է, որ գենդերը սեռային վարքն է կամ էլ գուցե տարբեր սեռերի հարաբերությունների սոցիալական հայեցակետը (անհեթեթ է, չէ³): Մինչդեռ **գենդերային** ածականը, օրենքում տեղ գտած բազմաթիվ սահմանումների համաձայն, նշանակում է պարզապես «սեռային»: Ահա մեկ օրինակ. «*Ուղղակիգենդերայինխտրականություն՝ սեռայինպատկանելիություննուղղակիորենմատնանշողխտրականություն*»: Այսպիսի հակասություններից էլ սկսվում է օրենքի թերմբոնումը, կասկածամտությունը դրա նկատմամբ, թերահավատությունն ու անվստահությունը, համաշխարհային դավադրության ենթադրումը և այլն:

Ահա ևս մի օրինակ: **Հիփոթեք** նշանակում է «գրավադրում, գույքադրում»: Շարքային քաղաքացու համար «հիփոթեքային վարկ» արտահայտությունը հնչում է գայթակղիչ, քանի որ «հիփոթեք» օտար ու անհասկանալի բառը չի հուշում, թե վարկը տրվում է գնվող բնակարանի գրավադրմամբ: Մինչդեռ հայերեն բառի միջոցով այդ հանգամանքը քողարկել հնարավոր չէ: «Գրավադրային վարկ»-ը տազնապալի և նախազգուշացնող է հնչում, ուստի հարմար չէ գովազդի և մարդկանց խաբելու համար:

Ինչպես տեսնում ենք, խոսքի միջոցով իրականությունը նենգափոխելու, ճշմարտությունը քողարկելու հնարքը հաճախ է չարաշահվում առևտրային նպատակներով: Գովազդում կամ ապրանքապիտակի վրա պարզապես կեղծ տեղեկություն գրելը խիստ վտանգավոր է, քանի որ պատժելի է օրենքով: Ուստի խոսքի միջոցով առևտրային խաբեությանն արվում է անուղղակի ձևերով:

Այդ ձևերից մեկը ապրանքին օտար անվանում տալը և պիտակը օտար լեզվով ձևավորելն է: Նպատակը ապրանքի տեղական ծագումը առերևույթ թաքցնելն է: Օրինակ՝ քանի որ Հայաստանում հարգի են սլավոնատառ կամ լատինատառ պիտակներով ռուսական և ուկրաինական օդիները, տեղական արտադրողները ևս իրենց արտադրած օդիների պիտակները սարքում են միայն լատինատառ կամ սլավոնատառ՝ միաժամանակ խուսափելով ապրանքի ակնհայտ հայկական անվանումներից («Wheat», «Abricon»): Իսկ եթե ձեռնարկության անունը նույնպես հայկական չէ, ապա խաբեության հաջողությունը գրեթե ապահովված է:

Մեկ այլ հնարք է ապրանքին այնպիսի անուն տալը, որը կարող է մոլորեցնել դուրսհավատ գնորդին: Օրինակ՝ «Филандия» օդի (*Ֆիլանդիա*-ն կոլումբիական մի քաղաքի անուն է, որ շփոթելի է *Ֆինլանդիա* երկրանվան հետ):

2. Խոսքի ձևի միջոցով տպավորություն թողնելու ճիգը

Խելքի և իմաստունի տպավորություն կարելի է ստեղծել խոսքի ոչ միայն բովանդակությամբ, այլև ձևով: Վերջին դեպքում հատուկ հնարքներով խուճուճացվում ու բարդացվում է խոսքը: Հիշենք Խ. Աբովյանի խոսքերը «Վերք Հայաստանի» առաջաբանից. «Ես էլ էի ուզում, որասեն. «Օ՛հ, էնպես խորը, խրթին շարադրել զիտի, որսատանեն էլ միջիցը մեկբառչի կարող իմանալ հասկանալ»³⁰: Միջին ու ցածր կրթության ու մտավոր կարողությունների տեր անձանց վրա պարզ ու հասկանալի խոսքը կարող է այն տպավորությունը չթողնել, ինչ խրթին ու դժվար հասկանալի խոսքը: Քանի որ օտար բառերը հիմնականում այս կամ այն չափով անձանոթ կամ դժվար մտնելի են ընթերցողների տարբեր շերտերի համար, հետևաբար դրանք ասելիքին կեղծ լրջություն, թվացյալ կարևորություն ու խորիմաստություն հաղորդելու հատկություն ունեն: Մինչդեռ հայերեն բառերը չունեն օտար բառերի մթին

³⁰ Խ. Աբովյան, *Երկեր*, Ե., 1984, էջ 6:

խորհրդավորությունը, այլ, ընդհակառակը, պարզ են ու այնքան հասկանալի, որ հեղինակի իմաստակությունը, նրա շարադրանքի թերությունները բացահայտելու վտանգ են առաջ բերում:

Խրթնաբանության կարիք լինում է նաև այն դեպքում, երբ ասելիքը պարզունակ է կամ բովանդակագուրկ: Այս պարագայում պարզունակ ասելիքը խոսքային միջոցներով քողարկել-պաճուճելու կարիք է լինում: Այդ նպատակին հաջողությամբ ծառայում են օտարաբանությունները:³¹ Մինչդեռ երբ լուրջ ու կարևոր ասելիք ունես և ուզում ես, որ քեզ լիարժեք հասկանան, ապա կխոսես առանց անհասկանալի բառեր գործածելու: Ուրեմն օտար անհասկանալի բառեր գործածելը խոսքի հասցեատիրոջ նկատմամբ քամահրանքի, նրանից ավելի բարձր երևալու ձգտման, անբարյացակամության արտահայտություն է: Բարյացակամ խոսողը ձգտում է իրեն ու խոսակցին հավասար ցույց տալ և չի պաճուճվում որևիցե մասնագիտական ժարգոնով, խրթնաբանությամբ կամ վերամբարձությամբ:

3. Լեզվական նորաձևությունը

Հասարակական և անհատական վարքի կարևոր բնութագրերից է նորաձևությունը, որ իր հստակ դրսևորումներն ունի նաև խոսքային վարքում: Հասարակության տարբեր շերտերում ժամանակ առ ժամանակ նորաձև կարող են համարվել որևէ լեզվական կողմնորոշում կամ ոճ, ինչ-ինչ բառեր ու արտահայտություններ, խոսքի հնչյունական ու քերականական առանձնահատկություններ և այլն: Քանակական առումով աչքի են ընկնում նորաձև բառերը, որոնք կարող են լինել ժարգոնաբանություններ, բարբառայնություններ, մասնագիտական (բժշկական, մարզական, ռազմական, տեղեկագիտական և այլն) բառեր, օտարաբանություններ, նորակազմ բառեր, գրքային բառեր և այլն:

Նորաձև օտարաբանությունները մեծ չափով կապվում են լեզվական կողմնորոշման հետ, որն իր հերթին կախված է արտաքին լեզվական ազդեցություններից ու ճնշումներից: Այսպես, եթե նախախորհրդային տարիներին

³¹Այս երևույթի մասին խոսելիս Հ. Աճառյանը «Հայոց լեզվի պատմության» 2-րդ մասում (էջ 267) հիշում է Հ. Պարոնյանի մի հերոսի հետևյալ խոսքերը. «Անանկ դժուար խոսքեր չդնեն նե՛՛ իրենց ըսածներուն պարապ խոսքեր ըլլալը մէջտան պիտի ելնէ, վարպետութեամբ խրթին բառեր կը դնեն կոր քի ուսուլով մը պարտկեն իրենց պակասութիւնը»:

արևելահայերենի վրա ազդում էին թե՛ թուրքերենը, թե՛ պարսկերենը, թե՛ ռուսերենը, ապա խորհրդային իրականության մեջ շարունակվեց միայն ռուսերենի ուժեղ ազդեցությունը, որն այժմ՝ հետխորհրդային ժամանակներում, աստիճանաբար տեղի է տալիս անգլերենի ազդեցությանը։ Դրա հետևանքով նորաձև են դառնում ուղղակի անգլերենից կամ ռուսերենի միջոցով ներթափանցած անգլերեն բառեր ու արտահայտություններ՝ **օքեյ, սորի, մեյքափ, պլիինգ, լիֆտինգ, հիթ, թրիլեր, թոքշոու, բրենդ, ռեբրենդինգ, բեստսելեր, թրոլինգ, քասթինգ, էքսկյուզիվ, էքստրիմ, իմիջ, մեսիջ, բիզնեսմեն, բրոքեր, մենեջեր, պրոմոշն, սուպերմարկետ, մոլ, քլաբ, փաբ, իվենթ, օնլայն, նոթբուք, սկաներ, տոներ, ռաֆթինգ, դայվինգ, սնոուբորդ, զիփլայն, պարապլան** և այլն։ Մինչդեռ հնաձև են դարձել և անգործածական դառնալու միտում ունեն արևելյան ու ռուսական մի շարք փոխառություններ՝ **յոլա, գյալաջի, զավզակ, պագոռ, պալոժ, նագլի, զվեռ, ցենտո, ստիլյագ, խոխմա, տոչկա, ցիրկ, ունիվերմագ, ունիվերսամ** և այլն։ Ռուսերենից անցած որոշ ոչ անգլերեն փոխառություններ, սակայն, դեռ շարունակում են նորաձև մնալ՝ **պրեստիժ, ալերգիա, կոլապս, խարիզմատիկ, ադեկվատ, լիբերալ, լեգիտիմ, պրոյեկտ, պրոդուկտ** և այլն։³²

Նշված նորաձև բառերը ճնշող մեծամասնությամբ ոչ թե հարկադրված փոխառություններ են (հայերեն համարժեքի բացակայության պատճառով), այլ զուտ օտարաբանություններ են։ Դրանք հայերեն խոսքում գործածողները երբեմն չգիտեն դրանց հայերենը (**թրիլեր – ցնցանկար, օնլայն – առցանց** և այլն) կամ պարզապես անգիտակցորեն չեն նույնացնում հայերեն համարժեքի հետ (**մենեջեր – կառավարիչ, բրենդ – ապրանքանիշ** և այլն), բայց ավելի հաճախ պարզապես ցուցամոլաբար կամ ընդօրինակաբար տուրք են տալիս նորաձևությանը (**էքսկյուզիվ – բացառիկ, ռեյտինգ – վարկանիշ, կոմպ – համակարգիչ, շոփինգ – գնումներ, յուգեր – օգտվող** կամ **օգտատեր** և այլն), երբեմն էլ ազգային թերարժեքության բարդույթի պատճառով խուսափում են հայերեն տարբերակը գործածելուց (**սկաներ – ծրիչ, մոնիտոր – ցուցադրիչ** և այլն)։ Մյուս կողմից՝ կան փոխառություններ, որոնք նորաձև էին տարիներ առաջ, իսկ այժմ սկսել են իրենց տեղը զիջել հայերեն համարժեքներին՝ **կոմպյուտեր – համակարգիչ, մոնիտորինգ**

³² Երբեմն սկսել են տարածում գտնել սրանց անգլերենացված տարբերակները՝ **փրոջեքթ, փրոդաքթ** և այլն։

– **մշտադիտարկում, ֆորմատ – ձևաչափ** և այլն: Որոշ բառեր էլ գործածությունից դուրս են գալիս համապատասխան իրողության հետ միասին (**վաուչեր, ֆլուպի, փեյջեր** և այլն):

Երբեմն որոշ իրավիճակներում միանգամից նորաձև են դառնում առանձին բառեր: Դրա վառ օրինակ է **դուխով** բառը, որ կտրուկ տարածվեց 1918 թ. թավշյա հեղափոխության օրերին³³:

Լեզվական նորաձևությունը բնորոշ է ոչ միայն խոսակցական լեզվին, այլև մասնագիտական լեզուներին: Օրինակ՝ քաղաքագիտական խոսքի նորաձև բառերից են՝ **տոլերանտ (հանդուրժող), պոպուլիզմ (ամբոխահաճություն), մարգինալ (լուսանցքային), կոնսենսուս (փոխհամաձայնություն), դիսկուրս (խոսույթ), էլիտար (վերնախավային), կոնցեպտ (գաղափար), պարադիզմ (հարացույց),** տնտեսագիտական խոսքից՝ **սանկցիա (պատժամիջոց), դեմպինգ (զնազցում), դոտացիա (լրավճար)** և այլն:

Նորաձևությունը հարափոփոխ երևույթ է: Նորաձև բառերի կազմը պարբերաբար փոփոխվում ու թարմանում է: Այդ կազմը լքած օտարաբանությունները, որպես կանոն, հնաձև են դառնում՝ իրենց տեղը զիջելով հայերեն համարժեքներին: Նորաձև բառերի կազմը ավելի արմատական փոփոխությունների է ենթարկվում լեզվական կողմնորոշման փոփոխության դեպքում, որ լինում է շատ ավելի մեծ պարբերականությամբ:

4. Լեզվական քմահաճ և օտարամոլ ճաշակը

Փորձը ցույց է տալիս նաեւ, որ մարդիկ, ովքեր իրենք էլ են նոր բառեր ստեղծում, մեծ մասամբ չեն հավանում ուրիշների ստեղծածը. Նրանք դժվարանում են առարկայական բացարձակ չափանիշերով գնահատել թե՛ իրենց, թե՛ ուրիշների ստեղծածը և երկակի չափանիշեր են կիրառում: Առարկայական գնահատումները կարող են բխել միայն համընդհանուր բնական օրենքներից և լեզվի զարգացման օրինաչափություններից, այլ ոչ թե անձնական ճաշակից:

Վերոհիշյալ ազգային թերարժեքության բարդույթի հետևանքով ոմանք գործածում են մի շարք օտարաբանություններ, քանի որ նրանց թվում է, թե այդ փոխառյալ բառերը շատ ավելի «լավն» են, քան դրանց հայերեն համարժեքները: «Լավ»

³³ Նույն կերպ ակնթարթորեն տարածվեցին **նախարար, տնօրեն** բառերը առաջին թավշյա հեղափոխության օրերին (1991-1992 թթ.):

ասելով՝ նկատի ունեն մերթ քառի գեղեցկությունը, մերթ հակիրճությունը, մերթ իմաստային կառուցվածքը:

Գեղեցկությունը խիստ անհատական զգացողություն է: Բառի դեպքում դա նախ և առաջ ու հիմնականում վերաբերում է բարեհունչությանը: Անբարեհունչ կարող են լինել թե՛ հայերեն, թե՛ օտարամուտ բառերը: Բայց ակնհայտ է, որ այդ թերության առկայությունն ավելի հավանական է օտարամուտ բառերի դեպքում (*չալաղաջ, սուկի, դիագնոզ, քլիրինգ, շնիցել, կատակլիզմ*), քանի որ դրանք միշտ չէ, որ հարմարվում են հայերենի հնչյունական համակարգին, հաճախ պարունակում են հայերենին անհարիր և հայախոսի համար դժվարարտասանելի հնչյունակապակցություններ (*կոմպակտ, մատչ, մասշտաբ, մանևր, վիրտուոզ*), երբեմն չեն ենթարկվում հայերենի բառակազմության ու քերականության օրենքներին՝ պատճառ դառնալով անճոռնի բառաձևերի ու ածանցյալների առաջացման (*շոուի, ինտերյերներ, պլեներներին, դոկտրինին, կակաոանման, էմոցիական*), իրենց հետ բերում են հայերենին անհարիր հնչյունական հատկանիշեր (քմայնացում, սխալ շեշտ, սխալ ընթերցում, չթույլատրված հնչյունափոխություն և այլն):

Հակիրճությունը նույնպես խիստ հարաբերական հասկացություն է: Լեզուների կան (օրինակ՝ չինարենը), որոնց բառերը խիստ հակիրճ են: Եվ ընդհակառակը՝ լեզուների կան (օրինակ՝ գերմաներենը), որոնց բառերը խիստ երկար են: Բայց այդ երկարությունն ու կարճությունը փոխհատուցվում են լեզվի կառուցվածքի այլ կողմերով (քերականությամբ, բառակազմությամբ, համարժեք գրվածքում բառերի քանակով և այլն): Հետևաբար լեզուն մեկ առանձին հատկանիշով չի կարելի գնահատել: Հայերենի բառերն ու բառաձևերը իրենց երկարությամբ միջին տեղ են գրավում այլ լեզուների համեմատ: Եվ ոչ մեկի մտքով չի անցնում խոտանել ռուսերենը կամ գերմաներենը, որոնք այդ հատկանիշով «զիջում» են հայերենին: Իհարկե, այլ հավասար բնութագրերի դեպքում նախընտրելի են բառերի ավելի կարճ տարբերակները, թեև դա բացարձակ հատկանիշ չէ: Երկար, բայց թափանցիկ բառը հաճախ խնայողության միջոց է, քանի որ փոխարինում է երկու կամ ավելի բառերի կապակցության (հեռագրասյուն – телеграфный столб, յուղանկար – живопись маслом – oil painting, ուղղագրիչ – spell checker):

Հայերեն որոշ նորակազմ բառեր նույն ազգային թերարժեքության բարդությամբ տառապողներին կամ քմահաճ ճաշակի տեր անձանց «հուշտ» են անում իրենց

իմաստային կառուցվածքով: Օրինակ՝ интерфейс, фрак բառերի հայերեն **միջերես**³⁴, **պոչազգեստ** համարժեքները ունենալով են անհեթեթ, անճոռնի, սխալ, ծիծաղելի, և դրանք մերժողները գերադասում են **ինտերֆեյս**, **ֆրակ** փոխառությունները գործածել, քանի որ դրանց իմաստային կառուցվածքն իրենց հայտնի չէ, «չի խանգարում» և ծիծաղելի կամ անհեթեթ չի թվում: Բայց այսպես կարծողներից ոչ մեկի մտքով չի անցնում խոտանել **միջերես**-ի անգլերեն interface կամ իտալերեն [interfaccia](#), **պոչազգեստ**-ի անգլերեն tailcoat կամ ֆրանսերեն [queue-de-pie](#) համարժեքները, որոնք ճիշտ նույն կառուցվածքն ունեն, ինչ դրանց հայերենները (inter+face, [inter+faccia](#) «միջ+երես», tail+coat «պոչ+զգեստ»): Իսկ ֆրանսերեն [queue-de-pie](#) բառը նշանակում է ոչ ավել ոչ պակաս «կաշաղակի պոչ»: Ուրեմն այդ ո՞ր տրամաբանությամբ անգլախոսը կարող է ասել interface (=միջերես), tailcoat (=պոչազգեստ), իսկ հայախոսին վայել չէ ճիշտնույն կերպ արտահայտվել՝ ասելով **միջերես**, **պոչազգեստ** (սրանք փաստորեն բառացի՝ մեկին մեկ պատճենումներ են անգլերենից): Ինչո՞ւ գերմանախոսը պիտի ասի Großmeister և հասկանա «մեծ վարպետ», իսկ հայախոսը չպետք է ասի **մեծավարպետ** ու հասկանանույնը, ինչ գերմանախոսը, այլ պիտի ասի **գրոսմայստեր** ու գուցե ոչինչ չհասկանա: Սա առնվազն ազգային խտրականություն է, բռնություն ընդդեմ ազատ արտահայտվելու իրավունքի ³⁵ , ճնշում մտքի ու բանականության վրա, լեզվասպանություն:

Պոչազգեստ-ի օրինակն այստեղ հատուկ է բերված, քանի որ ամեն մի պատեհ ու անպատեհ առիթով դա վկայակոչվում է իբրև անհաջող բառակազմության նմուշ: Մինչդեռ, ինչպես տեսնում ենք, իրականությունն այլ է: Ցավոք, հայերենաստյացների ու օտարամոլների որոգայթն ընկնելով՝ նույնիսկ Հ. Թումանյանը, Ռ. Իշխանյանն են հանիրավի ենթարկվել **պոչազգեստ** բառը փնտվելու գայթակղությանը³⁶:

Ավելի անհեթեթ երևույթ է այն, երբ օտար բառի մի իմաստը թարգմանվում է, իսկ մյուս իմաստ(ներ)ի համար պահանջվում է կիրառել օտար բառի տառադարձությունը, Օրինակ՝

³⁴ Հմմտ. նույն կառուցվածքով **մակերես** (surface) բառը, որ ոչ մեկի չի անհանգստացնում:

³⁵ Լրատվամիջոցների ու հրատարակչությունների մի շարք խմբագիրներ նշված բառերը հանում են իրենց ձեռքի տակով անցնող գրվածքներից:

³⁶ Հ. Թումանյան, *Լեզվական փոխառությունները*, Երկերի լիակատար ժողովածու, հ. 6, Ե., 1994, էջ 201, Ռ. Իշխանյան, *Ակնարկ հայերենի տերմինաշինության*, Ե., 1981, էջ 162:

концерт – 1. համերգ (նվագահանդես), 2. կոնցերտ (երկ),

квартет – 1. քառյակ (խումբ), 2. կվարտետ (երկ),

президент – 1. նախագահ (երկրի), 2. պրեզիդենտ (գլխությունների ակադեմիայի):

Սա ևս ազգային խտրականության դրսևորում է: Եթե, օրինակ, ռուսերենում կարելի է երկու իմաստի համար էլ կիրառել концерт բառը, ապա մի՞թե հայերենում նույն (գուցե և ավելի) հաջողությամբ անկարելի է կիրառել **համերգ** բառը:

Ի դեպ, հայերենը հնարավորություն ունի նաև վերոհիշյալ գույգ իմաստները բառային տարբերակման ենթարկելու՝ **նվագահանդես** և **համերգ**, **քառյակ** և **քառանվագ** կամ **քառերգ**: Հենց սա պահանջելու կամ անելու փոխարեն ումանք օտարաբանության գովք են անում՝ հակառակ ամեն մի տրամաբանության ու ողջամտության:

Հայերենում օտարաբանությունների կենսունակությանը մեծ չափով նպաստում են նաև այլ հանգամանքներ՝ արմատացած սովորույթը, լեզվամշակութային օտարամոլությունը, օտարալեզու կրթությունն ու դաստիարակությունը, հայերենի թերիմացությունը, խոսքի հեղինակի մասնագիտական հավակնոտությունը, ծաղրվելու վախը, ծուլությունը, նպատակային ոճավորումը, մի շարք մոլորություններ ու նախապաշարումներ և այլն, որոնց կանդաղառնանք մեկ այլ առիթով:

Закарян Оганес – Некоторые мотивы употребления иностранных слов.– Существует ряд субъективных мотиваций употребления варваризмов (иностранных слов) в армянском языке. Из них в настоящей статье обсуждаются неискренность речи, воздействие на людей с использованием определённых форм речи, следование языковой моде, языковой прихотливый и ксенофильный вкус и т. д.

Zakaryan Hovhannes – Some motivations of the use of foreign words. –There are a number of subjective motivations for the use of foreign words in Armenian. Among these, this article discusses the insincerity of speech, the impact on people using certain forms of speech, adherence to linguistic fashion, linguistic whimsical and xenophilic taste, etc.

ԾԻՍԱՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ ՈՐՈՇ ԲԱՌԵՐ ՀԱՄՇԵՆԻ ԲԱՐԲԱՌՈՒՄ

Հայ ժողովրդի կենցաղը միշտ անբաժանորեն կապված է եղել տոնակատարությունների, տոնական հանդիսությունների և ընծայաբերության ծիսական կարգի հետ: Հեթանոսական հարուստ դիցարանով պայմանավորված բազմաթիվ տոներ՝ յուրահատուկ հավատալիքներով և ծիսական արարողակարգերով, նաև հարուստ բառապաշարով, նախաքրիստոնեական ժամանակներից պահպանվել և հասել են մինչև մեր օրերը՝ իրենց արտահայտությունը գտնելով նաև բարբառային հայերենում:

Համշենի բարբառը, կղզիացած լինելով իր խոսվածքային տարածքում, անաղարտորեն պահպանել է հինհայերենյան այնպիսի բառանուններ, որոնք վկայված չեն այլ բարբառներում: Համշենահայերենը իրեն բնորոշ յուրօրինակ լեզվամտածողությամբ ստեղծել է ուշագրավ բառանուններ, որոնց մեջ խնդրո առարկա ծիսապաշտամունքային բառանուններից առանձնացրել ենք *ծառզարդարը, բուրբաղիզը (նուրին), կուշկուրագը, ալը, ալելուքը, մայրումիզը (նույնն է՝ զատկի բլոճ)*:

Ծաղկազարդի ակունքները գալիս են հնագույն ժամանակներից: Այն համա-ժողովրդական տոն է եղել, ինչն էլ հիմք է հանդիսացել բառապաշարային հետաքրքիր միավորների ստեղծման: Բարբառային հայերենում *ծաղկազարդ* հասկացությունը դրսևորված է հիմնականում *ծառզարթար, զըրզարթար, ծառազարթ, ծըղկազարթ* բառանուններով, որոնցում, ինչպես նկատում ենք, բառակազմական բաղադրիչներն են *ծաղիկը* կամ *ծառը*, որոնց հավելվում են *զարդ* կամ *զարդար* բառանունները: Այլ բարբառներում վկայված են նաև *ծաղզի տօն, հըռօխնիք, ծառակօտրունք* և այլ բառեր:

Ծաղկազարդը գարնանային բացօթյա տոնախմբությունների սկիզբն ազդարարող եկեղեցական և ժողովրդական տոն է, կատարվում է Զատիկից մեկ շաբաթ առաջ՝ ի հիշատակ Քրիստոսի «Երուսաղեմ մտնելու օրվա»:

Ծաղկազարդի օրը, ինչպես գիտենք, հայոց եկեղեցիները զարդարվում են ուռենու ճյուղերով, առավոտյան կատարվում է ժամերգություն կամ Անդաստանի կարգ, որից հետո օրհնված ճյուղերը բաժանվում են հավատացյալ ժողովրդին, որոնք պահվում էին մինչև հաջորդ Ծաղկազարդ: Հեթանոս հայերի համար այս տոնը զարնան գալստյան, բնության զարթոնքի խորհրդանիշ է եղել: Ծաղկազարդին վերագրվում էր բարիքի, առատության, պտղաբերության հմայական գորություն:

Ըստ ՀԲԱ ծրագրի հավաքած նյութերի՝ Համշենի բարբառի մոտավորապես 10 տետրերի նյութերում Ծաղկազարդի տոն հասկացության դիմաց արձանագրված է հիմնականում *զայզայտար* բառանունը (*Ջայզայտարին* օրը գեշտօն խաճ: *Ջայզայտարին* օկընը (առավոտ) խաճ կընծի), իսկ Համշենի բարբառի Օրդուի խոսվածքում բառը փաստված է *իզ* (<*իկ*) փաղաքշական վերջածանցով՝ *զայզայտըրիզ* (օսօր *զայզայտըրիզ*): Անդրադառնալով *զայզայտար* բառանվանը՝ փաստենք, որ Համշենի բարբառում ընդհանրապես բառասկզբի *ծ-ն դառնում է ձ* (*զ>ձ*), ինչպես, օրինակ՝ *ծաղիկ>ձաղիկ*, *ծով>ձով*: Միակ բացառությունը *ծառզարդար* բառն է, որում, ինչպես նկատում ենք, բառասկզբի *ծ-ն*, ազդվելով հաջորդող *զարդար* արմատի *զ-ից*, առնմանությամբ դարձել է *զ* (*ծ>զ* անցում է տեղի է ունեցել): Իբրև լրացում՝ ասենք նաև, որ Համշենի բարբառում *ծ*, *ձ*, *ց* բաղաձայններից առաջ *ը>յ* (*որձ>էյց*, *ործկալ>գօյձուշ*, *զարզարդար>զայզայտար* և այլն)³⁷: Արևազիայի Ծեբելդա գյուղի խոսվածքում, որի բնակիչները ճանիկցիներ են, *ծաղկազարդ* հասկացության դիմաց արձանագրված է *ծաղիկ* և *խաղ* բաղադրիչներով ձևավորված ուշագրավ *ձաղգախաղ* բառանունը: Ըստ Հ.Մեսրոպյանի՝ Համշենի բարբառում առկա է նաև *զարզարդար* բառանվան հետաքրքիր *ճօրճադօր* հնչատարբերակը³⁸: Այնուամենայնիվ փաստենք, որ Համշենի որոշ խոսվածքներում բարբառախոսները չեն կարողացել հիշել *ծառզարդար* հասկացության բառագուգաբանությունները, ինչն էլ հիմք է տալիս կարծելու, որ, ցավոք, մեր ժողովրդի այս հատվածում մեծ տարածում գտած Ծաղկազարդի տոնը աստիճանաբար մոռացվում է:

³⁷ **Հ.Աճառյան**, *Քննություն Համշենի բարբառի*, Ե., 1947, էջ 64:

³⁸ **Հ.Մեսրոպյան**, *Կրոնական երգական բառապաշարը հայերենի բարբառներում*, Ե., 2016, էջ 197:

Ինչպես փաստում է Հ.Խառատյանը, «Ամենագեղեցիկ, լուսավոր, ծիծաղաշատ, ուրախաշատ տոներից է Ծաղկագարդը՝ իր անվան արմատի՝ «ծառ» կամ «ծաղիկի» նման անարատ, բուրումնավետ ու լուսառատ»։ Ըստ նրա՝ Վահան վարդապետ Տեր Մինասյանը իրավացի է, թե Ծաղկագարդ/Ծառգարդարը հայոց Նար (հետո՝ Նուրի, գուցե նաև Հուրի) Աստծուն նվիրված տոն պիտի լինե՞ր³⁹:

Ծաղկագարդ տոնի հետ ուղղակիորեն աղերսվում է Նուրինը։ Ինչպես գիտենք, տոնի ժամանակ պատրաստել են տիկնիկներ։ Նուրի տիկնիկը պատրաստվում էր ցախավելից կամ փայտից։ Դեմքը պատում էին սպիտակ լաթով, գոտին գունավոր կտորից էր, լաչակը զարդարում էին փայլփլուն ուլունքներով, իսկ գլխին ամրացնում էին ծաղկեպսակ։

Նուրին հայտնվում էր Ծաղկագարդի տոնին և երաշտի ժամանակ։ Նուրիի աչքերից էին ծնվում շաղը, ցողն ու անձրևի կաթիլները։ Երբ մարդ ու անասունը տառապում էին ջրի սակավությունից, Նուրին արտասվում էր, և նրա արցունքներով թրջված հողը վերակենդանանում էր, կրկին բերք տալիս։

Երբ Նուրի տիկնիկին պտտեցնում էին հրապարակներով ու թաղերով, մարդիկ լուսամուտներից ու դռներից կուժերով ջուր էին շաղ տալիս տոնի մասնակիցների վրա, ապա նվերներ ընծայում նրանց։ Հավաքված բարիքով երիտասարդները կա'մ խնջույք էին կազմակերպում, կա'մ էլ պատվիրում էին դարբնին մի մետաղյա տիկնիկ պատրաստել, որը թողնում էին գյուղի սրբավայրում։ Նուրի տիկնիկը բարբառային հայերենում տարբեր անվանումներ է ունեցել՝ Նուրի, Թերափ, Խուճուրդուրուկ, Չիչի-մամա, Ճիճի-մումա, Մամա չթթիկ, Չամչա խաթուն, Ալլապիտիկ և այլն։

Հ.Աճառյանը ևս անդրադարձել է *նուրի* տիկնիկին. «Նուրին Երև., Ղրբ, ճուլի՝ Ղարաբաղ, մամաչթթիկ՝ Արաբկիր, ուրբաթեկին Բաբերդ., չիչիմամա՝ Ակն, պուպլատիկին՝ Քղի՝ խամաճիկ, խոճիկ՝ որ երաշտ ժամանակ երեխաները տունետուն կը պտտցնեն երգելով, վրան ջուր թափելով և նվերներ հավաքելով, ասով կըհավատան, թե անձրև պիտի գա»⁴⁰:

³⁹ Հ.Խառատյան-Առաքելյան, *Հայ ժողովրդական տոները*, Ե., 2005, էջ 122:

⁴⁰ Հ.Աճառեան, *Հայերեն գաղափարական բառարան*, Թիֆլիս, 1913, էջ 816:

Համշենի բարբառում աղջիկ երեխայի խաղալու տիկնիկը *կուզլիզն* է, որը, ինչպես գիտենք, գրեթե համընդհանուր գործածություն է ստացել սովետահայ իրականության մեջ՝ ռուսերենից փոխառելով *кукла* բառանունը: Սակայն ՀԲԱ ծրագրով հավաքած նյութերում Համշենի խոսվածքներում *տիկնիկ* հասկացության դիմաց արձանագրված են նաև *շէր*՝ շորե տիկնիկ, *հայս*՝ հարս (տե՛ս տետր հ. 252) և, որ ամենակարևորն է, *բուրբիզ*, *բուրբաղիզ*, *բուրբաղնիզ* բառանունները: Հոմանիշների բառարանում, որպես *նուրին* բառի գուգաբանություններ, փաստված են *ճոլի*-ն, *մամաչթթիկ*-ը, *չիչիմամա*-ն, *պուպլատիկին*-ը, *պուպրատիկին*-ը, խուշկուրուրիկ, խուրձկուլուլու, խունձկուլուլու և այլն⁴¹: Այս բառացանկից մեզ համար հետաքրքրություն են ներկայացնում *պուպրատիկին* և *խուշկուրուրիզ* բառանունները, որոնցից առաջինը, մեր կարծիքով, աղերսվում է Համշենի բարբառում դրսևորված *բուրբաղիզ*, *բուրբաղնիզ* բառագուգաբանություններին, որոնց բաղադրիչներն են *պուպր(իկ)+տիկին* բառանունները՝ պարզապես բարբառային հնչատարբերակներով: Ի հաստատումն այս ամենի, ըստ Ս.Վարդանյանի վկայության՝ *բուրբիզը* Համշենի բարբառում ծիսական տիկնիկն է ⁴² : Կարծում ենք՝ մեր հիշատակած *բուրբաղիզ*, *բուրբաղնիզ*, *բուրբիզ* բառանունները ծագումնաբանորեն առնչակից են *պուպրիկ* բառանվանը, որը խամաճիկ, խրձիկ, տիկնիկ նշանակությամբ առկա է հայերենի բարբառներում: Թերևս *նուրին* բառի հոմանիշ *բուրբաղիզ*-ը ծիսական տիկնիկ նշանակությամբ է նախապես գործածվել՝ հետագայում դառնալով ուղղակի *տիկնիկ* հասկացության նշանակելի: Գուցե դա պատճառը, որ Հ.Աճառյանը *բուրբաղիզ*, *պուպրիկ*՝ Խրբ. *պուրպիկ* բառանունները դիտարկել են որպես խամաճիկ, երեխայի խոճիկ՝ տիկնիկ հասկացությունների բառագուգաբանություն⁴³:

Համշենի խոսվածքներում *բուրբաղիզ*-ը վկայված է հետևյալ օրինակներով. «Ախճիզը *բուրբաղնիզ* խաղ՞ր գու», «Բուլիզը բուրբաղիզով խաղ՞ր գու»: *Պուպրիկ* բառանունը արձանագրված է նաև Արարատի, Պոլիսի, Խոտրջուրի Խարբերդի

⁴¹ Ա.Սուքիասյան, *Հայոց լեզվի հոմանիշների բառարան*, Ե., 1967, էջ 496:

⁴² Ս.Վարդանյան, *Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը*, Ե., 2009, էջ 117, 278:

⁴³ Հ.Աճառեան, *Հայերեն գաղաղական բառարան*, Թիֆլիս, 1913, էջ 926:

բարբառներում և խոսվածքներում *պուպուկ*, *պուրպիկ* և այլ հնչատարբերակներով⁴⁴:

Կուշկուրազ: Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանում *խուշկուրուրիզ* բառի հետևյալ բացատրությունն է տրված. «Մարդանման խրտվիլակ, որ երաշտի ժամանակ ման են տալիս ու ջուր շփում վրան, որ իբր անձրև գա»⁴⁵ : Բարբառային հայերենում վկայված *նուրի* հասկացության *խուշկուրուրիզ* բառագուգաբանությունը ամենայն հավանականությամբ առնչվում է Համշենի բարբառում առկա *կուշկուրազ*, *կուշկուրիզ* բառանունների հետ: Համշենահայերի մոտ ևս պահպանված է եղել երաշտի ժամանակ բնությունից անձրև խնդրելու ծիսակատարությունը, որը և *կուշկուրազ* է կոչվել, ըստ երևույթին, ծեսի ժամանակ լաթերից պատրաստված տիկնիկի՝ կուշկուրազի (կուշկուրիզ) անվանումով: Բարբառում վկայված են հիշյալ ծեսի հետ կապված մի քանի խաղիկներ (մենիներ).

Կուշկուրազը էգաձ °,

Դօնը առաձ գոյնաձ °,

Շարու շաբիզ հակաձ °,

Մեճկին (կարմիր) կողի գաբաձ °:

Սեվ հավին հավգիտ կուզ°,

Գարմիր գովին յեղ կուզ°,

Հարուստնուն բաջացն դըվեք,

Ախքադնուն այդնըն ի վար դըվեք⁴⁶:

Համշենահայերի մոտ ծիսակատարության ավարտին երեխաները ջուրն էին նետվում և գոչում. «Վըրայեզ գուզինկ, վըրայեզ դըվեկ (անձրև ենք ուզում, անձրև տվեք):

⁴⁴ Հայոց լեզվի բարբառային բառարան , հ.Ե., Ե. 2008, էջ 139:

⁴⁵ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Ե., 1974, հ. 1, էջ 601:

⁴⁶ Ваган Менакеци, Душа Амиена, Сочи-Гуапсе, 2013, стр. 96-97:

Մայրովիզ, մայրովի ջիջու: Ըստ ՀԲԱ ծրագրի հավաքած նյութերի՝ Համշենի բարբառում *զատիկ միջատ* հասկացությունը դրսևորված է հիմնականում *զատիկ* (կամ *զատկի բլլօճ*) բառանվամբ (*Ձաղիզը* գարմիր հնու բուդբուդիզ գրլլի՝ կարմիր և պուտավոր կլինի): Համշենի Օրդուի խոսվածքում ունենք վկայված *Ֆըրաջըջու* բառանունը (*Ֆըրաջըջուն* գարմիր, բուդբուդիզ բիջիզ պօն օ՝ Ջատիկը կարմիր, պուտավոր փոքրիկ բան է): Միայն Ունիեի Բալլուդ գ.-ի խոսվածքում է արձանագրվել *մայրովիզ, մայրովի ջիջու* բառանունները: Նկատենք, որ բառանունը վկայված չէ ո՛չ Հ.Աճառյանի, ո՛չ էլ որևէ այլ ուսումնասիրողի կողմից: Հ.Աճառյանը ՀԳԲ-ում զատիկ միջատի համար գրում է. «Ճանճի մը մեծութեամբ կարմիր ճճի մ' է, որ զատկին մօտ կերևայ», և բերում է զատիկ հասկացության *Աստծու կով, եզնակ, զատկի պլոճ* բարբառային բառանունները⁴⁷: Կարծում ենք՝ Համշենի բարբառում վկայված *մայրովիզ, մայրովի ջիջու* բառանունները աղերսներ ունեն Աստվածամոր՝ Մարիամի անվան հետ: Ի հաստատումն մեր ենթադրության՝ նշենք, որ Հոմանիշների բառարանում, բացի *աստծու եզն, աստծու կով, աստծու եզնակ, չալպոճ* բառանուններից, վկայված է նաև *մարիամ բոլոջ* բառանունը⁴⁸:

Ինչպես հայտնի է, բարբառային հայերենում շատ հաճախ բառանունները բառիմաստային հետաքրքիր զարգացումներ են ապրում: Ըստ Է.Աղայանի՝ բառի փոխաբերական և փոխանվանական գործածությունները առաջ են բերում բառիմաստի զանազան փոփոխություններ, որոնք ժամանակի ընթացքում ամրանում են նրան խոսքից դուրս՝ դառնալով բառի «սեփական» իմաստները⁴⁹:

Համշենի բարբառը հարուստ է բառիմաստային ճյուղավորումներով, բառի բուն իմաստից բավականաչափ հեռացած բառային դրսևորումներով, որոնցից է և *ալեկոքը*:

Հ.Խառատյանը Նոր տարվա համահայկական սովորություններից առանձնացնում է առաջին հերթին նախորդ օրն ու գիշերը 10-12 տարեկան տղաների, իսկ որոշ վայրերում նաև աղջնակների խմբերի ծիսական շրջայցերը և տոներ շնորհավորելու ավանդույթը: Խմբերը պարելով շրջում էին փողոցներում և

⁴⁷ Հ.Աճառյան, ՀԳԲ, էջ 316:

⁴⁸ Ա.Սուքիասյան, *Հայոց լեզվի հոմանիշների բառարան*, Ե., 1967, էջ 195:

⁴⁹ Է.Աղայան, *Ընդհանուր և հայկական բառագիտություն*, Ե., 1984, էջ 73:

որևէ մեկի տանը մոտենալիս սկսում էին երգել: Սովորաբար շնորհավորում էին երգելով: Երգերը պարունակում էին բարեմաղթություններ, ընտանիքի անդամների գովք և տոնական ճաշատեսակների խնդրանք: Մինչ տներում զբաղված էին տոնական պատրաստություններով, տղաները երգելով տուն էին մտնում կամ երդիկից դատարկ տոպրակ իջեցնելով՝ ավետում էին հին տարվա ավարտը, Նոր տարվա գալուստը⁵⁰:

Հին մատենագրության մեջ «աստուածային օրհներգութիւն» իմաստով վկայված է եբրայական *ալէլու* բառանունը: Ուշագրավ է, որ Համշենի բարբառում արձանագրված է բարբառային *ալէլուք* կամ *ալլուք* (Ճանիկում՝ ալէլուգ) բառանունը, որը բաղադրված է վերոհիշյալ *ալէլու* բառից + *ք* վերջածանց: *Ալէլու* բառը վերաիմաստավորմամբ ձեռք է բերել վերևում հիշատակված նույն «Ծննդյան երեկոյին տները ման գալով երգած երգերը» նշանակությունը կամ, ինչպես Բ.Կիլիկեւեանն է հիշատակել 1899 թ. «Բիւրակն» ամսագրում՝ «Ալլուք, ալէլուք - Ծննդեան Ճրագալուցին աւետիսը, զոր կուտան խումբ-խումբ երիտասարդներ տունէ տուն պտտելով. «Ալլուք գովեցի՞ք թէ» (=Ալէլուք ըսի՞ք, աւետիս տարի՞ք, երգեցի՞ք)»⁵¹: Հ.Աճառյանը և Խ.Թահմազը ևս փաստել են *ալէլուգ* բառանունը հիշյալ իմաստով. «*Ալէլուգը* թաղոնի դէսագ մըն °, վերը դըն°դուն գէշօն ու խաղօն գու հնօվ նէյ դարվօն կիշէրը», «°ս կիշէր *ալէլուգ* աստուշի էշօնք»⁵²:

Ըստ մեր բարբառախոսների՝ Համշենի բարբառում առկա է նաև *ալէլուկ կօվուշ* դարձվածքը, որ նշանակում է *ալէլուկի* խաղիկներ ասել: Մեր բարբառախոսներից գրի ենք առել *ալէլուկի* հետևյալ խաղիկը.

Մէկ մըսէձակ, տուռը պածէկ, ավէղիս,

Դօնի դըղըն օտտնաձ մնա, ավէղիս,

(Տան տղան օրհնած մնա)

Դօնի մօմը օտտնաձ մնա, ավէղիս

⁵⁰ Հ.Խառատյան-Առաքելյան, *Հայ ժողովրդական տոները*, Ե., 2005, էջ 30:

⁵¹ Բ.Կիլիկեւեան, *Բիւրակն*, 1899, էջ 512:

⁵² Հ.Աճառյան, *Քննություն Համշենի բարբառի*, էջ 39, 219, Խ.Թահմազ, *Ջենիգի բարբառի բառարան*, Սոչի, 2014, էջ 5:

(Տան տատը օրինած մնա)

Դօնի չէյս չօնդը օռտնաձ մնա, ավելիս

(Տան չորս ճոթը (կողմը) օրինած մնա):

Փաստենք նաև, որ համահայկական այս տոնակատարության ժամանակ երգելիս հաճախ է հիշատակվել *ալեղուի* բառը, ինչպես հետևյալ խաղիկում.

Բարի թիգուն ձեզ, ավելուիս,

Հա ցնծացեք, ուրախացեք,

Մեր Մարիամի պասը բացեք,

Մարիամ գնաց էլի ծնունդ,

Ծննդվեցավ, ազատվեցավ:

Ենթադրում ենք, որ այդտեղից էլ առաջացել է տվյալ հանդիսության *ալեղուք* անվանումը:

Ալ-ը (երբեմն նաև *ալք*-ը) մի շարք ժողովուրդների հին հավատալիքներում մարմնավորում է առասպելական կենդանիների կամ չար ոգիների:

Պարսիկների պատկերացմամբ դրանք կնոջ կերպարանքով ժանտատեսիլ կենդանիներ են, ըստ վրացիների՝ անտառային ոգիներ: Հայոց ժողովրդական հավատալիքներում Ալերը բրդոտ են, կես-մարդկային, կես-կենդանական կերպարանքով, հրեղեն աչքով, պղնձե եղունգներով: Համարվել են թշնամի՝ առանձնապես ծննդկան կանանց և նորածինների: Այս հավատքը ծագել է նախապատմական ժամանակներում՝ մարդու և շրջապատող աշխարհի մասին մութ պատկերացումներից: Նույնչափ հին են այդ ոգիներից պաշտպանվելու հմայական միջոցները (օրինակ՝ ծննդկանի բարձի տակ երկաթի իրեր դնել): Պահպանվել են բերանից «ծննդկանի աղոթքներ», գրավոր հմայեկներ: Ենթադրվում է, որ այս հավատքը հայերից անցել է քրդերին «*ալք*» անվանումով:

Բարբառային հայերենում *ալ* բառանունը դրսևորված է *ալք* և *ալ, օլ, ալիպառալ* զուգաբանություններով: *Ալք* տարբերակով բառանունն առկա է Արարատի, Նոր Բայազետի, Ղարաբաղի, Պոլսի, Նոր Նախիջևանի, Սասունի, Արաբկիրի, Խոտորջուրի, Ակնի, Խարբերդի և այլ բարբառներում, *ալ* բարբառային տարբերակով՝ Արաբկիր, Եվդոկիա, ինչպես նաև մեր խնդրո առարկա Համշենի բարբառում: *Օլ* հնչաձևով վկայված է Ագուլիսի բարբառում՝ չար ոգի նշանակությամբ⁵³: Սվեդիայում *ալ* առաջնային բաղադրիչով վկայված է *ալիպառալ* բառանունը՝ նույն *ալք*՝ չար ոգի՝ առասպելական կնոջ կերպարանքով, նշանակությամբ: «Բիւրակն» հանդեսում *ալքի* մասին կարդում ենք. «Օձէ մագերով, պղնձէ եղունգներով և վարագի ժանիքներով աներևոյթ էգ ոգի մէ թշնամի տղացկաններու, նորածին մանուկներու և երիտասարդներու, տղացկաններուն սիրտն ու թոքը կը փրցնեն, նորածինները կը յօշոտեն, իսկ երիտասարդները կը չարչարեն՝ անոնց քնացած ժամանակ վրանին նստելով ու խեղտելով»⁵⁴:

Նոր Բայազետում բառանունը վերաիմաստավորմամբ ձեռք է բերել ազահ, անկուշտ, շատակեր իմաստները: Ըստ Հ.Աճառյանի՝ Շապին Գարահիսարում գործածվել է *ալքու կոխած* կամ *ալքու փոխած* դարձվածքը՝ շատ նիհար, հիվանդոտ, տգեղ մանուկ նշանակությամբ⁵⁵:

Համշենի Ճանիկի խոսվածքում առկա է *ալ* բառը՝ չար ոգի իմաստով (*Ալը* տրվված ունի (Հավանաբար «չարքը խփել է»), *Ալը* քընգէդ մօրը դըղուն խէխտ՝ գու⁵⁶, այսինքն՝ «Ալը քնկոտ մոր երեխային է խեղդում»):

Գ. Տաթևացու «Գիրք հարցմանցում» ևս հիշատակված է *ալ* բառանունը՝ որպես «ծննդկանների թշնամի՝ այլանդակ կերպարանքով մի չար ոգի»: Ըստ Հ.Աճառյանի՝ *ալ*-ը պարսկական ծագում ունի՝ *āl*, որի նշանակությունն է «ախտ ինչ սատակիչ, որ պատահի կնոջ, որ նորոգ ծնեալ իցէ զմանուկ իւր»⁵⁷: Ի դեպ, Հ.Աճառյանը բառանվան բարբառային տարբերակները փաստելիս Համշենի բարբառում այս բառը չի հիշատակել:

⁵³ Հ.Աճառյան, *Քննություն Ագուլիսի բարբառի*, Ե., 1935, էջ 330:

⁵⁴ *Բիւրակն*, 1898, էջ 296-297, 1899՝ էջ 70:

⁵⁵ Հ.Աճառյան, *ՀԳԲ*, էջ 53:

⁵⁶ Խ. Թախմազ, *Ջենիգի բարբառի բառարան*, էջ 5:

⁵⁷ Հ.Աճառյան, *ՀԱԲ*, հ. 1, էջ 90, *Քննություն Համշենի բարբառի*, էջ 126:

Այսպիսով՝ քննելով Համշենի բարբառում առկա ծիսապաշտամունքային մի քանի բառեր, կարելի եզրակացնել, որ Համշենի բարբառի հարուստ ու բազմաշերտ բառապաշարի մեջ, որպես յուրահատուկ աշխարհընկալման և յուրօրինակ լեզվամտածողության արտահայտություն, առանձնանում են նաև ժողովրդական ծեսերի և հավատալիքների հետ կապված՝ *մայրումիգ*, *բուրբադնիգ*, *բուբրիգ*, *կուշկուրազ*, *ալելուք*, *ալ* բառանունները:

Khachatryan Hasmik - Several ritualistic-worship words in Hamshen dialect. - The article studies some noteworthy words related to folk rituals and beliefs in the dialect of Hamshen, such as *մայրումիգ* [mayromig] (ladybug), *բուրբադնիգ* [burbadnig] (ritual doll), *ալելուք* [aleluq], *ալ* [al], etc.

Хачатрян Асмик — Некоторые слова ритуального значения в диалекте Амшена. -В данной статье нами исследованы некоторые примечательные слова в диалекте Амшена, связанные с народными обрядами и верованиями, например: *մայրումիգը* (*майромиг* – *божья коровка*), *բուրբադնիգը* (*бурбадниг* – *обрядовая кукла*), *ալելուքը* (*алелук*), *ալը* (*айл*) и др.

ՄԱԿՈՒԻ ԽՈՍՎԱԾՔԸ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ

Բարբառային հայերենի՝ ներկայում գործածվող, բայց և դեռևս լիարժեք չուսումնասիրված դրսևորումներից է Մակուի խոսվածքը: Հ.Աճառյանը «Հայ բարբառագիտություն» աշխատության մեջ Խոյի բարբառի տարածման վայրերը ներկայացնելիս նշում է, որ Պարսկաստանի մեջ այն ընդգրկում է Խոյի, Մալմաստի և Մակուի գավառները⁵⁸: Մակայն «Հայոց լեզվի պատմություն» աշխատության մեջ արդեն լեզվաբանը Մակուի խոսվածքը ընդգրկում է Բայազետի բարբառային միավորի կազմում՝ գրելով. «Բայազետի ենթաբարբառը պարունակում է Հին-Բայազետ քաղաքը Արևմտահայաստանում, Կաղզվան, Մակու (Պարսկահայաստանում) և Նոր-Բայազետ՝ Սևանի լճի եզերքը, իր 10 գյուղերով, որոնք Հին-Բայազետի գաղութ են»⁵⁹: Ա.Ղարիբյանը Մակուի խոսվածքը չի հիշատակում, սակայն հավանաբար նկատի ունի Հրազդանի տարածաշրջանում այդ խոսվածքի դրսևորումները, երբ գրում է. «Ախտայի շրջանի խոսվածքները կազմում են նույնպիսի անցումային օղակ Արարատյան բարբառից դեպի Բայազետի ենթաբարբառը»⁶⁰: Ռ.Բաղրամյանը Մակուի բարբառային միավորը համարում է Արարատյան բարբառի ենթաբարբառ՝ Բայազետի, Նորատուսի և Արծափի ենթաբարբառների հետ⁶¹: Բարբառագետը վկայում է, որ Սևանի տարածաշրջանի մոտ տասը գյուղում «խոսվում է Մակվի ենթաբարբառով, որը, սակայն, միօրինակ չէ»⁶²: Գեղամավան գյուղի խոսվածքը նկարագրելով՝ Ռ.Սաղաթելյանը այն համարում է Արարատյան և Մուշի, Ուրմիայի, Նոր Բայազետի բարբառների խառնումով առաջացած մի յուրօրինակ խոսվածք՝ չհիշատակելով Մակուի խոս-

⁵⁸ Տե՛ս **Հ.Աճառյան**, Հայ բարբառագիտություն,- Ուրուագիծ և դասավորություն հայ բարբառների, Մոսկուա-Նոր Նախիջևան, 1911, էջ 288:

⁵⁹ **Հ.Աճառյան**, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, Ե., 1951, էջ 329:

⁶⁰ **Ա.Ղարիբյան**, Հայ բարբառագիտություն, Ե., 1953, էջ 87:

⁶¹ Տե՛ս **Ռ.Բաղրամյան**, Հայերեն բարբառներ. Սևանա լճի ավազանի խոսվածքները, Ե., 1972, էջ 3:

⁶² Նշվ. աշխ., էջ 10:

վածքը⁶³: Այսպիսով, Մակուի բարբառային միավորի վերաբերյալ արտահայտվել են տարբեր կարծիքներ, որոնք հիմնականում փաստական նյութով կամ հետազոտություններով հիմնավորված չեն, բարբառային հայերենի այդ դրսևորումը որևէ կերպ ներկայացված չէ Գ.Ջահուկյանի բազմահատկանիշ դասակարգման աղյուսակներում, և փաստորեն նրա դիրքը հայ բարբառների շարքում վերջնականապես ճշգրտված չէ⁶⁴:

Ինչևէ, Ռ.Բաղրամյանը, փաստելով, որ Մակուի «ենթաբարբառը չի ուսումնասիրված. գիտական տառադարձությամբ նմուշներ էլ չկան» ⁶⁵ , Սևանի տարածաշրջանի խոսվածքների հետազոտության արդյունքում նկարագրել է Մակուի խոսվածքի հնչունաքերականական հիմնական հատկանիշները⁶⁶, որոնք հանգում են հետևյալին:

Մակուի խոսվածքի ձայնավորներն են՝ *ա, օ, օ, է, ի, ու, օ, ք*: Քմային օ ձայնավորը հանդիպում է փոխառյալ բառերում, նաև հայերեն որոշ բառերում՝ հիմնականում առանց որևէ օրինաչափության, ինչպես՝ *մինօկ, հօշկ, զօտիկ, դօն, ժօք* և այլն: Ըստ Ռ.Բաղրամյանի՝ օ-ն «Բայագետին ու Վանին էլ հատուկ կոկորդային *ա* է»⁶⁷: Խոսվածքն ունի *է, ո* երկբարբառային հնչյուններ:

Մակուի խոսվածքն ունի շնչեղ ձայնեղ բաղաձայններ, որոնք գործառում են միայն բառասկզբում՝ *բ՛ընեղ, գ՛օմէշ, դ՛անակ, ձ՛ախ, ջ՛առթել*: Բառասկզբի ձայնավորից առաջ հաճախ տեղի է ունեցել ձայնեղ հագագի հավելում՝ *հ՛անգաջ, հ՛ուրիշ, հ՛առտ*: Բառամիջում և բառավերջում ձայնեղ հպականների ու հպաշփականների դիմաց, բացառությամբ որոշ դիրքերի, խոսվածքն ունի շնչեղ խուլեր, ինչպես՝ *սուրփ, յերք, բ՛առց, վեռչ, գ՛աքաթ, ձ՛իք, օթ, օց, խափել* և այլն:

⁶³ Տե՛ս Ռ.Սաղաթեյան, Գեղամավանի խոսվածքը և նրա դիրքը «ուս» և «կը» ճյուղերի բարբառների միջև, Բանբեր Երևանի համալսարանի, Ե., 2002, 3, էջ 154-158, Ռ.Սաղաթեյան, Տեղաշարժեր Գեղամավանի խոսվածքում, Հայագիտական հանդես, Ե., 2017, 2, էջ 35-46:

⁶⁴ Մակուից եկածների (հիմնականում 1829-1830թթ. կազմակերպված գաղթի ընթացքում) սերունդներով բնակեցված են տարբեր բնակավայրեր նաև Աբովյանի, Հրազդանի և այլ տարածաշրջաններում: Թերևս Մակուի խոսվածքի առկա բոլոր դրսևորումների ուսումնասիրության դեպքում հնարավոր կլինի որոշել բարբառային այս միավորի հիմնական հատկանիշները, փոխհարաբերությունները այլ բարբառների հետ և դիրքը հայերենի բարբառների շարքում:

⁶⁵ Ռ.Բաղրամյան, նշվ. աշխ., էջ 93:

⁶⁶ Տե՛ս Ռ.Բաղրամյան, նշվ. աշխ., էջ 93-115:

⁶⁷ Տե՛ս նշվ. աշխ., էջ 93:

Հետնալեզվային պայթականները առաջին շարքի ձայնավորներից առաջ քմայնանում են (*գ'իշեր, կ'եխտ, ք'երթել*), որոշ դեպքերում էլ՝ վերածվում հպաշփականի՝ *ջ'իշեր* (զիշեր), *ճէս* (կես), *չէնի* (քենի), *չիթ* (քիթ): Հպաշփականները բաղաձայնից առաջ վերածվում են շփականի՝ *մէշկ, հ'իշնել*: Ինչպես վկայում է Ռ.Բաղրամյանը, Մակուի՝ Սևանի ավազանում դրսևորվող խոսվածքների մեծ մասում *հ*-ի դիմաց առկա է *խ*՝ *ախ, խազալ, խամբրել, խավ, խերու* և այլն⁶⁸:

Խոսվածքին բնորոշ են նաև երկբարբառների պարզեցումը (*էծ, ալուր, լուս, գ'էղ*), ձայնավորների անկումը բազմավանկ բառերի նախաշեշտ վանկերում (*չարչրանք, պարտկել, սօրվել, օլրել, յեռուն*), բառասկզբում երկբարբառային ձայնավորից առաջ բաղաձայնական տարրի հավելումը (*յեփ, յերք, վոտ, վոոց*):

Եր, ներ հոգնակերտներից բացի, խոսվածքում գործառում են սահմանափակ տարածում ունեցող այլ հոգնակերտներ ևս՝ *ք, իք, անիք, էրք, դանք, անք, րանք (ք'էնիք, մարթիք, կընանիք, տըղէրք, ախպըրդանք, ձ'իանք, գ'եղրանք)*:

Մակուի խոսվածքը ներգոյական հոլով չունի, հոլովական այդ իմաստն արտահայտվում է հայցական հոլովով կամ սեռականով և *մէջ* կապով: Սեռական և տրական հոլովները տարբերվում են որոշիչ հոդի գործածությամբ, հայցական հոլովը իրի առման դեպքում նման է ուղղականին, իսկ անձի առման դեպքում՝ տրականին, սովորական են բացառականի *ց*-ով ձևերը, բայց գործածվում են նաև *է*-ով ձևեր:

Խոսվածքում գոյականների մեծ մասը ենթարկվում է Ի հոլովման, մյուս հոլովումների ենթարկվում են առանձին բառախմբեր: Ոջ հոլովման ենթարկվում է միայն *տէր* բառը (*տիրոջ*): Յ հոլովման են ենթարկվում ոչ միայն *էնք, ոնք* մասնիկներով, այլ նաև

իք - ով ավարտվող բառերը՝ *Մընացէնց, ք'եռոնց, կընանիքոց, Թիֆլիսցոնց*: Ձայնավորով ավարտվող անձնանունների սեռականը ձևավորվում է *յ*-ով՝ *Բաղէյ, պապէյ, աղէյ, Կարօյ*:

Մակուի խոսվածքն ունի *ը* և *ն* որոշիչ հոդեր, որոնք գործածվում են ուղղական, տրական և հայցական հոլովներում: Երբեմն կարող է դրսևորվել հոդի

⁶⁸ Տե՛ս նշվ. աշխ., էջ 98:

կրկնակի կիրառություն՝ *ձ'ինք, կունք*: Ռ.Բաղրամյանը վկայում է, որ որոշյալ գոյականը կարող է նաև անհոդ գործածվել⁶⁹: Անորոշ հոդը ունի նախադաս կիրառություն: Ստացականությունը դրսևորվում է *ս, տ* հոդերով, որոնք կարող են դրվել բոլոր հոլովների վրա:

Անձնական դերանունների առաջին և երկրորդ դեմքերի տրական հոլովի ձևերը Մակուի խոսվածքում ունեն *ի* կամ *իկ* հավելված (*ընձի/կ/, քեզի//չեզի, մեզի* և այլն), գործածվում է նաև *քե* կարճ ձևը: Ցուցական դերանուններն ունեն պարզ և հավելվածավոր կազմության ձևեր՝ *ես, էսի, էտ, էտի, էն, էնի*, որոնց թեք հոլովաձևերից են՝ *ըստա, ըստու, ըստրա, ըտա, ըտու, ըտրան, ընդա, ընդրու, ընդու, ըստուց, ըտուց, ընդուց* և այլն: Իբրև անձերին վերաբերող հարցահարաբերական դերանուն հանդես են գալիս *վոր* և *վոն* ձևերը՝ *վի, վին, վիր, վորի, վիրնից, վիրնօվ* թեք ձևերով:

Բայն ունի Ե և Ա խոնարհումներ: Ներկա ժամանակը կազմվում է *ուս//ըս* վերջավորությամբ անկատար դերբայով՝ *ասըս//ասում եմ*: Խոսվածքն ապառնի դերբայ չունի: Վաղակատար դերբայն ունի *ր*-ով վերջավորություն՝ *տըվէր, ասէր*, հարակատարի վերջավորությունն է *ուկ՝ մացուկ, տարուկ*: Խոսվածքն ունի պատճառական *ցըն* ածանց (*վէրացընէլ, կէրցընէլ*): Օժանդակ բայի ձևերն են՝ *եմ, ես, ա, ենք//ենք, էք//էք, են և ի, իր, էր, ինք//ինք, իք, ին*: Թերևս տրամաբանական շեշտն ընդգծելու մղումով՝ օժանդակ բայը երբեմն կրկնվում է՝ *Նոր եմ բ'երէր եմ*: Ենթադրական եղանակի ձևերը կազմվում են *կ(ը)* եղանակիչով, հարկադրականի եղանակիչն է *պըտի//բըդի*:

Գեղարքունիքի մարզում Մակուի խոսվածքը գործածական է Գեղամավան, Դդմաշեն, Զովաբեր, Լճաշեն, Ծաղկունք, Նորաշեն, Չկալովկա, Վարսեր բնակավայրերում, Սևան քաղաքի որոշ թաղամասերում⁷⁰: Մեր դիտարկումներով՝ ներկայում բոլոր բնակավայրերին բնորոշ հնչյունական հատկանիշներից են քմայնացած *ա* ձայնավորի գործածությունը փոխառյալ և բնիկ որոշ բառերում, միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ռ*-ից և *է*-ից առաջ բաղաձայնական տարրի (համապատասխանաբար՝ *վ* և *յ*) առկայությունը, իսկ բազմավանկ

⁶⁹ Տե՛ս նշվ. աշխ., էջ 103:

⁷⁰ Այս մասին տե՛ս նաև Ռ.Բաղրամյան, նշվ.աշխ., էջ 9-11:

բառերի սկզբում *n*-ի, *ե*-ի դիմաց *o* և *է* ձայնավորների գործածությունը, *է, n* երկբարբառային հնչյունների առկայությունը, բազմավանկ բառերի միջնավանկի ձայնավորի սղումը, բառամիջում և բառավերջում ձայնեղների դիմաց շնչեղ խուլերի գործածությունը, բառասկզբում ձայնավորից առաջ ձայնեղ հագագի հավելումը, փոխառյալ բառերի սկզբում *ղ*-ի դիմաց *կ*-ի կամ *լ*-ի առկայությունը: Բոլոր խոսվածքներն ունեն վերջնականկային շեշտ:

Դիտարկվող խոսվածքների համար ընդհանուր քերականական իրողություններից են՝ *եր, ներ* հոգնակերտների հետ նաև այլ հոգնակերտների գործածությունը, բացառական հոլովի ձևավորումը *ց*-ով, ներգոյական հոլովի բացակայությունը և դրա իմաստի արտահայտումը հայցականով, ինչպես նաև սեռականով և *մեջ* կապով, անձնական դերանվան տրական հոլովի ձևերում հավելական *ի* հնչյունի առկայությունը, վաղակատար դերբայի ձևավորումը *ր* -ով, օժանդակ բայի *եմ, ես, ա, ենք, էք, են և ի, իր, էր, ինք, իք, ին* հաստատական, *չեմ, չես, չի, չենք, չեք, չեն և չի, չիր, չէր, չինք, չիք, չին* ժխտական ձևերի առկայությունը, պատճառականի *ցըն* ածանցի գործածությունը, բայական *չ* ածանցի բացակայությունը և այլն:

Մի շարք հատկանիշներ էլ տարածված են խոսվածքների մեծ մասում: Այսպես, Գեղամավանի, Դդմաշենի, Զովաբերի, Լճաշենի, Նորաշենի, Չկալովկայի, Վարսերի խոսվածքները բառասկզբում ունեն շնչեղ ձայնեղներ, մինչդեռ Ծաղկունքի խոսվածքը ներկայացնում է խառը պատկեր, երբ հին բառաշերտում ավելի հաճախ գործածվում են ձայնեղներ, բայց և երբեմն գործառում են շնչեղ ձայնեղներ: Գեղամավանից բացի՝ դիտարկվող բոլոր խոսվածքներում բառամիջում ու բառավերջում խուլերի դիմաց ձայնեղներ հանդես են գալիս երբեմն, մինչդեռ Գեղամավանի խոսվածքում այդ իրողությունը օրինաչափ է: Գեղամավանի, Լճաշենի, Նորաշենի, Չկալովկայի և Վարսերի խոսվածքներում բաղաձայնից առաջ հպաշփականը վերածվում է շփականի, իսկ Զովաբերի և Ծաղկունքի խոսվածքներում այս իրողությունը թեև հանդիպում է, բայց օրինաչափ չէ: Բոլոր խոսվածքներն ունեն *ու* վերջավորությամբ անկատար դերբայ, բայց Զովաբերի և Ծաղկունքի խոսվածքներում անկատարը զուգահեռաբար ունենում է նաև *ըմ*

վերջավորություն, Գեղամավանի խոսվածքում անկատարը ավելի հաճախ ձևավորվում է *ըմ* մասնիկով: Անցյալ կատարյալի ձևերը թե՛ անցյալի, թե՛ ներկայի հիմքերից են կազմվում Դդմաշենի, Ջովաբերի, Ծաղկունքի, Նորաշենի, Չկալովկայի, Վարսերի խոսվածքներում, առավելաբար անցյալի հիմքից են ձևավորվում Գեղամավանի խոսվածքում, սովորաբար ներկայի հիմքից՝ Լճաշենի խոսվածքում: Գնալ, մնալ բայերի անցյալի հիմքի ձևերն են *գ'աց*, *մաց*, միայն Ջովաբերի խոսվածքում սովորական են *գ'ընաց*, *մընաց* հիմքերը:

Մի շարք իրողություններ դիտարկվել են խոսվածքների փոքր խմբում կամ առանձին խոսվածքներում: Այսպես, բառի առաջին վանկում որոշակիորեն շրթնայնացած *ա* ձայնավոր դրսևորվում է Դդմաշենի, Ջովաբերի, Լճաշենի, Չկալովկայի խոսվածքներում: Բառամիջում և բառավերջում շնչեղ խուլերի ապաշնչեղացում առկա է միայն Գեղամավանում: Հետնալեզվային պայթականների քմայնացում դիտարկվում է Ջովաբերում և Լճաշենում, իսկ առաջին շարքի ձայնավորներից առաջ *գ,կ,ք>ջ,ճ,չ* անցում՝ Գեղամավանում և Դդմաշենում: Հինհայերենյան *հ*-ի դիմաց *խ* ունեն Դդմաշենը, Ջովաբերը, Լճաշենը, Նորաշենը, Չկալովկան և Վարսերը, *հ*-ի դիմաց *հ* ունեն Գեղամավանը և Ծաղկունքը: Բառասկզբում *հո*-ի դիմաց *ֆո* ունի Ծաղկունքը՝ *ֆոդ* (հոտ), *ֆորթ* (հորթ), *ֆոր* (հոր): Բաղիյուսական հարադրություններում *ու* շաղկապի դիմաց *ը* է հանդիպում Գեղամավանում և Ջովաբերում (*դ'արը դ'աշտ*, *կերըխում*): Գեղամավանում, Դդմաշենում, Նորաշենում, Չկալովկայում արձանագրվել է հատուկ տեղանունների հոլովում Ա հոլովիչով (*Հ'երեվնա*, *Քվ'ռա*, *Սեվ'անա*), ձայնավորով ավարտվող անձնանունների սեռական հոլովը *յ*-ով է ձևավորվում Դդմաշենի, Ծաղկունքի, Նորաշենի, Չկալովկայի խոսվածքներում (*Մակույ*, *Տիկոյ*): Դդմաշենում և Վարսերում հանդիպում են բացառականի՝ նաև *է*-ով ձևեր: Գեղամավանի և Ծաղկունքի խոսվածքներում ներգոյական հոլովի իմաստը հաճախ արտահայտվում է տրական հոլովով (*կողխօզին* աշխատել եմ. *ճաշարանին* հաց ինկ ուղղմ): Գեղամավանում և Լճաշենում գործածվում են անձնական դերանունների տրական հոլովի նաև *իկ*-ով ձևեր (*ընձիկ*, *քեզիկ*, *մեզիկ*, *ձ'եզիկ*), Լճաշենում՝ նաև կրճատ *քե* ձև: Ով դերանվան դիմաց Գեղամավանը, Դդմաշենը, Ջովաբերը, Չկա-

լովկան և Վարսերը ունեն *վորը* ձևը (սեռ. և տր.՝ *վիր, վիրը*), Լճաշենն ունի *վոն* ձև (սեռ. և տր.՝ *վիր, վին*), *օվ* ձև ունեն Ծաղկունքը (սեռ. և տր.՝ *ուվ*) և Նորաշենը (սեռ. և տր.՝ *վիր, վիրը/վին*): Հարակատար դերբայը *ուկ* վերջավորությամբ է ձևավորվում Դդմաշենի, Լճաշենի, Նորաշենի, Չկալովկայի և Վարսերի խոսվածքներում, *աձ* վերջավորությամբ՝ Գեղամավանում, *աժ-ով*՝ Ջովաբերում և Ծաղկունքում: Նորաշենի խոսվածքում չ ժխտական մասնիկը կարող է դրվել դերբայի վրա (*չէլէր ա//չի հ'էլէ, չըտըված//չի տըված, չուզում ի//չի ուզում*): Գեղամավանում և Դդմաշենում *ն* բայածանցը երբեմն բացակայում է ներկայի հիմքից կազմվող ձևերում (*լըցում ա, հըլէս*): Ջովաբերի խոսվածքում գործածվում է *կօ* հաստատական մասնիկը (*կօ բ'էրէր էս*), իսկ Լճաշենի խոսվածքում հոգնակի ստացականությունը կարող է արտահայտվել անձնական դերանվան տրական հոլովաձևի հետադաս կիրառությամբ՝ *թևը մէ* (մեր թևերը), *հ'ուսը մէ* (մեր ուսերը):

Միավորվելով ընդհանուր շատ հատկանիշներով՝ դիտարկվող խոսվածքները, այսպիսով, հանդես են բերում նաև զգալի առանձնահատկություններ: Նկատելի է, որ որոշակիորեն մերձավոր են Գեղամավանի և Ծաղկունքի խոսվածքները⁷¹՝ մյուսներից տարբերվելով իրենց համար ընդհանուր էական այնպիսի հատկանիշներով, ինչպիսիք են հինհայերենյան *հ*-ի դիմաց *հ*-ի առկայությունը, ներգոյական հոլովի իմաստի արտահայտությունը տրական հոլովով, հարակատար դերբայի *աձ*//*աժ* վերջավորությունը: Մյուս կողմից՝ թերևս պետք է արձանագրել, որ բոլոր բնակավայրերն էլ, ըստ բնակիչների ծագումնաբանության, ներկայացնում են որոշակիորեն խառը պատկեր, և այս կամ այն հատկանիշը կարող է ենթաշերտային իրողություն լինել: Օրինակ, Գեղա-մավանի խոսվածքում բառամիջի և բառավերջի դիրքերում շնչեղ խուլերի դիմաց պարզ խուլերի, ինչպես նաև նույն դիրքերում պարզ խուլերի դիմաց ձայնեղների գործածությունը պետք է

⁷¹ Ի դեպ, **Ռ.Բաղրամյանը**, նկատելով, որ Սևանի տարածաշրջանի տասը գյուղում խոսվում է Մակվի ենթաբարբառով, սակայն առկա են որոշակի ներքին տարբերություններ, նույն խմբում է ընդգրկում Գեղամավանի և Ծաղկունքի խոսվածքները՝ հիմք ընդունելով դրանց՝ մյուս խոսվածքներից տարբերվող հետևյալ հատկանիշները. հինհայերենյան *հ*-ի դիմաց նույն հնչյունի առկայություն, անկաստարի *ըմ* վերջավորության գործածություն, առաջին շարքի ձայնավորներից առաջ *գ, կ, ք > ջ, ճ, չ* անցում (տե՛ս նշվ. աշխ., էջ 10-11):

համարել Ալաշկերտի շերտի ազդեցություն: Գեղամավանի, Ծաղկունքի և Զովաբերի խոսվածքներում հարակատար դերբայի ձևավորումը *աձ//աժ* մասնիկով թերևս կարող է Խոյի բարբառի ազդեցության հետևանք լինել: Դոմաշենի, Զովաբերի, Լճաշենի, Չկալովկայի խոսվածքներում շրթնայնացած *ա* ձայնավորի դրսևորումները ամենայն հավանականությամբ Վանի կամ Բայազետի բարբառների ենթաշերտի առկայությունն են վկայում: Առաջին շարքի ձայնավորներից առաջ հետնալեզվային պայթականների քայնացման երևույթը Զովաբերի խոսվածքում պետք է պայմանավորել Վանի, իսկ Լճաշենի խոսվածքում՝ Դիադինի ենթաշերտերի առկայությամբ: Վերլուծական կազմության դեպքում Ժխտական մասնիկի՝ դերբայի վրա դրվելու հատկանիշը Նորաշենի խոսվածքին կարող է անցած լինել Մշո բարբառից և այլն:

Ամփոփելով ասվածը՝ պետք է արձանագրել, որ Սևանի տարածաշրջանի բնակավայրերում Մակուի խոսվածքը ներկայանում է այնպիսի հատկանիշների զուգորդումներով, որոնք հիմնականում հիշեցնում են Բայազետի և Արարատյան բարբառները: Թերևս խոսվածքի բոլոր դրսևորումների ուսումնասիրությամբ և բարբառային այլ միավորների հետ համեմատական քննությամբ հնարավոր կլինի ամբողջացնել ընդհանուր պատկերը և բազմահատկանիշ դասակարգման սկզբունքները կիրառելով՝ որոշել Մակուի խոսվածքի դիրքը հայ բարբառների շարքում:

Viktor Katvalyan - Maku Speech in the Region of Gegharkunik.- In the settlements of Sevan region, Maku speech exists in a combination of such features which are mostly peculiar to the dialects of Bayazet and Ararat. Perhaps, with the study of all the manifestations of this speech and comparing it with other dialectal units, it will become possible to have an overall view of Maku speech and determine its position in the Armenian dialects by the help of the principles of multi-feature classification.

Հակոբյան Ֆրիդա (Հայաստան,
ԳԱԱ լեզվի ինստիտուտ)

ԿՈՐՊՈՒՄԱՅԻՆ ԼԵՉՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ

Կորպուսային լեզվաբանությունը ձևավորվել է քսաներորդ դարի երկրորդ կեսին՝ դառնալով ընդհանուր լեզվաբանության արագ զարգացող երիտասարդ ուղղություններից մեկը: Դրա նպատակն է լեզվական կորպուսների՝ մեծ, ներկայացուցչական, պիտակավորված, առավելապես էլեկտրոնային եղանակով հասանելի տեքստային հենքերի ստեղծումը: Տեքստային կորպուսների փաստական հսկայական նյութը հետազոտողին հնարավորություն է տալիս կատարել լեզվական իրողությունների ամբողջական և առավել լիակատար գիտական ուսումնասիրություն: Տեքստային հենքերը ստեղծվում են լեզվաբանական հետազոտություններ կատարելու նպատակով և լեզվական փաստերի քննության հարցում կարող են օգտակար լինել լեզվաբանության բոլոր բաժինների համար: Ըստ այդմ՝ կորպուսային լեզվաբանության կիրառական ոլորտները շատ լայն են, քանի որ լեզվական կորպուսներն ունեն ինչպես տեսական-լեզվաբանական, այնպես էլ գործնական-կիրառական հսկայական նշանակություն: Դրանց օգնությամբ կարող ենք *բացահայտել լեզվի կրած փոփոխությունները այդ լեզվի պատմական զարգացման ողջ ընթացքում՝ դրան զուգահեռ կատարելով լեզվական փաստերի համաժամանակյա քննություն*: Կորպուսների միջոցով կարող ենք *ուսումնասիրել լեզվի տարբերակային ձևերն ու տարածական տարբերակները*: Դրանք նշանակալից դեր ունեն առհասարակ *լեզվաբանության բոլոր բաժինների համար*: Մեծ է կորպուսների կարևորությունը նաև *միջգիտակարգային հետազոտությունների* բնագավառում:

Կորպուսային լեզվաբանության՝ իբրև լեզվաբանական առանձին ուղղության, ձևավորումից տասնամյակներ առաջ էլ լեզվաբանները փորձառական նյութեր էին հավաքում և դրանց հիման վրա կատարում լեզվի բառային կազմի ուսումնասիրությունն ու նկարագրությունը: Արդի փուլում կորպուսները

շարունակաբար համալրվում-հարստացվում են տեքստերով՝ հնարավոր դարձնելով բառապաշարի իմաստային տեղաշարժերի, ինչպես նաև դրա համաժամանակյա վիճակի առավել ամբողջական և համակողմանի քննությունը: Տեքստային կորպուսները լեզվի բառապաշարի ուսումնասիրության կարևորագույն միջոցներից են: Օրինակ՝ փորձ է արվել պարզել՝ Նոր Զելանդիայում գործածվող անգլերենը բառապաշարային ավելի շատ ընդհանրություններ ունի ամերիկյա⁷² թե՞ բրիտանական անգլերենների հետ: Դրա համար նախ պետք է ճշտել, թե արդյոք այդ լեզվում. ա) գործածվում են բացառապես ամերիկյան կամ բրիտանական անգլերենների բառերը, բ) ամերիկյան և բրիտանական անգլերենների բառերը հավասարաչափ են գործածվում, գ) երկու տարբերակների բառերի հավասարաչափ գործածության դեպքում կա՞ն խոսքաշարեր, որոնցում նախապատվությունը տրվում է մի տարբերակի բառապաշարի գործածությանը:

Ըստ այդմ՝ ընտրվել է հինգ հասկացություն, որոնք բրիտանական և ամերիկյան անգլերեններում արտահայտվում են տարբեր բառերով, ինչպես՝ flashlight (AmE) – torch (BrE), freeway (AmE) – motorway (BrE), sidewalk (AmE) – pavement (BrE), elevator (AmE) – lift (BrE), diaper (AmE) – nappy (BrE): Australian Corpus of English (ACE) կորպուսում այս բառերը փնտրելիս և դրանց գործածության հաճախականության ցանկը կազմելիս երևում է, որ flashlight (AmE) – torch (BrE) զույգից թե՛ բրիտանական, թե՛ ամերիկյան տարբերակները Նոր Զելանդիայում գործածվող անգլերենում գրեթե հավասարապես գործածական են: Freeway (AmE) – motorway (BrE) զույգից բրիտանական տարբերակը չի գործածվում, իսկ ամերիկյան տարբերակի գործածությունը բավական հաճախադեպ է: Sidewalk (AmE) – pavement (BrE) զույգում գերակշռում է բրիտանական տարբերակի գործածությունը: Elevator (AmE) – lift (BrE), diaper (AmE) – nappy (BrE) զույգերից միայն բրիտանական տարբերակներն են գործածվում է: Վերոնշյալ լեզվական փաստերը վկայում են, որ ընտրված բառազույգերում բրիտանական տարբերակի բառերը երկու անգամ առավել հաճախ են կիրառվում Նոր Զելանդիայում գործածվող անգլերենում⁷²: Ինչ խոսք, սրանք մասնավոր օրինակներ են և դեռևս

⁷² Տե՛ս Nesselhauf N., *Corpus Linguistics: A Practical Introduction*, 2005.

բավական չեն եզրակացնելու համար, թե այդ լեզվում ընդհանրապես առավել գործածական են բրիտանական անգլերենի բառերը:

Տեքստային հենքերը կարող են հաջողությամբ ծառայել ինչպես բառապաշարի քննությանը, այնպես էլ քերականական իրողությունների ուսումնասիրությանը: Օրինակ՝կորպուսի միջոցով փորձ է արվել պարզել բրիտանական և ամերիկյան անգլերեններում մակբայների գործածությունը ներկա վաղակատար և անցյալ անորոշ ժամանակաձևերի հետ: Ինչպես հայտնի է, ամերիկյան անգլերենում *just, already, yet, ever, before* մակբայների հետ անցյալ անորոշ ժամանակաձև է գործածվում, իսկ բրիտանական անգլերենում՝միայն ներկա վաղակատար: Վերոնշյալ քերականական կանոնը ստուգելու համար պետք է պարզել, թե արդյոք. ա) բրիտանական անգլերենում այդ մակբայների հետ անցյալ անորոշ ժամանակաձև չի գործածվում, բ) ամերիկյան անգլերենում այդ մակբայների հետ միայն անցյալ անորոշ ժամանակաձև է գործածվում, թե կարող է նաև ներկա վաղակատար գործածվել, գ) եթե ամերիկյան անգլերենում այդ մակբայների հետ անցյալ անորոշ և ներկա վաղակատար ժամանակաձևերը հավասարաչափ են գործածվում, ո՞րն առավել հաճախական կիրառություն ունի:

Ընտրվել է բրիտանական անգլերենի FLOB և ամերիկյան անգլերենի Frown կորպուսները: Այսպես՝FLOB տեքստային հենքում *just* մակբայի գործածության օրինակներից երևում է, որ այն վեց բայի հետ գործածվել է ինը անգամ, ընդ որում՝ բայերը այս մակբայի հետ գործածվելիս ութ անգամ դրվել են ներկա վաղակատար ժամանակաձևով և միայն մեկ անգամ՝ անցյալ անորոշով: Սրանից եզրակացնում ենք, որ բրիտանական անգլերենում գրեթե միշտ *just* մակբայի հետ գործածվելիս բայը դրվում է ներկա վաղակատար ժամանակաձևով: Ամերիկյան անգլերենի Frown կորպուսում հանդիպում ենք *just* մակբայի գործածության հինգ դեպքի, որոնցից չորս անգամ *just* մակբայի հետ գործածվելիս բայը դրվում է անցյալ անորոշ ժամանակաձևով և միայն մեկ անգամ՝ ներկա վաղակատարով: Սրանից էլ

եզրակացնում ենք, որ ամերիկյան անգլերենում *just* մակբայի հետ գործածվելիս բայը գրեթե միշտ դրվում է անցյալ անորոշ ժամանակաձևով⁷³:

Ինչպես տեսանք, լեզվական կորպուսների միջոցով կարելի է ուսումնասիրել լեզվի բառապաշարը, **քերականական համակարգը**: Դրանք կարող են հաջողությամբ օգտագործվել նաև **լեզվառճական** քննություն կատարելիս՝ նպաստելով ինչպես տարբեր ժանրային պատկանելություն ունեցող տեքստերի, այնպես էլ որևէ հեղինակի լեզվի և ոճի ամբողջական ուսումնասիրությանը:

Վերջին տասնամյակներում մեծապես կարևորվում է տեքստային կորպուսների դերը հատկապես բառարանագրական աշխատանքների դյուրացման, բառարաններ կազմելու և բառահոդվածներ մշակելու գործում: Եթե նախկինում ամբողջական բառահոդվածը կազմվում էր բացառապես բառարանագրի կողմից, հիմա կարելի է մեքենական եղանակով որոշել գլխաբառը, տեսնել տվյալ բառի՝ տարբեր իմաստներով գործածությունը հարյուր հազարավոր տեքստերում, ավելացնել օրինակ-նախադասությունները: Պակաս կարևոր չէ բառերի գործածության համատեքստը ներկայացնելու հնարավորությունը: Եթե տպագիր բառարաններում օրինակ-նախադասությունները սահմանափակ ծավալ ունեն և որոշ դեպքերում բառի իմաստը լավ չի հասկացվում, էլեկտրոնային բառարանում կարելի է տեսնել բառի գործածության համատեքստը:

Ընդհանուր առմամբ՝ կորպուսները բառարանագրության մեջ օգտագործվում են երկու հիմնական եղանակներով: Մի դեպքում բառարանը կազմվում է բացառապես կորպուսներում եղած լեզվական նյութի հիման վրա: Այս առումով հիշատակության է արժանի անգլերենի COBUILD բառարանը: Մյուս դեպքում՝ բառիմաստները բացատրվում և դրանց գործածության օրինակները բերվում են կորպուսում ընդգրկված տեքստերից:

Ավելորդ է նշել, թե որքան մեծ կլինեն լեզվական կորպուսների կիրառության կարևորությունը արդի հայ բառարանագրության մեջ: Օրինակ՝ կորպուսում ընդգրկված էլեկտրոնային տեքստերից մեքենական եղանակով կարելի է կազմել **հաճախականության առցանց բառարան**, ժանրային տարբեր պատկանելություն

⁷³ Տե՛ս **Nesselhauf N.**, *Corpus Linguistics: A Practical Introduction*, 2005.

ունեցող տեքստերում պարզել բառերի գործածության հաճախականությունը, որոշել, թե լեզվի պատմական զարգացման տարբեր փուլերում իմաստային որ դաշտի բառերն են առավել հաճախ գործածվել:

Ինչպես նշեցինք, տեքստային հենքերի միջոցով կարելի է ոչ միայն կատարել լեզվական փաստերի համաժամանակյա և տարաժամանակյա քննություն, այլև ուսումնասիրել գրական լեզվի երկու տարբերակները: Օրինակ՝ արևելահայերեն-արևմտահայերեն զուգադրական կորպուսի առկայության դեպքում հաջող կերպով կիրականացվեր լեզվական նյութի զուգադրական քննություն:

Այս համատեքստում պետք է հատկապես կարևորել *հայերենի բարբառագիտական կորպուսի* ստեղծման անհրաժեշտությունը: Ի տարբերություն մյուս կորպուսների, որոնցում գրավոր տեքստերը գերակշռում են, բարբառագիտական կորպուսում պետք է մեծ թիվ կազմեն բարբառախոսների բանավոր խոսքը ներկայացնող տեսաձայնագրությունները: Համակարգչային ծրագրերի օգնությամբ սահմանափակ ծավալ և ընդգրկում ունեցող նախկին փորձառական հնչյունաբանական հետազոտությունների փոխարեն կարելի է կատարել բանավոր խոսքի համակարգչային մշակում: Ընդգրկած մեծածավալ նյութի և շարունակական համալրման շնորհիվ՝ հայերենի բարբառագիտական կորպուսի ստեղծումը կնպաստի հայերենի բարբառների առավել ամբողջական ուսումնասիրությանը:

Ընդհանուր առմամբ՝ կորպուսներն ունեն ինչպես տեսական-լեզվաբանական, այնպես էլ գործնական-կիրառական նշանակություն: Օրինակ՝ դրանք բավական հաճախ օգտագործվում են ուսուցողական նպատակներով (օտար լեզուների դասավանդում): Ուսումնական շատ ձեռնարկներում լեզվաբանները նախընտրում են օրինակները բերել տվյալ օտար լեզվի կորպուսից: Էլեկտրոնային թարգմանության արդի փուլում էլ առավելապես կարևորվում է *զուգադրական կորպուսների* դերը, որոնք ընդգրկում են մի քանի լեզուներով գրված տեքստեր: Բավական է նշել, որ բոլոր առաջատար թարգմանական համակարգերը բազմալեզվյան թարգմանություններ կատարելիս օգտվում են զուգադրական կորպուսներից:

Չնայած տեքստային հենքերը, որպես կանոն, ստեղծվում են լեզվաբանական ուսումնասիրություններ իրականացնելու նպատակով, սակայն գիտության տարբեր բնագավառների ներկայացուցիչները շատ հաճախ օգտագործում են դրանցում եղած հարուստ նյութը միջգիտակարգային հետազոտություններ կատարելիս: Կորպուսները, որոնք պարունակում են ժանրային տարբեր պատկանելություն ունեցող գրավոր և բանավոր տեքստեր, հաջողությամբ օգտագործվում են **հոգելեզվաբանության** բնագավառում: Դրանց ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս խոսքային օրինակներով պարզել այդ լեզուն կրող մարդկանց հոգեբանությունը, աշխարհայացքը, ազգային դիմագիծն ու ավանդույթները: Տեքստային հենքերն օգտագործվում են նաև **հանրալեզվաբանության** մեջ, սակայն այս բնագավառում կատարվող աշխատանքները փորձնական բնույթ են կրում: Դրանք հիմնականում վերաբերում են հասարակության տարբեր խավերի լեզվագործածության ուսումնասիրությանը:

Լեզուն ու մշակույթը անխզելիորեն կապված են միմյանց, ուստի հենքում եղած տեքստերի քննությունից շատ բան կարող ենք իմանալ ժողովրդի ու նրա մշակույթի մասին: Ավելին՝ երկու լեզուների տեքստային հենքերի զուգադրական քննությունից կարող ենք զուգահեռներ անցկացնել այդ լեզուները կրող ժողովուրդների մշակութային տարբերությունների մասին: Օրինակ՝ բրիտանական անգլերենի LOB տեքստային հենքի բառապաշարը ամերիկյան անգլերենի Brown տեքստային հենքի հետ համեմատելիս տեսնում ենք, որ բազմաթիվ բառեր իմաստային ու գործառական նկատելի տարբերություններ ունեն բրիտանական և ամերիկյան անգլերեններում: Օրինակ՝ *ճանապարհորդություն* իմաստային խմբին պատկանող բառերը բրիտանական անգլերենի համեմատությամբ ամերիկյան անգլերենում առավել հաճախ են գործածվում: Սա բացատրվում է այն հանգամանքով, որ Միացյալ Նահանգներն իր տարածքով ավելի մեծ է, քան Մեծ Բրիտանիան:

Ամերիկյան անգլերենում ավելի մեծ թիվ են կազմում հանցագործ աշխարհն անվանող բառերը: Սա էլ պայմանավորված է այն հանգամանքով, որ հանցագործ աշխարհն ԱՄՆ-ում ավելի զարգացած էր: Այսպիսով՝ բրիտանական և ամերիկյան

անգլերենների լեզվական կորպուսների օգնությամբ կարող ենք բացահայտել ամերիկյան և բրիտանական մշակույթների միջև եղած ընդհանրություններն ու տարբերությունները:

Հայ լեզվաբանության մեջ լեզվական կորպուս ստեղծելու ուղղությամբ տարվող աշխատանքները սահմանափակվել են միայն «Արևելահայերենի ազգային կորպուսի»՝ ԱՐԵՎԱԿ-ի⁷⁴ ստեղծմամբ⁷⁵: Որպես լեզվական կորպուս ստեղծելու փորձ՝ կարևոր է, սակայն այն բավարար չէ թե՛ որակական առումով, թե՛ ընդգրկման ծավալով: Սահմանափակ են նաև ԱՐԵՎԱԿ-ի կիրառության ոլորտները, ուստի պետք է կարևորել հայերենի նոր՝ ընդհանրական կորպուսի ստեղծման անհրաժեշտությունը, որը կընդլայնի հայ լեզվաբանության մեջ լեզվական կորպուսների կիրառության ոլորտները՝ նպաստելով հայոց լեզվի լիակատար և առավել ամբողջական ուսումնասիրությանը⁷⁶:

Frida Hakobyan - The applied fields of corpus linguistics. - The aim of the article is to present the applied fields of corpus linguistics. The vast textual material of the corpora makes it possible for a researcher to perform a complete scientific study of linguistic phenomena. Accordingly, the applied fields of corpus linguistics are very broad, since linguistic corpora have both theoretical-linguistic and practical-applied enormous significance.

Фрида Акопян - Прикладные области корпусной лингвистики. - Цель статьи представить прикладные области корпусной лингвистики. Огромный текстовый материал позволяет исследователю провести полное научное исследование лингвистических явлений. Соответственно, применяемые поля корпусной лингвистики очень широкие, поскольку лингвистические корпусы имеют как теоретико-лингвистическое, так и практическое применение огромного значения.

⁷⁴ http://www.eanc.net/EANC/search/?interface_language=am:

⁷⁵ **Հակոբյան Ֆ.**, «Արևելահայերենի ազգային կորպուսի կառուցվածքը և ընդգրկումը», Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական գիտական համալսարանի Բանբեր. Երևան, 2018, 1 (44), էջ 382:

⁷⁶ **Հակոբյան Ֆ.**, Հայերենի ընդհանրական կորպուսի կազմության սկզբունքները, «Ջահուկյանական ընթերցումներ» միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2017, էջ 177:

**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՅԻՆ
ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ**

Լեզվի կառուցվածքային նկարագրությունն ու լեզվական միավորների կադա-
պարումը բուռն զարգացում ապրեցին XX դարում, իսկ նոր դարաշրջանում հա-
մակարգչային ծրագրերի՝ լեզվաբանության մեջ տարբեր նպատակներով տեսա-
կան ու գործնական կիրառությունը, ինչպես նաև բնական լեզվի համակարգչային
մշակումն առավելապես կարևորեցին լեզվական համակարգի բոլոր միավորների
լիակատար ձևային նկարագրությունը:

Ձևային նկարագրության նպատակը բառաքերականական իմաստների և
դրանց արտահայտման ձևերի՝ ծրագրավորման տարբեր լեզուների համար հաս-
կանալի այնպիսի նկարագրությունն է, որի հիման վրա ստեղծված համացանցային
կամ համակարգչային ծրագիրը կատարում է բնական լեզվի ձևաիմաստային
յուրաքանչյուր միավորի համակարգչային մշակում:

Հայ լեզվաբանության մեջ կատարվել են լեզվի կադապարային կամ կառուց-
վածքային նկարագրության ուսանելի փորձեր, որոնցից պետք է նշել Գ. Ջահուկ-
յանի «Ժամանակակից հայոց լեզվի տեսության հիմունքները»⁷⁷, Է. Աղայանի «Ժա-
մանակակից հայոց լեզվի հոլովումն ու խոնարհումը»⁷⁸, Լ. Հովսեփյանի «Գրաբարի
բառակազմությունը»⁷⁹, Ս. Գալստյանի «Ածանցները և ածանցումը հայերենում»⁸⁰, Ռ.

⁷⁷ **Ջահուկյան Գ.**, *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները*, Երևան, Հայկական ՄՍՀ ԳԱ
հրատ., 1974:

⁷⁸ **Աղայան Է.**, *Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը*, Երևան, Հայկական ՄՍՀ ԳԱ
հրատ., 1967:

⁷⁹ **Հովսեփյան Լ.**, *Գրաբարի բառակազմությունը*, Երևան, Հայկական ՄՍՀ ԳԱ հրատ., 1987:

⁸⁰ **Գալստյան Ս.**, *Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում*, Երևան, 1978:

Ուռուտյանի «Ժամանակակից հայերենի անվանական բառափոխման ձևային նկարագրությունը»⁸¹ և մի շարք այլ գործեր:

Այնուամենայնիվ, կառուցվածքային կամ կադապարային նկարագրությունը միայն մասնակիորեն կարող է ձևային համարվել, քանի որ լեզվի ձևային նկարագրության բուն նպատակը ոչ միայն լեզվական կառուցվածքի լիակատար նկարագրությունն է, այլև այդ նկարագրության հիման վրա ստեղծված բնական լեզուն մշակող զանազան ծրագրերն ու համակարգերը:

Քանի որ ցանկացած լեզվի հիմնական ատաղձը այդ լեզվի բառապաշարն է, ուստի լեզվի ձևային նկարագրությունն ամենից առաջ ենթադրում է բառապաշարի ձևային նկարագրություն: Հայերենի բառապաշարի ձևային նկարագրությունն ասելով պետք է նկատի ունենալ բառամիավորների բառակազմական և քերականական հատկանիշների ձևային նկարագրությունը, որի հիման վրա հնարավոր կլինի ստեղծել տեքստում գործածված բառաձևերի՝ բառակազմական, ձևաբանական վերլուծության այնպիսի ծրագրեր, որոնք հնարավորություն կտան մեքենական եղանակով առանձնացնել հիմնական ու երկրորդական, բառակազմական և բառահարաբերական ձևությունները:

Բառի ձևությամբ կազմի համակարգչային վերլուծությունը ենթադրում է բաղադրյալ բառի նախ՝ ձևաբանական (հիմք, վերջավորություն), ապա՝ բառակազմական (արմատ, ածանց) վերլուծություն:

Հայերենի բառակազմության ձևային նկարագրության համար ամենից առաջ պետք է մշակել հայերենի ձևային նկարագրության ընդհանրական սկզբունքներ՝ ուսումնասիրելով արդի լեզվաբանության մեջ ընդունված լեզվի ձևային նկարագրության սկզբունքներն ու եղանակները:

Բառակազմության ձևային նկարագրության նպատակը պետք է համարել արդի հայերենի բառապաշարի կազմի մեջ մտնող հազարավոր բառերի բառակազմական վերլուծությունը, դրանց բաղադրիչների առանձնացումը, բարդ բառերի դեպքում՝ բարդության բաղադրիչների իմաստային կապերի

⁸¹Ուռուտյան Ռ., *Ժամանակակից հայերենի անվանական բառափոխման ձևային նկարագրությունը*, «Լեզվի և ոճի հարցեր», VI, Երևան, Հայկական ՄՄՀ ԳԱ հրատ., 1982, էջ 134-185:

բացահայտումը և ներկայացումը: Բառամիավորների բառակազմական բնութագիրը ներկայացնող էլեկտրոնային մեծածավալ շտեմարանի, համացանցային և համակարգչային տարբեր ծրագրերի ստեղծումը կարող է համարվել բառակազմության ձևային նկարագրության հեռանկարային կիրառություն:

Էլեկտրոնային շտեմարանի միջոցով բառերի բառակազմական բնութագիրը ներկայացնելու հնարավորությանն առաջին անգամ անդրադարձել ենք ժամանակակից հայերենի բառապաշարի համակարգչային շտեմարանի կազմության սկզբունքները մշակելիս՝ առաջարկելով բառամիավորների բառակազմական բնութագիրը ներկայացնել բառակազմական դաշտում⁸²: Նշենք, որ Մ. Սարգսյանի և Շ. Ասիլբեկյանի կողմից ևս փորձ է արվել կատարել հայերենի ածանցավոր կազմությունների ձևային նկարագրություն և ստեղծել համապատասխան շտեմարան: Շտեմարանի կազմման աշխատանքները նախատեսված է եղել իրականացնել երկու փուլով. նախ՝ կատարել ածանցավոր, ապա՝ բաղադրյալ կազմությունների ձևային նկարագրություն: Աշխատանքն անավարտ է մնացել, իսկ «Հայերենի բառապաշարի ձևային նկարագրման և համապատասխան էլեկտրոնային շտեմարանի ստեղծման սկզբունքներն ու խնդիրները» հոդվածումը հեղինակները սահմանափակվել են միայն իրենց նախագծի ամփոփ բնութագիրը ներկայացնելով⁸³: Մինչդեռ ժամանակակից հայերենի բառակազմության ձևային նկարագրությանն առնչվող խնդիրները և դրանց լուծման հնարավոր տարբերակները քննված չեն:

Բառաբարդումն ու ածանցումը՝ իբրև բառապաշարի հարստացման և նոր բառերի ստեղծման հիմնական եղանակներ, մշտապես եղել են տարբեր լեզվաբանների ուշադրության կենտրոնում: Լեզվի մյուս բաժինների համեմատությամբ բառակազմությունն առավել շատ է գրավել հետազոտողների ուշադրությունը կառուցվածքային նկարագրության տեսակետից, քանի որ հայերենի կաղապարային

⁸² Տե՛ս **Հակոբյան Ֆ.**, *Հայերենի բառապաշարի համակարգչային շտեմարանի կառուցման ուրվագիծ*, Բանբեր Երևանի համալսարանի. Երևան, 2014, 144.2. (№ 3), էջ 60-70:

⁸³ Տե՛ս **Ասիլբեկյան Շ., Սարգսյան Մ.**, *Հայերենի բառապաշարի ձևային նկարագրման և համապատասխան էլեկտրոնային շտեմարանի ստեղծման սկզբունքներն ու խնդիրները*, Ջահուկյանական ընթերցումներ, ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ, Երևան, «Ասողիկ» հրատ., 2014, էջ 7:

կամ կառուցվածքային նկարագրության մասնավոր փորձերը վերաբերում են հենց բառակազմությանը: Հայ լեզվաբանության մեջ բառակազմության կառուցվածքային-կադապարային նկարագրության օրինակելի գործեր կարելի է համարել Լ. Հովսեփյանի «Գրաբարի բառակազմությունը» և Ս. Գալստյանի «Ածանցները և ածանցումը հայերենում» ուսումնասիրությունները:

Առաջնորդվելով կառուցվածքային լեզվաբանության սկզբունքներով՝ Լ. Հովսեփյանը հանգամանալից կերպով կատարել է դասական գրաբարի ածանցման և բառաբարդման կադապարների վերլուծություն՝ բացահայտելով բաղադրյալ բառերի բաղադրիչների փոխկապակցվածությունն ու կառուցվածքը: Գրաբարի բառակազմական կադապարները ներկայանելու համար դիմել է պայմանական սիմվոլների կիրառության՝ *s*-սկզբնահիմք, *a*-ածանց, *f*-քերականական մասնիկ կամ թեքույթ, *j*- հոդակապ, *c*-շաղկապ, *p*-նախդիր և այլն⁸⁴:

Հայերենի բառապաշարի կադապարման օրինակելի մյուս աշխատանքը Ս. Գալստյանի «Ածանցները և ածանցումը հայերենում» աշխատությունն է, որտեղ լեզվաբանը կատարում է ածանցների համաժամանակյա ուսումնասիրություն կառուցվածքային մակարդակում: Ս.Գալստյանը ևս բառերի կառուցվածքային-կադապարային կազմությունը ներկայացնում է պայմանական նշանների կիրառմամբ՝ ըստ բաղադրիչների խոսքամասային պատկանելության: Քննելով երկանդամ, եռանդամ, քառանդամ կառույցները՝ Ս. Գալստյանը հայերենի խոսքի մասերը նշանակում է լատինական տառերով՝ *N*-գոյական, *A*-ածական, *V*-բայ: Պայմանական սիմվոլներով է նշանակում նաև գոյականական (*R1*), ածականական (*R2*), մակբայական (*R3*), բայական (*R4*) ածանցները: Որպես հոդակապի ցուցիչ գործածում է + նշանը, անհոդակապավոր բարդությունները կադապարում է առանց այդ նշանի⁸⁵:

Վերոնշյալ աշխատանքները, ունենալով տեսական մեծ արժեք բառակազմության կադապարային նկարագրության տեսակետից, չեն կարող համարվել հայերենի բառակազմության լիակատար ձևային նկարագրություն:

⁸⁴ Տե՛ս **Հովսեփյան Լ.**, *Գրաբարի բառակազմությունը*, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1987:

⁸⁵ Տե՛ս **Գալստյան Ս.**, *Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում*, Երևան, 1978:

Ամենից առաջ դրանք չեն արտացոլում հայերենի բառապաշարի արդի վիճակը: Մի դեպքում կադապարվում է դասական գրաբարի բառապաշարը, մյուս դեպքում՝ կադապարային նկարագրության են ենթարկվում մամուլից ու գեղարվեստական գրականությունից քաղված փոքրաթիվ բառեր, ընդ որում՝ կարևորվում են ածանցավոր կազմությունները: Ձևային նկարագրության ժամանակ պետք է նկատի ունենալ արդի հայերենի գործուն բառապաշարը՝ չսահմանափակվելով փոքրաթիվ բառաքանակով և մեծապես կարևորելով հատկապես վերջին շրջանում ստեղծված նոր բառերի ու նորաբանությունների բառակազմական վերլուծությունը: Դա հնարավորություն կտա բացահայտել նոր բառերի ստեղծման հիմնական եղանակները: Այնուամենայնիվ, բառապաշարի ձևային նկարագրության ժամանակ պետք է կարևորել ոչ թե բառաքանակը, այլ նկարագրվելիք բառերի կազմությունը: Ըստ այդմ՝ կառանձնացվեն կազմությամբ *պարզ կամ արմատական և բաղադրյալ* բառերը: *Բաղադրյալ բառերի* կազմի մեջ են մտնում համադրական, վերլուծական բարդությունները և ածանցավոր կազմությունները: Ընդհանուր առմամբ՝ բարդությունների, ածանցավոր կազմությունների բառակազմական վերլուծությունն ու նկարագրությունն առավել նպատակահարմար է կատարել աստիճանական ստորակարգությունների միջոցով, քանի որ դա հնարավորություն կտա առավել համակարգված ուսումնասիրել հայերենի բառակազմական օրինաչափությունները՝ դրանք ներկայացնելով տրամաբանական հաջորդակա- նությամբ:

Կարծում ենք՝ նախապես պետք է կարևորել համադրական բարդությունների և ածանցավոր կազմությունների ձևային նկարագրությունը, քանի որ դրանց բաղադրիչները հանդես են գալիս միասնաբար և ունեն մեկ ընդհանուր բառային շեշտ:

Համադրական բարդությունների կազմի մեջ մտնող կցական և իսկական բարդությունների նկարագրությունը միմյանցից կտարբերվի՝ պայմանավորված դրանց բաղադրիչների՝ միմյանց նկատմամբ ունեցած իմաստային, ձևաբանական և շարահյուսական տարբերություններով: Այսպես՝ կցական բարդություններում, թեև բացադրիչները միասնաբար են հանդես գալիս, սակայն պահպանում են իրենց

իմաստային, ձևաբանական-շարահյուսական անկախությունը: Հետևաբար բառակազմական վերլուծության և նկարագրության ժամանակ պետք է կարևորել դրանց կազմության եղանակը. տվյալ կցական բարդությունը կազմվել է տարբեր տիպի հարադրություններից, շարահյուսական կապակցություններից (հատկացուցիչ-հատկացյալ, ենթակա-ստորոգյալ և այլն), թե՞ բառի կրկնությամբ:

Իսկական բարդություններում, ի տարբերություն կցականների, բաղադրիչների շարահյուսական կապը մթագնած է, քանի որ դրանք կորցրել են իրենց իմաստային և ձևական անկախությունը: Առավել խորքային քննություն կարող է համարվել բաղադրիչների շարահյուսական կապերի բացահայտումը, բարդության առաջին՝ բաղադրիչ-գոյականի արտահայտած հոլովական և կապական իմաստների քննությունը:

Վերլուծական բարդություններում, ի տարբերություն համադրականների, բաղադրիչները հանդես են գալիս անջատաբար, հետևաբար վերլուծական բարդությունների նկարագրության ժամանակ պետք է նկատի ունենալ, թե որ խոսքի մասին պատկանող բառերի հարադրությամբ է կազմված տվյալ բարդությունը:

Ածանցավոր կազմությունների նկարագրության ժամանակ պետք է տալ ամբողջական տեղեկություն ածանցի մասին՝ խմբավորելով ածանցներն ըստ ձևի և իմաստի հարաբերության (համանուն, հոմանիշ, հականիշ), ծագման (բնիկ, փոխառյալ), բառակազմական գործունեության (կենսունակ, անկենսունակ), դիրքի (նախածանց, վերջածանց), ձևակազմական հատկանիշի (գոյականակերտ, ածականակերտ, մակբայակերտ, բայական):

Հայերենի բառակազմության կառուցվածքային նկարագրությանը նվիրված աշխատանքներում հետազոտողները սահմանափակվել են միայն բառի կազմում հանդես եկող հիմնական, երկրորդական ձևույթների և բարդության ձևաբանական կաղապարների՝ սիմվոլներով նշանակմամբ: Օրինակ՝ կառուցվածքային տեսակետից՝ *լրագրավաճառություն*, *մրցանակ*, *հիվանդոտ*, *կործանարար* բառերի ձևաբանական կաղապարներն այսպիսին կարող են լինել՝ NNVR₁, VR₁, AR₂, VR₂, ձևային նկարագրությունը՝ այսպիսին՝

<<< լր > N + (+) գր > N + (+) վաճառ > V > + ություն > N (S_x)

<<մրց> V + անակ > A (S_x)

<<հիվանդ> A + ոտ > A (S_x)

<<կործան> V + արար > A (S_x) [հողակապը արտացոլված չէ]

Եթե կառուցվածքային նկարագրության տեսակետից նման բանաձևումները կարող են ինքնանպատակ թվալ, ձևային նկարագրության տեսակետից բաղադրիչների՝ տարբեր սիմվոլներով նշանակումն ու ներկայացումը մեծապես կարևորվում է, քանի որ դրանք անհրաժեշտ են ծրագրային ալգորիթմներ ստեղծելու համար:

Հետևաբար անհրաժեշտ է մշակել բառի ձևակազմական բոլոր միավորների՝ համապատասխան սիմվոլներով նշանակման ամբողջական և անհակասական համակարգ, որը հնարավորություն կտա ձևայնացնել ոչ միայն բառի հիմնական և երկրորդական ձևությունները, ձևաբանական կաղապարները, այլև կատարել բարդության բաղադրիչների իմաստային, ձևաբանական ու շարահյուսական կապերի վերհանում և ձևայնացում:

Բառակազմության ձևային նկարագրությունը կունենա տեսական հսկայական նշանակություն: Այսպես՝ բառապաշարի ձևային նկարագրության տեսքով հավաքված հսկայական փաստական նյութը օգտակար կլինի այն լեզվաբանների համար, որոնք նպատակ ունեն համաժամանակյա և տարաժամանակյա հայեցակետերով քննել հայերենի բառակազմությունը, բացահայտել նոր բառերի ստեղծման հիմնական օրինաչափությունները, կոնկրետ բառաքանակով առանձնացված ունենալ հայերենի բոլոր պարզ կամ արմատական բառերը, ածանցավոր բառերը և երկբաղադրիչ ու բազմաբաղադրիչ բարդությունները: Այն կօժանդակի նաև օտարազգի հայագետներին, որոնք հետաքրքրվում են հայերենի բառակազմությամբ՝ իբրև նոր բառերի ստեղծման հիմնական միջոց կամ կատարում են գուգադրական-տիպաբանական աշխատանք:

Բառակազմության ձևային նկարագրության գործնական արժեքը նույնչափ մեծ է, քանի որ դա կունենա երկակի կիրառություն: Մի դեպքում, համակարգչային տեխնիկան օգտագործելով, կարելի է ստեղծել էլեկտրոնային մեծածավալ շտեմարան, որի բառային հենքը կընդգրկի հազարավոր բառերի բառակազմական վերլու-

ծություն, կունենա բառերի, դրանց կազմում եղած հիմնական և երկրորդական ձևայինների որոնման հնարավորություն: Դա նշանակում է՝ ցանկացած արմատի կամ ածանցի որոնման ժամանակ կհայտնվեն դրանցով կազմված բոլոր պարզ, բարդ և ածանցավոր բառերը: Այլ կերպ ասած՝ էլեկտրոնային շտեմարանը կներկայացնի արդի հայերենի բառապաշարի բառամիավորների բառակազմական բնութագիրը:

Ինչպես նշեցինք, բարդությունների, ածանցավոր կազմությունների բառակազմական բնութագիրն առավել նպատակահարմար է ներկայացնել աստիճանական ստորակարգությունների միջոցով՝ համապատասխան տրամաբանական հաջորդականությամբ:

Այս մոտեցմամբ՝ տղամարդ իսկական և օր ու գիշեր բառի բառակազմական բնութագիրը շտեմարանում կարելի է ներկայացնել հետևյալ կերպ՝

Տղամարդ

- Շարահյուսական կապակցության եղանակ
 - Որոշիչ-որոշյալ (տղամարդ > տղա-մարդ)
- Ձևաբանական կաղապար
 - N+N
 - Կցական
 - Համադրական
 - Բարդություն
 - Բաղադրյալ բառ

Օր ու գիշեր

- Գոյականական
 - Անվանական
 - Հարադրություն
 - Վերլուծական
 - Բաղադրյալ բառ

Էլեկտրոնային շտեմարանից բացի՝ ձևային նկարագրության հեռանկարային կիրառություն կարելի է համարել համացանցային և համակարգչային այնպիսի ծրագրերի ստեղծումը, որոնք լեզվական կորպուսներում եղած տեքստերում գործածված բառերը մեքենական եղանակով կենթարկեն բառակազմական վերլուծության՝ առանձնացնելով բառի կազմում հանդես եկող հիմնական և երկրորդական ձևությունները:

Այսպիսով՝ հայերենի բառակազմության ձևային նկարագրությունը և համապատասխան էլեկտրոնային շտեմարանի կամ համակարգչային ու համացանցային զանազան ծրագրերի ստեղծումը կարելի է համարել հայերենի լիակատար ձևային նկարագրության առաջին և կարևորագույն փուլերից մեկը, քանի որ դա կնպաստի ինչպես բառակազմության համակողմանի և առավել լիակատար ուսումնասիրությանը, այնպես էլ հայերենի համակարգչային մշակմանը:

Frida Hakobyan - The problems of the formal description of the Armenian word formation. - The article is devoted to the formal description of the Armenian word formation. In the Armenian linguistics, there were attempts of the description of word formation. However, they can not be considered a formal description since a natural language processing tool has not been created based on them. It is noted that the formal description of the Armenian word formation and the creation of the corresponding electronic database or web and computer programs can be considered one of the most important stages of the Armenian formal description. It will greatly contribute to the computational processing of the Armenian language.

Фрида Акопян - Проблемы формального описания Армянского словообразования. - Статья посвящена формальному описанию армянского словообразования. В армянской лингвистике были попытки описания словообразования. Однако их нельзя считать формальным описанием, поскольку на их основе не создан инструмент обработки естественного языка. Отмечается, что формальное описание армянского словообразования и создание соответствующей электронной базы данных или веб и компьютерных программ можно считать одним из

важнейших этапов формального описания армянского языка. Это будет в значительной степени способствовать вычислительной обработке армянского языка.

ԱՌԱՎՈՏ ԵՎ ԵՐԵԿՈ ԲԱՌԵՐԻ ԻՄԱՍՏՍՅՈՒՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Մարդու աշխարհընկալման կարևորագույն բաղադրիչներից մեկը ժամանակն է, որի մասին պատկերացումներն իրենց արտացոլումն են գտել լեզվական միավորներում: Ժամանակի փուլային ընկալման մեջ առաջնայինը օրվա շրջափուլն է, որի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս բացահայտելու մարդու և բնության փոխհարաբերությունն ու մարդու գիտակցության դերն այդ փոխհարաբերության մեջ: Եթե օրվա շրջափուլը բնական երևույթ է, որը մարդու գիտակցությունը պարզապես արձանագրում է, ապա նրա տրոհումը տարբեր հատվածների (կամ պահերի) պայմանավորված է մարդու գիտակցությամբ և ընկալմամբ ⁸⁶ , և այդ տրոհմանը բնորոշ է որոշակի ազգամշակութային երանգավորում:

Օրվա շրջափուլը, ըստ լույսի և մթնի հակադրության, բաժանվում է երկու հատվածի՝ ցերեկ և գիշեր⁸⁷: Դեռևս շատ վաղուց նկատվել է, որ ցերեկը գիշերվա, և գիշերը ցերեկվա են փոխվում աստիճանաբար, իսկ լուսավորության տարբեր աստիճաններն ուղղակիորեն պայմանավորված են արեգակի տեղաշարժերով ու դիրքով: Վերջիններս էլ հիմք են դարձել օրվա հատվածների և պահերի ավելի մանրամասն տրոհման:

Ցերեկվա և գիշերվա միջև առանձնանում են միջանկյալ հատվածներ՝ առավոտ և երեկո, որոնք բնութագրվում են համապատասխանաբար գիշերվա մթից դեպի ցերեկվա լույսը և հակառակը աստիճանական անցումով: Այսպիսով, օրվա մեկ շրջափուլը գլխավորապես ներկայացվում է *առավոտ-ցերեկ-երեկո-գիշեր* հիմնական «բանաձևով»:

⁸⁶ Տե՛ս *Толстой Н.И.* Времени магический круг (по представлениям славян) // Логический анализ языка: язык и время / отв. ред. Н.Д. Арутюнова, Т.Е. Янко. – М., 1997, էջ 17:

⁸⁷ Տե՛ս **Հեքեքյան Ն.**, *Գիշեր և ցերեկ բառերի իմաստային վերլուծություն (լեզվամշակութաբանական հայացք)*, ՀՀ ԳԱԱ, Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Երևան, 2017:

Սակայն տեսնելու, առարկաները զանազանելու և գործունեություն իրականացնելու մարդու պահանջից բխել է լուսավորության փոփոխությունների ավելի մանրամասն տրոհման անհրաժեշտություն:

Հիմք ընդունելով երկնակամարում արեգակի շարժմամբ և դիրքերով պայմանավորված լուսավորվածության տարբեր աստիճանները՝ օրվա շրջափուլում կարելի է առանձնացնել հետևյալ հատվածները և դրանց համապատասխան բառային միավորներ⁸⁸.

- ▲ **մթության ժամանակ՝** *գիշեր, մութ, աղամամութ, ցայգ, կեսգիշեր.*
- ▲ **արևածագին նախորդող և լույսի աստիճանական ուժեղացման ժամանակ՝** *մթնշաղ, աղջամուղջ, մութնուլույս, նախալուսաբաց (հզվդ.) լուսադեմ, արշալույս, այգ, այգաբաց, այգալույս, լուսաբաց, լուսածագ, վաղորդայն.*
- ▲ **արևը ծագելու ժամանակ՝** *արևածագ, արևագալ, արևաբաց, արևացայթ, ծեգ (ժող.), աղօթարան.*
- ▲ **ցերեկային լուսավորության ժամանակ՝** *առավոտ, կեսօր, ցերեկ, լույս-ցերեկ. օր, տիվ,*
- ▲ **արևը մայր մտնելու ժամանակ՝** *մայրամուտ, արևամուտ, իրիկնադեմ, իրիկնամուտ,*
- ▲ **արևամուտին հաջորդող և լույսի աստիճանական նվազման ժամանակ՝** *վերջալույս, մութնուլույս, մթնշաղ, աղջամուղջ, ճրագվառոց, երեկո/իրիկուն (ժող.), իրիկնապահ, իրիկնաժամ, իրիկնավերջ, գիշերամուտ:*

Առավոտն ու երեկոն որոշակի հստակ ժամանակահատվածի հետ չեն կապվում ⁸⁹ , այդ պատճառով էլ դրանց սահմանների որոշման հիմքերն ու մեկնաբանությունները տարբեր են տարբեր մշակույթներում⁹⁰:

Հայերեն բացատրական բառարաններում *առավոտ* բառը մի դեպքում նույնացվում է արևածագի հետ, մյուս դեպքում՝ օրվա լուսավոր հատվածի այն

⁸⁸ Սրանց իմաստների քննությունը կատարելիս օգտվել ենք հայերենի բացատրական և հոմանիշների բառարաններից:

⁸⁹ Ի տարբերություն սրանց՝ օրվա խիստ որոշակի պահեր են կեսօրն ու կեսգիշերը (համապատասխանաբար ժ. 12 .00 և 00.00), և հոդվածում դրանց բառային արտահայտությունները չեն քննվի:

⁹⁰ Այս մասին տե՛ս **Ն. Հեքեքյան**, նշվ. հոդվածը:

մասի, որը տևում է արևածագից մինչև կեսօր: Այսպես՝ «օրվա այն ժամանակը, երբ արեգակը ծագում⁹¹ է»⁹² «ցերեկվա սկիզբը՝ արևածագի՝ արևագալի ժամանակը»⁹³, «օրուայ այն ժամանակը, երբ արեգակը ծագում է, արևագալի՝ արևածագի ժամանակը»⁹⁴, «այգ, սկիզբն տունջեան. արևագալ»⁹⁵ և «օրուայ այն մասը, որ տևում է արևածագից մինչև կեսօր, հակադրութեամբ կեսօրից մինչև արեգակի մտնելու ժամանակին» [ՀԲԲ], «արևածագից մինչև կեսօր ընկած ժամանակը» [ԺՀԲԲ], «ցերեկվա առաջին մասը մինչև կեսօր» [ԱՀԲԲ]:

Անմիօրինակություն է նկատվում նաև *երեկո*-ի բառարանային մեկնաբանություններում: Բացատրական չորս բառարաններում դրսևորված են չորս տարբեր մոտեցումներ. բառը բացատրվում է՝ ա) մութն ընկնելու ժամանակով, իսկ դա արևամուտից մինչև հորիզոնի տակ արևի թաքնվելն է՝ «մութն ընկնելու ժամանակը, արեգակը դեպի արևմուտք խոնարհվելուց մինչև մութն ընկնելը. իրիկուն» [ՀԲԲ], բ) մի դեպքում՝ որպես «արևի մայրամուտի ժամանակը», մյուս դեպքում՝ «օրվա վերջին մասը արևի մայր մտնելուց մինչև գիշերվա սկիզբը» [ԺՀԲԲ] (ընդ որում բերված բնագրային օրինակները որևէ կերպ չեն նպաստում այդ բացատրությունների ընկալմանը), գ) մի դեպքում՝ որպես «մութն ընկնելու ժամանակը», մյուս դեպքում՝ «օրվա վերջին մասը՝ արևամուտից մինչև կեսգիշեր» [ԱՀԲԲ] (ըստ էության, սրանք նույն ժամանակահատվածն են մատնանշում), դ) մի դեպքում՝ որպես ցերեկվա մաս, նրա վերջին հատված, որը նաև գիշերվա սկիզբ է, մյուս դեպքում՝ որպես մայրամուտի պահ՝ «վերջին մասն տունջեան, և սկիզբն գիշերոյ. ժամ մտից կամ խոնարհելոյ արևու» [ՆՀԲԼ]:

Առավոտ և *երեկո* բառերը, ինչպես տեսնում ենք, հիմնականում բացատրվում են օրվա այլ հատվածների կամ պահերի միջոցով (*արևածագ, արևամուտ, կեսօր, կեսգիշեր, գիշեր, ցերեկվա առաջին մաս, գիշերվա սկիզբ*), ավելի քիչ՝

⁹¹ Այստեղ և այսուհետև մեջբերվող բառիմաստներում շղատառ գրությունը հոդվածագրինն է:

⁹² *Ժամանակակից հայերենի բացատրական բառարան*, ՀՍՍՀ ԳԱԱ, հ. 1-4, Երևան, 1969-1980: Այսուհետև շարադրանքում՝ ԺՀԲԲ:

⁹³ **Ադայան Էդ.**, *Արդի հայերենի բացատրական բառարան*, հ. 1-2, Երևան, 1976: Այսուհետև շարադրանքում՝ ԱՀԲԲ:

⁹⁴ **Մալխասեանց Ս.**, *Հայերեն բացատրական բառարան*, հ. 1-4, Երևան, 1944-1945: Այսուհետև շարադրանքում՝ ՀԲԲ:

⁹⁵ **Աւետիքեան Գ., Միսմելեան Խ., Աւգերեան Մ.**, *Նոր բառգիրք հայկազեան լեզուի*, Երևան, ԵՊՀ հրատ., հ. 1, 1979: Այսուհետև շարադրանքում՝ ՆԲՀԼ:

լուսավորվածության հանգամանքով ու աստիճանով (*մութն ընկնելու ժամանակ, լուսանալու ժամանակ*):

Օրվա շրջափուլի այս երկու հատվածներին առնչվող բառապաշարի քննությունը ցույց տվեց, որ՝

ա) մթից դեպի լույս և լույսից դեպի մութ աստիճանական անցման տարբեր պահերն անվանող բառերը հայերենում հաճախ բացատրվում են հոմանիշներով և ներկայացվում հոմանշային շարքերով: Այսպես՝

- *լուսադեմ, աղամալույս, մթնշաղ, այգ, ծեգ (ժող), այգաբաց, արշալույս, այգալույս, լուսաբաց, լուսածագ, վաղորդայն. արևածագ, արևագալ. առավոտ.*
- *մայրամուտ, արևամուտ, վերջալույս, իրիկնադեմ, իրիկնամուտ. իրիկնապահ, իրիկնաժամ երեկո/իրիկուն. իրիկնավերջ, գիշերամուտ.*

բ) օրվա շրջափուլի միմյանց հակադրվող հատվածներին բնորոշ բառերը հաճախ հականշային գույգեր են կազմում, ինչպես՝ *արշալույս-վերջալույս, արևագալ/արևածագ – արևամուտ/մայրամուտ, առավոտ – երեկո, կեսօր – կեսգիշեր.*

գ) այդ բառերի զգալի մասը բաղադրյալ (երբեմն կադապարային) կազմություններ են (օրինակ՝ *այգաբաց – լուսաբաց - արևաբաց, մայրամուտ-արևամուտ-իրիկնամուտ, լուսադեմ-իրիկնադեմ, այգալույս – վերջալույս*): Եվ սա պատահական չէ, քանի որ նման կազմությունների ներքին ձևը որոշակիացնում է համապատասխան պահի իմաստը: Հմմտ. *իրիկնադեմ / իրիկնամուտ, իրիկնապահ / իրիկնաժամ և իրիկնավերջ* բառերը: *Իրիկնադեմ* և *իրիկնամուտ* բառերի *դեմ* և *մուտ* բաղադրիչները հուշում են, որ այս բառով անվանվում է օրվա այն պահը, երբ ցերեկվա լուսավորվածությունը սկսում է նվազել և արեգակը թեքվում է դեպի հորիզոն («*նախերեկոյան* պահը, *իրիկնամուտ*» [ԺՀԲԲ]), *իրիկնապահ* և *իրիկնաժամ* բառերը նշանակում են «*երեկոյան պահ*, երեկոյան ժա-

մանակ, *երեկոյ»* [ՀԲԲ], *«երեկո»* [ԺՀԲԲ], *«երեկոյան պահ, երեկոյան ժամանակ, երեկո»* [ԱՀԲԲ], իսկ *իրիկնավերջը՝ «երեկոյի վերջին պահը, երեկոյի վերջը»* [ԺՀԲԲ], *«երեկոյան վերջը, գիշերամուտ»* [ԱՀԲԲ]⁹⁶:

դ) լեզվական որոշ միավորներ հավասարապես վերաբերում են օրվա այն երկու հատվածներին, երբ անցում է կատարվում խավարից դեպի լույսը և հակառակը: Օրինակ՝ *մթնշաղ* («մութն ու լոյս, արշալոյսը բացվելու կամ վերջալոյսը վերջանալու ժամանակը» [ՀԲԲ], «մութն ու լույսը, արշալոյսը բացվելու կամ վերջալոյսը վերջանալու ժամանակը» [ԺՀԲԲ], «մութնուլոյս, արշալոյսի կամ վերջալոյսի աղջամուղջ» [ԱՀԲԲ]), *աղջամուղջ* («մութնուլոյս, լուսադեմ», «վերջալոյսին հետևող կիսախավար, մթնշաղ» [ԺՀԲԲ], «առավոտյան և երեկոյան մութնուլոյսը՝ կիսախավարը, մթնշաղ» [ԱՀԲԲ], «մթնշաղ, մութնուլոյս, արշալոյսին նախընթաց, վերջալոյսին հետևող կիսախավարը» [ՀԲԲ]:

Հետաքրքրական է, որ եթե *աղջամուղջ*-ը և *մթնշաղ*-ը (բնորոշ են օրվա հիշյալ երկու հատվածներին էլ) բացատրվում են *մութնուլոյս* բառի միջոցով, որը լավագույնս բնութագրում է օրվա համապատասխան պահերն ըստ լուսավորվածության հատկանիշի, ապա *մութնուլոյս* բառը բառարանագիրներն առավելաբար վերագրում են արևածագին նախորդող հատվածին՝ ընդգծելով մթից դեպի լույս անցումը: Օրինակ՝ *«լոյսը նոր բացվելու ժամանակը, երբ դեռ ոչ լոյս է, ոչ մութ, արշալոյս»* [ՀԲԲ], *«լոյսը բացվելու ժամանակը»*, *«առավոտ շատ վաղ, լույսը դեռ չբացված»* [ԺՀԲԲ]: Միայն մեկ բառարանում է ընդգծվում բառի գործածությունը որպես *«երեկոյան կամ արշալոյսի աղջամուղջ»* [ԱՀԲԲ]:

Նույնքան անհստակ են *արշալոյս*-ի և *վերջալոյս*-ի մեկնաբանությունները: Այսպես, *արշալոյս*-ը բացատրվում է մեկ որպես արևածագին նախորդող հատված (*«լուսաբաց, արևելքի շառագույն լույսը արևածագից առաջ»* [ԺՀԲԲ], *«օրուայ այն ժամանակը, երբ գիշերուայ խաւարից յետոյ լոյսը նոր սկսում է բացվել. առաւօտեան աղօտ լոյսը. աղոթարան»* [ՀԲԲ], *«լոյսը բացվելու ժամանակը* և

⁹⁶ Որոշ շփոթ և անհստակություն է նկատվում բառարաններում *իրիկնադեմ* և *իրիկնապահ* բառերի իմաստների բացատրության մեջ: Ստ. Մալխասյանցի և Էդ. Աղայանի հեղինակած բառարաններում *իրիկնապահ* բառն օգտագործված է *իրիկնադեմ* և *իրիկնամուտ* բառերի բացատրության մեջ, այսինքն՝ նույնացված են երեկոն և նրան նախորդող պահը:

հորիզոնի պայծառ լուսավորումը այդ պահին» [ԱՀԲԲ], «Յետին պահ գիշերոյ՝ որում յաջորդեն նշոյլք լուսոյ առաւօտուն») [ՆԲՀԼ], մե՛կ էլ նույնացվում *արևածագ-*ին՝ ներկայացվովով որպէս նրա հոմանիշ: Այդպէս էլ *վերջալույս*-ը: Հմմտ. «Երկրի այն լուսավորությունը, որը տևում է *արեգակի մայր մտնելուց հետո մինչև մութն ընկնելը*» [ԺՀԲԲ], «Երկրի այն լուսավորությունը, որ տևում է *արեգակի մայր մտնելուց յետոյ, մինչև գիշերը*» [ՀԲԲ] (հաջորդում է մայրամուտին) և «արևը մայր մտնելու և մթնշաղն իջնելու *պահը*» [ԱՀԲԲ] (համընկնում է մայրամուտին): Հոմանիշների բառարանում ևս *վերջալույս*-ի հոմանշային շարքում տեղ են գտել թե՛ *մայրամուտ, իրիկնամուտ* (մայրամուտի պահ) բառերը, թե՛ *մթնշաղն*-ն ու *իրիկնալույս*-ը⁹⁷ (մայրամուտին հաջորդող ժամանակահատված):

Եթե հոմանշային շարքերում բառերի ոչ շատ խիստ ու հստակ սահմանազատումը ինչ-որ չափով ընդունելի է (հոմանիշները մոտ իմաստներ են արտահայտում, իսկ հիշյալ բառերի դեպքում դրանց իմաստային սահմաններն այնքան մոտ են, որ հաճախ շփոթվում կամ նույնացվում են), ապա նույնը չի կարելի ասել այդ բառերի բացատրությունների վերաբերյալ. այստեղ ճշգրտում է անհրաժեշտ:

Հասկանալի է, որ լուսավորության փոփոխությունն աստիճանաբար տեղի ունեցող գործընթաց է, և դժվար է տարբեր պահերի հստակ սահմանները որոշելը, այդ պատճառով էլ թերևս բառերը բացատրելիս նպատակահարմար կլինեք հաշվի առնել նաև արեգակի դիրքը: Գիտական մեկնաբանությամբ՝ արշալույսը և վերջալույսը⁹⁸ այն պահերն են, երբ արեգակը գտնվում է հորիզոնի գծին մոտ (նրանից ցածր), և նրա ճառագայթները, մթնոլորտի վերին շերտերից անդրադառնալով, բոսորագույն են դարձնում երկինքն ու թույլ լուսավորում երկիրը: Այսինքն՝ սրանք արևածագին և արևամուտին անմիջապես նախորդող և հաջորդող պահերն են⁹⁹: Արևածագը կարող է համարվել այն պահը, երբ արեգակն արդեն հորիզոնի գծից վեր է, իսկ այդ պահից սկսած մինչև կեսօր ընկած

⁹⁷ **Սուրիապյան Ա.**, *Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան*, 2-րդ հրատ., Երևան. 2009:

⁹⁸ Ռուսերենում, օրինակ, օրվա այս երկու պահերը նույն բառով են արտահայտվում՝ *заря* (Яркое освещение горизонта перед восходом и после захода солнца. *Утренняя заря. Вечерняя заря.* (Словарь русского языка, том 1, АН СССР, Ин-тут языкознания, М., 1957).

⁹⁹ Թերևս այդ է պատճառը, որ հաճախ նույնացվում են արևածագին ու արևամուտին:

ժամանակահատվածն առավոտը կլինի: Նույն տրամաբանությամբ կարելի է բացատրել նաև մայրամուտը, վերջալույսը և երեկոն:

Օրվա քննվող հատվածներին կամ պահերին բնորոշ որակական բնութագրերը պայմանավորում են համապատասխան բառային միավորների տարբեր ընկալումներն ու զուգորդումները: *Առավոտ* և *երեկո* բառերին բնորոշ չեն այնպիսի հստակ և ընդգծված, խիստ առանձնահատուկ ընկալումներ ու զուգորդումներ, ինչպիսիք հատուկ են գիշերվան և ցերեկվան¹⁰⁰: Դա թերևս բացատրվում է նրանով, որ առավոտը և երեկոն օրվա այդ երկու հիմնական հատվածների մաս են և հաճախ բնութագրվում են գրեթե նույն կամ նմանատիպ հատկանիշներով:

Առավոտվա խորհրդանիշային ընկալումներ

- լուսային՝ *լույս*
- գունային՝ *կապույտ*
- ձայնային՝ *լռություն, շշուկ, զնգոց*
- հատկանշային՝ *պայծառություն*
- խորհրդանիշային արժեք՝ *նոր՝ թարմ սկիզբ*¹⁰¹, *մանկություն և պատանեկություն*

Բնագրային օրինակներ¹⁰²՝ ***Լուսաշող առավոտը*** հաջորդեց ջերմաշունչ գիշերին (Ռ. Աթայան), ***Կապույտ առավոտ*** էր՝ արևի ոսկեգույն հեքիաթ ու անդորր (Ս. Խանգաղյան), Վաղ ***առավոտվա լռությունը*** խախտող զինվորների ոտնաձայներն էին նրա ականջներում (Գ. Գ. Մարկես), Մայիսյան ***առավոտը զնգում*** է իմ մաքուր թոքերի մեջ (Հ. Մաթևոսյան), Բռունցքով մաքրում է նեկտարի պես կոպ ու արտևանունքին նստած ***առավոտվա շշուկներն*** ու բույրերը (Ս. Գալշոյան), Ամառային վարդագեղ արեգակը ավետում էր ***պայծառ առավոտ*** (Բաֆֆի), Հազիվհազ ինձ համար ծագեց ***կյանքի*** մի նոր ***առավոտ***

¹⁰⁰ Տե՛ս ***Հեքեքյան Ն., նշվ. հոդվածը***:

¹⁰¹ Կարելի է ասել, որ առավոտվա այս արժեքով է պայմանավորված *վաղ* ածականի հաճախադեպ գործածությունը *առավոտ* բառի հետ: Ուշ *առավոտ* կապակցության միայն երկու օրինակ է գտնվել Արևելահայերենի ազգային կորպուսում, որոնցից մեկը՝ *բարի ուշ առավոտ*-ը (սոցիալական կայքից), արհեստական կառույց է, քանի որ *բարի առավոտ* արտահայտությունն առհասարակ հայերենին բնորոշ չէ, այլ կազմվել է ռուսերենի նմանողությամբ: Հայերենին բնորոշ է *բարի լույս*-ը:

¹⁰² Բնագրային բոլոր օրինակները ըստ Արևելահայերենի ազգային կորպուսի (<http://www.eanc.net>):

(Ըաֆֆի), Ջորյանը սուզվում է իր մանկության մեջ՝ նորից վերապրելու իր **կյանքի առավոտը**՝ դառն ու քաղցր հուշերով (ԱՐԵՎԱԿ):

Երեկոյի խորհրդանշային ընկալումներ՝

- լուսային՝ մթություն, խավար, մռայլություն
- գունային՝ կապույտ, գորշ
- ձայնային՝ լռություն, աղմուկ
- հատկանշային՝ խորհրդավորություն, խաղաղություն
- խորհրդանշային արժեք՝ ավարտ¹⁰³, ծերություն

Բնագրային օրինակներ՝ Թող լուռ փովի հիմա իմ դեմ **անլույս երեկո** («Գրական թերթ», 04.09.1955), **Երեկոն** տարածում էր յուր **գորշագույն մթությունը** (Մուրացան), **Խորհրդավոր**, թափանցիկ **Երեկոնե՛ր** իմ **կապույտ** (Վ. Տերյան), **Երեկոյի լռության** ու **մթության** մեջ դրանց ձայնն այժմ ավելի ահարկու էր (Ստ. Ջորյան), Յերեկվա խաղաղությանը հաջորդում էր գյուղի **աղմկոտ երեկոն** (Մ. Սարգսյան), Գարնանային **խաղաղ** ու տաք **երեկո** է (Ս. Խանգաղյան), Նա **կյանքի երեկոյին** մոտեցող մի ակնոր, բայց դեռ զվարթ ու ամրակազմ մարդ էր (Հ. Սենկևիչ):

Առավոտվա և երեկոյի այս ընկալումները թեև ընդհանուր առմամբ տիպական են, բայց ոչ քարացած, և օրվա այդ երկու հատվածները կարող են նույն հատկանիշներով բնութագրվել: Մռայլ ու տխուր կարող է լինել ոչ միայն երեկոն, այլ նաև առավոտը, խաղաղությունն էլ կարող է բնորոշ լինել երկուսին¹⁰⁴: Օրինակ՝ Ուշ աշնան **մռայլ երեկո** էր (Արաքս), **Գորշ, մռայլ** ու **տխուր առավոտ** էր (Ա. Չեխով), Մի **խաղաղ առավոտ** էր, մի **տխուր առավոտ** (Հ. Թումանյան), Ու **խաղաղ երեկոն** կարծես Թանձրացավ թախծոտ ու կապույտ մեգում (Գ. Սարյան):

Առավոտ և **երեկո** բառերին բնորոշ են նաև փոխաբերության և անձնավորման վրա հիմնված ընկալումներ: Դրանցից են՝

◆ առավոտը / երեկոն որպես տարածության մեջ շարժվող մի բան

¹⁰³ Երեկոյի այս արժեքով էլ պայմանավորված է *ուշ երեկո* կապակցության հաճախադեպ գործածությունը *վաղ երեկո*-ի համեմատությամբ (ԱՐԵՎԱԿ-ի տվյալներով համապատասխանաբար 354 և 6 գործածություն):

¹⁰⁴ Այս հատկանիշով, սակայն, ավելի հաճախ բնութագրվում է երեկոն: Ըստ ԱՐԵՎԱԿ-ի տվյալների՝ *խաղաղ երեկո* կապակցությունը գրեթե երկու անգամ գերազանցում է *խաղաղ առավոտ*-ին:

Առավոտն եկավ իր հոգսերով ու եռուզեռով (Լ. Տոլստոյ), Այդպես *անցավ առավոտը* և օրվա մեծ մասը (Թ. Դրայզեր), Ձմեռային *առավոտն* ասես երկնքից *զորովեց* ու *ընկավ* քաղաքի վրա (Հ. Խաչատրյան), *Առավոտը մոտենում է*, ծաղիկները բացվում են (Ա. Կուպրին), *Երեկոն եկավ, գնաց* (Մ. Սարգսյան), *Երեկոն իջնում է* խաղաղ (Ստ. Ջորյան), *Երեկոն ընկնելուն պես* քաղաքն ընկղմում է խավարի մեջ.... (Դ. Դոնիկյան), *Երեկոն մոտենում է*. հորիզոնի վրա երևում է ամպի մի թուխ ծվեն (Ստ. Ալաջաջյան)

◆ առավոտը / երեկոն որպես կենդանի արարած

Արևշող *առավոտը* կարծես նրա համար *է ժպտում* (Դ. Դեմիրճյան), *Առավոտը* Ծաղիկների սիրուց *զարթնել* (Օ. Օքրոյան), Խաղաղ *առավոտը խոստանում էր* պայծառ օր (Ստ. Ջորյան), *Երեկոն շնչում էր* կարոտի և սիրո ջերմությամբ... («Ազգ», 21.04.2007), Եվ երբ *երեկոն մեռնում էր* բոցում, Ու իջնում էր պարզ, աստղազարդ գիշեր (Եդ. Չարենց)

◆ առավոտը / երեկոն որպես գետեղարան

Գարնան *առավոտը լցված էր* թռչունների ձվլոցով (Ն. Ջարյան), Մի թե վերջին այս երեկոն, *քնքշանքով լի՝* այս *երեկոն* (Պ. Սևակ):

◆ առավոտը / երեկոն որպես ունեցվածք, արժեք

Ես ուզում եմ ասել միայն, թե ի՛նչ աղմկալի *առավոտներ է ունենում* Սարաշենը (Ստ. Ջորյան), ավելի մեծ բավականություն չկար, քան նրա հետ ժամանակ անց կացնելը, եթե ազատ *երեկո* էի *ունենում* (Վ. Թևեքեյան), Նա այժմ շտապում էր վերադառնալ և ափսոսում էր, որ *երեկոն կորցրեց* (Վ. Քաչա)

◆ երեկոն /առավոտը որպես քող, ծածկոց

Թող լուռ *փովի* հիմա իմ դեմ անլույս *երեկո* («Գրական թերթ», 04.09.1955), Դանդաղ իջնում էր կապույտ *երեկոն* Ու *ծածկում* սար ու դաշտեր (Գ. Մահարի), *Երեկոն ծածկում էր* ավեր քաղաքը (Բ. Վերդյան), Աստղերը վաղուց էին մարել, և *առավոտն* էր *փովել* քաղաքի վրա (Գ. Բես)

◆ երեկոն որպես առաձգականություն ունեցող

.... այդպես **երեկոն երկարում** էր, գուցե խոր գիշեր դառնում (Վ. Գրիգորյան),
Ձմեռվա **երեկոն ձգվում** է անվերջ (Ա. Բակունց)

◆ երեկոն որպես աներևութացող մի բան

Երեկոն մարում էր Արարատյան դաշտում, Երևանի վրա իջնում էր խաղաղ
գիշերը: (Դ. Դեմիրճյան), Թե կապույտ — **ցնդող երեկոները** Եվ գիշերները
ամպաշաղախ՝ Ավելի լավ են, քան առավոտը (Վ. Մուլնեցյան)

◆ երեկոն որպես կշռելի մի բան

Երեկոն ծանրանում է ծառ ու թփի վրա («Գրական թերթ», 27.08.1965), Երեկոն
մոտենում է դանդաղորեն, անապատի **ծանր** ու տաք **երեկոն** (Ստ. Ալաջաջյան)

Այսպիսով, ուսումնասիրությունից պարզվեց, որ՝

- **առավոտ** և **երեկո** բառերը հայերենի բացատրական բառարաններում հիմնականում բացատրվում են օրվա հարակից հատվածների կամ պահերի միջոցով, ավելի քիչ՝ լուսավորվածության հանգամանքով ու աստիճանով. արեգակի դիրքը այդ բացատրություններում չի նշվում.
- հաճախ **առավոտ** և **երեկո** բառերի բացատրությունները տրվում են հոմանիշ բառերի միջոցով, որոնք անվանում են օրվա այդ հատվածներին բնորոշ կամ հարակից պահերը, այդ պատճառով էլ բացատրություններում անհստակություն և անմիօրինակություն կա.
- առավոտն ու երեկոն ունեն խորհրդանշային և պատկերավոր ընկալումներ, որոնք նման են գիշերվա և ցերեկվա համապատասխան ընկալումներին, սակայն չունեն նրանց բնորոշ ցայտունությունը.
- առավոտվա և երեկոյի խորհրդանշային ընկալումները որոշ դեպքերում նույնական են՝ պայմանավորված նրանով, որ օրվա այս երկու հատվածները՝ որպես անցումային փուլեր (լուսից դեպի մթություն և հակառակը), բնորոշվում են նույն կամ նմանատիպ հատկանիշներով.
- երեկոյի ընկալումներն ավելի բազմազան են, քան առավոտինը:

Hekekyan Narine - Semantic Analysis of the Words առավոտ (“Morning”) and երեկո (“Evening”) - The article deals with the semantic structures of the words առավոտ “morning” and երեկո “evening” and the basics of their interpretation in different dictionaries of the Armenian language, synonymous and antonymic relations of words related to these parts of the day, symbolic equivalents (light - dark, blue-gray, beginning-end) and figurative

perceptions (morning and evening as moving objects - առավոտը մոտենում է, երեկոն իջնում է, living beings - առավոտը ժպտում է, երեկոն մեռնում է, the evening as something extensible - երեկոն ձգվում / երկարում, something substantial - երեկոն ծանրանում է):

Экекян Нарине - Семантический анализ слов առավոտ (утро) и երեկո (вечер) –
В статье рассмотрены семантические структуры слов առավոտ “утро” и երեկո “вечер” и основы их толкований в разных словарях армянского языка, синонимические и антонимические отношения слов, относящихся к этим отрезкам дня, символные эквиваленты (свет – темнота, синий-серый, начало-конец) и образные восприятия (утро и вечер как движущиеся предметы - առավոտը մոտենում է, երեկոն իջնում է, живые существа – առավոտը ժպտում է, երեկոն մեռնում է, вечер как нечто растяжимое – երեկոն ձգվում /երկարում է, нечто весомое – երեկոն ծանրանում է):

ՔԱՋ ԲԱՌԻ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ազաթանգեղոսի մոտ (127) Տրդատ արքայի խոսքում ասվում է՝ «քաջութինն հասցե՛ ձեզ ի քաջն Վահագնն»: Ուրեմն, քաջը Վահագնի մակդիրն է՝ նա է երկրային քաջերի դիցաբանական անձնավորումը և առաջնորդը: Իսկ քաջերը միայն քաջ ռազմիկները չեն: Այդպես է կոչվում և առասպելական արարածների մի ամբողջ դաս, նոր հայերեն՝ քաջքեր: Նոր բանահյուսության մեջ քաջքերը, շատ առումներով, կարծես նույնական են վիշապներին ու չար ոգիներին՝ չարքերին¹⁰⁵: Բայց հնում այդպես չի եղել: Եղած նյութի հիման վրա հնարավոր է հետևյալ վերակազմությունը:

Հնդեվրոպական հասարակություններում էական դեր են կատարել սովորաբար գերմանական Männerbund տերմինով կոչվող, իրենց աստծու և իրար հետ երդումով կապված պատանի որսորդ-ռազմիկների ծխական հրոսակախմբերը, որոնց վայրի, դիվական հատկանիշներ են վերագրվել: Սրանց առասպելաբանական արտացոլումներն են, օրինակ, հնդկական Ինդրա և Ռուդրա աստվածների հետևորդ մարուտները և ռուդրաները, սկանդինավյան Օդինի անդրաշխարհիկ զորքը՝ էյնհերիները, իռլանդական Ֆիննի որսորդ-ռազմիկների խումբը՝ ֆիանան ևն¹⁰⁶: Մեծագույն Քաջը՝ Վահագնը, պիտի լիներ առասպելական քաջերի աստվածային առաջնորդը (ինչպես, ասենք, Ռուդրան՝ ռուդրաների)¹⁰⁷:

¹⁰⁵ Քաջքերի վերաբերյալ տե՛ս Ղ. Ալիշան, Հին հավատք կամ հեթանոսական կրոնք հայոց, Վենետիկ 1895, էջ 191-197. Մ. Աբեղյան, Երկեր, հ. Է, Երևան 1975, էջ 85-89. հ. Ը, Երևան, 1985, էջ 193-196. Л. А. Абрамян, первобытный праздник и мифология, Ереван, 1983, с. 143-146. А. Е. Петросян. Армянские духи каджи: образ и название. Вопросы ономастики, 2018, № 1, 51-64. А. Ү. Petrosyan. From Armenian Demonology: the K'ajs. Journal of Indo-European Studies 46 (2018), 206-218:

¹⁰⁶ Հնդեվրոպական Männerbund-ի վերաբերյալ տե՛ս K. Kershaw. The One-Eyed God: Odin and (Indo-) Germanic Männerbünde. Washington D.C. 2001, խնդրի վերաբերյալ նախորդ գրականությամբ:

¹⁰⁷ Männerbund-ի հայկական առասպելաբանական արտացոլումների վերաբերյալ տե՛ս Ա. Պետրոսյան. Հայոց ազգածագման հարցեր ավանդական տվյալների քննության լույսի տակ. Պատմա-բանասիրական հանդես, 2003, 2, էջ 190-198, գրականությամբ: Վահագնի հետևորդ ռազմիկների առնչությամբ հետաքրքիր է նշել, որ ուրարտական դիցարանից էլ հայտնի են

Հնդեվրոպական համատեքստում հայկական Վահագնին առավել մոտ կերպարը հնդկական ամպրոպի աստված Ինդրան է։ Ինդրան իր հիմնական առասպելում հաղթում է Վրտրա օձ-վիշապին և այդ պատճառով հաճախ կոչվում է *Vritrahan* «Վրտրային սպանող» մականունով (այդպես է կոչվել նաև այն ամենը, ինչ հաղթական է իր բնույթով՝ օրինակ, Ագնի, Սոմա, Սաբասվատի աստվածները)։ Այս կերպարի իրանական զուգահեռներն են ավեստ. *Vərəθragna*-ն, հին պրսկ. **Varθragna*-ն կամ **Vrθragna*-ն, պարթև. **Varhragn*-ը, որից է ծագում հենց Վահագն անունը¹⁰⁸։ Իհարկե, հայկական Վահագնի անվան և կերպարի ուղղագիծ համադրությունը հնդկական Ինդրա-*Vritrahan*-ի հետ ճիշտ չէ, քանի որ Վահագնի անունը իրանական փոխառություն է։ Սակայն վաղուց ի վեր նկատված է, որ «Վահագնի երգի» լավագույն, ակներև զուգահեռները ևս ի հայտ են գալիս հնագույն հնդկական հիմներում՝ Վեդաներում¹⁰⁹։ Իսկ Վահագնի ուղեկցորդ քաջերի լավագույն զուգահեռները մարուսները և ռուդրաներն են (սրանք երկուսն էլ հաճախ հանդես են գալիս որպես Ինդրայի զորքեր)¹¹⁰։

Քաջ բառը հին հայերենում ունի մի շարք նշանակություններ՝ «ուժեղակ՝ առաել աջով», «աջող», «աջողակ ուժով», ապա և՝ «կորովի», «հզոր, զորավոր», «կտրիճ», «բարի», «լավ, ընտիր», «ղյուցագն», «հերոս», «ոգիների մի դաս», «դև» ևն, որոնցով հսկայական քանակությամբ բառեր կան կազմված¹¹¹։ Ըստ Հ. Աճառյանի բառի նախնական իմաստն է «լավ», որից զարգացել են մյուս նշանակությունները¹¹²։ Իրոք, հայկական ավանդույթում հենց այդպես՝ «լավ» են անվանում որոշ ոգիներ՝ *մեզանե լավեր, մեզնե աղեկներ, աղեկ մանուկ*¹¹³։ Հատկանշական է, որ այդպես են

գերագույն աստված Խալդիի, ամպրոպային Թեյշեբայի և, թերևս, արևի աստված Շիվինիի զորքերը, տես Ս.Հմայակյան. Վանի թագավորության պետական կրոնը. Երևան, 1990, էջ 29։

¹⁰⁸ Տե՛ս Հ. Աճառյան. Հայոց անձնանունների բառարան, հ. 5, Երևան, 1962, էջ 8-9. *Encyclopaedia Iranica*. Vol. II, London, 1987, p. 459։

¹⁰⁹ Н.О. Эмин, Вахагн-Вишалапах' армянской мифологии есть Индра-Vritrahan Риг-Веды. Исследования и статьи Н. О. Эмина. М., 1886, с. 82-83. Մ. Աբեղյան. Երկեր, հ. Ը, էջ 110-116. տե՛ս և G. Dumézil. *The Destiny of the Warrior*. Chicago, London, 1970, p. 129-132։

¹¹⁰ Քաջքերի և մարուսների կապի վերաբերյալ տե՛ս Մ. Աբեղյան, Նշվ. աշխ., հ. Ա, Երևան, 1965, էջ 154։

¹¹¹ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, 1836 (= Երևան 1979), հ. II, էջ 981-990։

¹¹² Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), հ. IV, Երևան, 1979, էջ 554-555։

¹¹³ Դ. Ալիշան, Հին հուստոք կամ հեթանոսական կրօնք հայոց, Վենետիկ 1895, էջ 205. Մ. Աբեղյան, Նշվ. աշխ., հ. Ա, էջ 154, հ. Է, Երևան, 1975, էջ 86։ Հատկանշական է, որ *մանուկ* բառը ևս ունի

կոչվում ոգիներին նաև որոշ այլ լեզուներում՝ պրսկ. *az mā behtarān* «մեզանից լավեր», գերմ. *Gude* ¹¹⁴, հմմտ. և հնդկական *վասու* և *սադհյա* ոգիների անվանումները (տե՛ս ստորև): Աճառյանը, ներկայացնելով *քաջ* բառի իրեն հայտնի ստուգաբանությունները, չի ընդունում ոչ մեկը: Հետագայում բառի նոր ստուգաբանություն է առաջարկել Օսվալդ Մեմերենյին՝ կապված սողդ. *krj, kj* «հրաշք» արմատի հետ (հմմտ. և իրան. *kāra* «ուժ, իշխանություն», օս. *karz* «ուժեղ») ¹¹⁵: Այս ստուգաբանությունը, թեև հիշվում է որոշ գործերում, մտահայեցողական է և անապացուցելի¹¹⁶: Բառն անհայտ ծագման է համարում և Գևորգ Ջահուկյանը¹¹⁷:

Ստորև ներկայացնենք մեր ստուգաբանությունը: Հոլգեր Պեդերսենը դեռևս 1906թ. առաջարկել է ստուգաբանություն, կապված *աջ* բառի հետ, **sw-ak'syo-* նախաձևից¹¹⁸: Հնդեվրոպական **sw-*ն հայերենում կանոնավոր դառնում է *ք-* (հմմտ. քուն < **swopno-*, *քոյր* < **swesōr* ևն), բայց *աջ* բառի ծագումը հնդեվրոպական **ak'syo-* ից ժամանակակից պատկերացումների համաձայն անընդունելի է: Ներկայումս այն ստուգաբանում են **s(e)Hdh-yo-* կամ **seh:dh-yo-* նախաձևերից, կապված հին հնդ. *sādhati* «հաջողեցնել, հասնել (նպատակին)», *sādhu-* «ճիշտ, ստույգ», «ուղիղ», «լավ», *sādhyā* «հաջողակ, նպատակին հասած» ևն¹¹⁹.

«Ռիգվեդայի» հիմներում Ինդրան և մարուտները բազմիցս կոչվում են *sva-*ով սկսվող ածականներով, որոնք հանգում են հնդեվրոպական **swō-*ին «յուր, սեփական», «ինքը», ինչպես օրինակ *svadhā* «ինքնտիպ», *svayuh* «անկախ», *svarāj* «ինքնադեկավարող, ինքնակալ», *svayaśastarah* «ինքնափառք/փայլուն», *svakṣatra*

«պատանեկան Männerbund-ի անդամ» իմաստը, տե՛ս A. Y. Petrosyan. Armenian Traditional Black Youths: the Earliest Sources. Journal of Indo-European Studies 39 (2011), № 3 & 4, p. 342-354.

¹¹⁴ Գ. Ս. Ասատրյան, Miscellanea Demonologica, Իրան-նամե, 1995, № 4–5, էջ 30. Մ. Աբեդյան, Երկեր, հ. I, էջ 154:

¹¹⁵ O. Szemerényi. Iranica III (Nos. 32–43). W. B. Henning Memorial volume. London, 1970, p. 424–425.

¹¹⁶ J. Russell. Zoroastrianism in Armenia. Cambridge MA, London, 1987, p. 453; Գ. Ասատրյան. Miscellanea Demonologica. Իրան-նամե, 1995, № 4–5, էջ 30; B. A. Olsen. The Noun in Biblical Armenian: Origin and Word-Formation. Berlin/New York, 1999, p. 966:

¹¹⁷ Գ. Ջահուկյան. Հայերեն ստուգաբանական բառարան, Երևան 2010, էջ 777:

¹¹⁸ H. Pedersen Kleine Schriften zum Armenischen. Hildesheim/New York, 1982, S. 210.

¹¹⁹ ՀԱԲ I, Երևան, 1971, էջ 246. M. Mayrhofer. Etymologisches Wörterbuch des Altindoarischen 2. Heidelberg, 1996. S. 722–723; H. K. Martirosyan. Etymological Dictionary of the Armenian Inherited Lexicon. Leiden/Boston, 2010, p. 100:

«ինքնիշխան, անկախ», *svatavas* «ինքնուժեղ», *svabhānu* «ինքնալուսավոր», *svapati* «ինքնատեր»¹²⁰: Այսպես, մի հիմնում (III.45.5) ասվում է. *Svayurindra svarāj asi smaddiṣṭiḥ svayaśastarah...* «Օ Ինդրա, դու ինքնագո ես (*svayuh*), ինքնակալ (*svarāj*), քո ամենափայլ պայծառությամբ (*svayaśastarah*)...»¹²¹:

Ըստ այդմ, քաջ-ը կարելի է մեկնաբանել որպես այդ հնդկերեն բառերին զուգահեռ մի կառույց՝ **swo-sHdhyo-* «ինքր/յուր + «աջ/հաջող», «ճիշտ», «լավ»¹²²: Հատկանշական է, որ Նոր հայկազյան բառարանում, ինչպես տեսանք, որպես *քաջ* բառի առաջին նշանակություններ հիշվում են «ուժեղակ՝ առաւել աջով», «աջող», «աջողակ ուժով», որտեղ շեշտվում են *աջ* և *աջող* բառերը: Ի միջի այլոց, հին հնդկական ավանդությունում հայտնի է Ինդրային ստորադաս աստվածությունների մի դաս, նմանատիպ անվանումով՝ *vasu* «լավ, բարի»¹²³: Սակայն առավել հետաքրքիր է հնդկական աստվածությունների մեկ այլ դասի անվանումը՝ *sādhyā*¹²⁴: Սրանք ծեսերի և աղոթքների պահապաններ են, որոնց անվանումն ամբողջովին համընկնում է հայ. *աջ*-ի հետ:

Հայոց քաջ(ք)երի հետ նույնական են վրաց քաջիները (ქაჯი, վերջին *ի*-ն վրաց. ուղղական հոլովի վերջավորությունն է), հայտնի արդեն Ռուսթավելու պոեմից¹²⁵: Նույն կերպարները հայտնի են նաև օսերի մեջ, *կաձի* և *կաջի* անուններով (ինչպես ցույց է տալիս բառավերջի *ի*-ն, փոխառությունը կատարվել է վրացերենից)¹²⁶: Ավարերենում ևս կան ոգիների նմանահունչ անուններ՝ *paḍ*, *paṛḍ*/*paṛḍhin* «բարեբեր օձ», «տնային բարի ոգի»¹²⁷, որոնք, տեսականորեն, կարող

¹²⁰ G. Dumézil. Նշվ. աշխ., էջ 62–63.

¹²¹ Ահա այդ տողի անգլերեն և ռուսերեն թարգմանությունները. Indra, self-ruling Lord art thou, good Leader, of most glorious fame (Sacred Writings: Hinduism: the Rig Veda. Trans. R. Griffith, N. Y., 1992, p. 186). О Индра, ты самосущий, ты самодержец, со (своим) наставлением, со своим самым ярким блеском (Ригведа: мандалы I–IV. Перевод Т. Я. Елизаренковой, М., 1989, с. 336).

¹²² Տեսականորեն հնարավոր է այս բառերի համար կապ ենթադրել **su-* «լավ» արմատի հետ, բայց դրա համար բավարար հիմք չկա, տե՛ս G. Dumézil, Նշվ. աշխ., էջ 62, ծան. 17:

¹²³ M. Monier-Williams. A Sanskrit-English Dictionary. Oxford 1899, p. 930; Мифы народов мира (далее – МНМ), т. 1, М., 1980, с. 218–219.

¹²⁴ J. Dowson. Classical Dictionary of Hindu Mythology and Religion, Geography, History, and Literature. London 1888, p. 271; Monier-Williams, Նշվ. աշխ., էջ 1202:

¹²⁵ МНМ 1, 607.

¹²⁶ В. И. Абаев. Историко-этимологический словарь осетинского языка, т. 1, М.-Л., 1958, с. 566–567.

¹²⁷ МНМ 1, с. 607; Свод памятников фольклора народов Дагестана, т. 4: Мифологическая проза, М., 2012, с. 135–136, 247–248.

են կապված լինել *քաջ*, *քաջի* և *կաձի* ձևերի հետ (թեև պետք է նշել, որ բավական տարբեր են ն' կերպարները, և՛ անվանումները):

Կապադովկյան հունարենում, որտեղ շատ կան փոխառություններ հայերենից, քաջքերն իրենց անունն են թողել *κατσόρα* /կացո՛ռա/ «մղձավանջ, չար ոգի» բառում (հայոց արևմտյան բարբառներում *քաջ*-ն արտասանվում է որպես *քաչ*, որը նոր հունարենում, որտեղ չկան *ք* և *չ* հնյունները, կարող էր ընկալվել հենց որպես *կաց*)¹²⁸: Ըստ Ջեյմս Ռասելի, հունական դերի մի տեսակի *καλικάντζαρος* անվանումը ևս կարող է կապված լինել նույն արմատի հետ, սկզբնական *καλή* «լավ, գեղեցիկ» մասով, որը համահունչ է հայ. «մեզանից լավերը» ձևի հետ ¹²⁹ (այս կարծիքը, իհարկե, վարկածային է): Այս նույն ոգին, ի միջի այլոց, հայտնի է նաև թուրքերի և հարավային սլավոնների մոտ՝ թուրք. *karakoncolos*, բուլղ. *караконджул*, մակեդ. *караконцол*, սերբ. *караконцула*:

¹²⁸ ՀԱԲ IV, էջ 555:

¹²⁹ J. Russell. Նշվ. աշխ., էջ 453:

ՆՈՐՔԻ ԽՈՍՎԱԾՔԻ ԵՎ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՏԱՐԱԾՔԻ

ՈՐՈՇ ԽՈՍՎԱԾՔՆԵՐԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նախիջևանի **Նորս** գյուղը պատմական սկզբնաղբյուրներում նույնանում է Մեծ Հայքի Սյունիք աշխարհի Ճահուկ գավառի **Նորագյուղ** բնակավայրի հետ¹³⁰: Գյուղն աշխարհագրորեն տեղադրված է ներկայիս Նախիջևանի ինքնավար հանրապետության հյուսիսային՝ Շահբուզի (Շահապունիք) շրջանի տարածքում (աղբյուրներն են՝ Nurs, Nursu): Բնականունը ակնհայտորեն հայերեն **նոր** բառի հոգնակի հայցականն է (նորք-**նորս**): Տեղեկություններ կան, որ այս գյուղից են 17-րդ դարում մեծաթիվ հայեր տեղափոխվել Երևանի մերձակայքում գտնվող **Չոլմակչի** գյուղ, որը 1679 թվականի երկրաշարժի հետևանքով մեծապես ավերված էր, և գյուղը **Նորք** վերանվանել¹³¹:

Անցյալում առանձին բնակավայրի կարգավիճակ, իսկ խորհրդային շրջանում՝ մինչև 30-ական թվականները, առանձին գյուղխորհուրդ ունեցած Նորքն այսօր Երևանի թաղամասերից մեկն է: Բնակիչները գրեթե լիովին մոռացել են մայրենի խոսվածքը, որը Հայերենի բարբառագիտական ատլասի ծրագրով 1979 թվականին գրանցել է Հայաստանի ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնի աշխատակից Ջեմմա Բառնասյանը (բարբառախոս՝ Լիպարիտ Դիլանյան, ծնվ. 1914թ., Նորք)¹³²:

Նախիջևանի Նորս գյուղը 1604 թվականի շահաբասայան բռնագաղթի հետևանքով հայաթափվել է, իսկ նրա բնակիչների մի մասը, հավանաբար մի քանի տասնամյակ ապրելով Պարսկաստանում, հետագայում տեղափոխվել է Չոլմակչի: Միայն 1828 թվականին հաջորդող տարիներին Նորսը կրկին սկսել է հայաբնակ դառնալ՝ Թուրքմենչայի պայմանագրի ստորագրումից հետո այնտեղ են տեղափոխվել Խոյ-Սալմաստից գաղթած հայեր: Մինչև Աղբյուրների կողմից իրականացված վերջնական հայաթափումը (անցյալ դարի 70-ական թվականները) գյուղը խոսում էր Խոյի բարբառով:

¹³⁰ Մ. Օրբելյան, *Սյունիքի պատմություն*, Ե., 1986, էջ 404:

¹³¹ Ա. Այվազյան, *Նախիջևան. բնաշխարհիկ պատկերազարդ հանրագիտակ.* Ե., 1995, էջ 178-179: Թ. Հակոբյան, Մ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, Հ. 4, Ե., 1998, էջ 32, 33:

¹³² Որոշ ճշտումներ կատարել ենք Գեղամ (ծնվ. 1934թ., Նորք) և Մերգեյ (ծնվ. 1943թ., Նորք) Սամվելյաններից:

Նորսի հին խոսվածքի մասին կարելի է պատկերացում կազմել՝ համեմատելով աշխարհագրորեն մոտավորապես նույն հորիզոնականի վրա տեղադրված՝ նրանմերձակա տեղաբնիկ գյուղերի՝ Ճահուկ-Շահապունիք գավառի **Մեծոփ** (Օծոփ, աղբբեջաներեն՝ Badamlı) և Նախճավան գավառի հյուսիսային **Ազնաբերդ** (աղբբեջաներեն՝ Əznəbyurd, Calxanqala) գյուղերի խոսվածքները՝ Նորքի խոսվածքի հետ:

Մինչև անցյալ դարի 70-80-ականները գոյատևած՝ մերձավոր խոսվածքներով այս երկու հայաբնակ գյուղերի՝ Ազնաբերդի և Մեծոփի հատկանիշները համապատասխանաբար 1978 և 1980 թվականներին Հայերենի բարբառագիտական ատլասի ծրագրով գրանցել է տողերիս հեղինակը (բարբառախոսներ՝ Հայրապետ Վարդանյան (ծնվ. 1895թ., Ազնաբերդ), Շուշան Բալասանյան (ծնվ. 1916թ., Ազնաբերդ), Ժենիկ Խաչիբաբյան (ծնվ. 1931թ., Ազնաբերդ), Կարեն Համբարձումյան (ծնվ. 1900թ., Մեծոփ), Սերոբ Աբգարյան (ծնվ. 1912թ., Մեծոփ), Անահիտ Իսրայելյան (ծնվ. 1914թ., Մեծոփ):

Նշենք, որ այս երկու խոսվածքները մեր կողմից հետազայում նաև ուսումնասիրվել և ընդգրկվել են **Վայոց ձորի միջբարբառում**¹³³, քանի որ լեզվականներտ առնչություններ ունեն Վայոց ձորի շուրջ մեկ տասնյակ տեղաբնիկ գյուղերի (Արենի, Խաչիկ, Աղավնաձոր, Ռինդ, Գնիշիկ և այլն) խոսվածքների հետ: Այդուհանդերձ, այս անվանումը որոշ վերապահությամբ ենք ընտրել, քանի որ միջբարբառը կրող երկու բնակավայրերից մեկը Վայոց ձորին սահմանակից՝ պատմական Ճահուկ գավառում էր, մյուսը՝ Ճահուկ և Նախճավան գավառների սահմանագծին: Ուստի, գտնում ենք, որ Վայոց ձորի միջբարբառի փոխարեն ավելի ճիշտ կլինի կիրառել **Ճահուկ-Վայքի միջբարբառ** եզրույթը, քանի որ բարբառապատմականորեն տարածված է եղել նաև պատմական Ճահուկ և հարակից այլ գավառներում:

Նորքի խոսվածքին անդրադարձել են Վիկտոր Կատվայանը և Հայկանուշ Մեսրոպյանը՝ Երևանի բարբառին նվիրված ուսումնասիրությունների շրջանակներում, և այս խոսվածքում Երևանի տարածքի մյուս խոսվածքներից զգալիորեն տարբերվող հնչյունաբանական, քերականական որոշակի առանձնահատկություններն ակատել¹³⁴, որոնք, ի դեպ, ակնհայտորեն համեմատելի են Նորսին մերձակա՝ վերոհիշյալ երկու գյուղերի խոսվածքների համապատասխան

¹³³ Ա. Վարդանյան, *Վայոց ձորի միջբարբառը*, Ե., 2004:

¹³⁴ Վ. Կատվայան, Երևանի խոսվածքի մասին - «Ճահուկյանական ընթերցումներ» միջազգային գիտաժողովի զիտական հոդվածների ժողովածու, Ե., 2018, էջ 124-135: Հ. Մեսրոպյան, Երևանի բարբառի ընդհանուր բնութագիրը - «Երևան» գիտական հոդվածների ժողովածու, 1-ին պրակ, Ե., 2006, էջ 122-130:

հատկանիշների հետ: Այս համատեքստում փորձենք պարզել նաև այս երեք խոսվածքների բառապաշարային առնչությունները:

Բառային զուգաբանությունները առաջին իսկ հայացքից աչքի են ընկնում զարմանալի ընդհանրություններով: Ներկայացվող աղյուսակում չենք ընդգրկել այնպիսի բառեր, որոնք սովորաբար ընդհանրական են՝ մանավանդ արևելահայ բարբառների խոսվածքներում (**սար, քամի, պատ, ծուխ, սերմ, կճուճ, տիկ** և այլն), այլ այնպիսիները, որոնք հիշյալ խոսվածքների մերձավոր առնչությունների ավելի արտահայտիչ վկայություններ են:

<i>Գրական հայերեն</i>	<i>Նորքի խոսվածք</i>	<i>Մեծուփի խոսվածք</i>	<i>Ազնաբերդի խոսվածք</i>
գազաթ	կատար	կատար	կադար
ծիածան	կանանչ-կարմիր	կանանչ-կարմիր	կանանչ-կարմիր
կաթիլ	պուտ	պուտ	պուդ
գիծ	խագ	խագ, ջրղըզ	խագ, ջրղըզ
արև եղանակին անձրև	կէլ ա ցրգնըմ	կ'էլ ա ցրգնըմ	կ'էլ ա ցրնգընըմ
աղբանոց	քյուլլուզ	ք'ծլլծզ	ք'ծլլծզ
գերեզման	կէրէզման	կըրէզման	կըրէզման
գերեզմանատուն	կէրէզմաններ	կըրէզմաննի	կըրէզմաննի
եկեղեցի	Ժամ	Ժամ	Ժամ
կայծ	պէծ	պէծ	պէձ
արմատ	քօք	ք'նք	քօք
աշնան տերև	դազալ	խ'զ'լ	խ'զ'լ
ծառի խեժ	կրռէճ	կրռէճ	կրռէ(ն)ջ
կաղին	ֆընդուդ	ֆընդըդ	ֆընդըդ
ընկույզի միջուկ	պօպօքի մէշ	բօբօքի մէշ	պօբօքի մէշ
ողկույզ	ճիթ	ճիթ	ճիթ
խաղողի ողկույզիկ	զընգըլա	զընգըռթա	զընգըռթա
ձնծաղիկ	ծընծաղիզ	ծընծաղիզ	ծընծաղիզ
գազար	կազա	կ'զ'ռ	կազար
տաքդեղ	տախտէխ	տախտէղ	տախտէղ
եղինջ	աղինջ	աղինջ	աղինջ
ծնեբեկ	ծընէփուզ	ծընէփուկ	ծընէփուզ
հարդ	տարման	սրմ'ն	սրմ'ն
հասկ	սըմբուլ	սծմբօլ	սըմբուլ
դանակի շեղբ	տանագի պէրան	տ'ն'օփի պէրան	տ'ն'օգի պէրան
մեծ անցքերով մաղ	խախալ	խախալ	խախալ

թթխմոր	խաշ	խաշ, տրխտրմոր	խաշ, տրխտրմոր
փլավքամիչ	փրլավքամիգ	փրլավքամիկ	փրլավքամիգ
կճուճի ունկ	ունգ	ունգ	ունգը
պարան	չրվան	չրվան	չրվան
սյունից սյուն կապած օրորոց	ճօճ	ճօճ	ճօջ
աչքալուսանք	աշկալիսենք	օշկալիսանք	օշկալիսենք
ծննդկան	ծընըտկան	ծընըտկան	ծընըտկան
մանկաբարձուհի	տատմէր	տաղմէր	տաղմէր
երէխա	ըրէխա	ըռխա	ըրէխա
այրի	վօրփըվէրի	վօրփըվէրի, դուլ	դօրփըվէրի, դուլ
կաշաղակ	կըչէղագ	դ'ջ'լ'օ	կըչէղագ
վառեկ	վառիգ	վառիկ, տօխ	վառիգ, տօխ
հավի կրծոսկր	ջինաղ	ջընաղ	ջընաղ
թնատակ	կըռնատակ	կըռնատակ	կըռնատագ
արտնանունք	թէրթէվանունք	թըրթէվանուկ	թըրթէվանուգ
միգապարկ	փուչիգ	փուչիկ	փուչիգ
մեզ	ցէթ	ցէթ	ցէթ
ոչխարի, այծի կղանք	կըտըտօր	կըտըտօր	կըդըդօր
գորտնուկ	կօռնուգ	կօռ'նունգ	կօռ'նուգ
ձվածեղ	ծըվածէղ	յէղածու	ծըվածէղ
տհալ	դավըրմա	դավըրմա	դավըրմա
հալած դմակի կտոր	խօրխօզի	ջըզդըղ	խըրխօզի
ճարպ	ճըրաքու	ճըրաքու	ճըրաքու
տիկնիկ	տիկին	տիկ'ին	տիգ'ին
սրինգ	թուլթակ	դօղ'օգ	թօթ'օգ
նիհար	լըդար	լըդառ	լըդառ
դժվար ջարդվող	կըռու	վօսկըռօ	կըռու
կապույտ	կապիտ	կապիտ	կաբիդ
սպիտակ	սիպտագ	սիֆտ'օկ	սիպտ'օգ
թմբլիկ	լըխտիգ	լըխտիկ	լըխտիգ
փափուկ	կակօղ	կակօղ	կագօղ
անպոչ հավ	կօկօլ հավ	գ'օդօգ հավ	կուդուլ հավ
խոնավ	նամ	ն'օմ	ն'օմ
աշխատել	պանել	պանիլ	պանիլ
կոտրել	ճառթել	ճառթիլ, գօդրիլ	ճառթիլ, կօդրիլ
դիպչել	դըբնել	դըմնիլ	դըբնիլ
կպչել	կըպնիլ	կըմնիլ	կըբնիլ
ընկնել	վէր ընգել	վէր ընգ'իլ	վէր ընգ'իլ
պարզաջրել	պառզաճըրել	պառզաճըրիլ	պառզաճըրիլ

ցույց տալ	շրհանց տալ	շաշ տալ	շանց տալ
փակել	ծասկել	ծասկ'իլ	ծասկ'իլ
հաշվել	համբարել	հրմբօրիլ	հրմբարիլ
վոնդել	խրրկել	խրրկ'իլ	խրրգ'իլ
երեսը կարմրել	վրորշնել	վրորշնիլ	վրորշնիլ
փլվել	փուլ կալ	փուլ կալ	փուլ կալ
սուլել	շրվացնել	շրվվացնիլ	շրվվացնիլ
հանկարծակի սուր ցավել	ծակել	ծակ'իլ	ծագ'իլ
շփոթվել	շրշկըլվել	շրշկըրիլ	շրշկըլվիլ
կոպտել	փրշտել	պրշտիլ	բրշտիլ
քարկոծել	քարով տալ	քարով տալ, քարապարան անիլ	քարով տալ, քարապարան անիլ
փայլփլել	պըսպըղալ	պըսպըղալ	պըսպըղալ
կքել	ճըկոել	ճըկըրիլ	ճըգըրիլ
գրկել	խըտըտել	խըտըտիլ	խըղըղիլ
նվագել	ածել	ածիլ	ածիլ
թաքնվել	տափ կէնալ	տափ կ'էնալ	տափ կ'էնալ
նայել	մըտիկ անել	մըտիկ անիլ	մըղիգ անիլ
որոնել	ման կալ	ման կալ	ման կալ
փաթաթել	փըթաթել	փըթաթիլ	փըթաթիլ
հայհոյել	ուշունց տալ	ծծ(ն)չ տալ	ուշունց տալ
ուշաթափվել	ուշը կընալ	հծշը քընալ	հուշը քընալ
երես առնել	լեթվել	լեղվիլ	լեթվիլ
ճիշտ	ըդօրթ	դօրթ	(ը)դօրթ
համար	հըմար	մըհար	հըմար, մըհար
փոխարեն	տեղակ	տեղակ, օվօգ	տեղագ, օվօգ
բացի	սավայի	սավայի	սաֆայի
ահա	ըհը	ըհը	ըհը(ն)

Ինչպես նկատվում է աղյուսակից, բառային զուգաբանություններում առկա են առավելապես բառապաշարի հետևյալ խմբերին վերաբերող ընդհանրություններ՝

ա) բնության և շրջապատող աշխարհի հետ կապված հասկացություններ՝ ծիածան, արև եղանակին բարակ անձրև, կաթիլ, խոնավ, աշնան տերև, արմատ, ծառի խեժ, կաչաղակ և այլն,

բ) կենցաղին վերաբերող հասկացություններ՝ պարան, դանակի շեղբ, մեծ անցքերով մաղ, թթխմոր, փլավքամիչ, կայծ, կճուճի ունկ, աղբանոց, սյունից սյուն կապված օրորոց, տիկնիկ, սրինգ, անպոչ հավ, հավի կրծոսկր, վառել և այլն,

գ) մարդու մարմնի մասերի հետ կապված հասկացություններ՝ աչք, արտևանունք, թևատակ, գորտնուկ, միզապարկ, մեզ և այլն,

դ) սննդի հետ կապված հասկացություններ՝ կաղին, ընկույզի միջուկ, ողկույզ, գազար, տաքդեղ, եղինջ, ծնեբեկ, տհալ, ձվածեղ, ճարպ, դժվար ջարդվող ընկույզ և այլն,

ե) հավատքի, ավանդույթների և սովորույթների հետ կապված հասկացություններ՝ եկեղեցի, գերեզման, գերեզմանատուն, աչքալուսանք, ծննդկան, մանկաբարձուհի, երեխա, այրի և այլն,

զ) առավել կիրառական բայեր՝ աշխատել, նայել, որոնել, կոտրել, ընկնել, դիպչել, փակել, հաշվել, երեսը կարմրել, փլվել, շփոթվել, կոպտել, գրկել, նվագել, հայիռել, ուշաթափվել և այլն:

Սրանք բարբառի բառապաշարի այն շերտերն են, որոնք բնակության վայրը փոխելիս մարդիկ հեշտությամբ շարունակում են նոր բնակավայրի առօրյայում կիրառել:

Բառիմաստային զուգաբանություններում նույնպես առկա են մի խումբ այնպիսի բառեր, որոնք միանշանակորեն իմաստով համապատասխանում են բոլոր երեք խոսվածքներում.

Աչք (**աշկ**, **օշկ**) – 1. տեսողական գործարան, 2. բաժանմունք, 3. ակունք

Դարման (**տարման**, **տիրման**) – 1. դեղամիջոց, 2. սպեղանի, 3. հարդ, 4. ճար, հնար

Տակ (**տակ**, **տագ**) – 1. որևէ իրի ստորին մասը, 2. ներքև, ցած

Կուտ (**կուտ**, **կուդ**) – 1. թռչնի կեր, 2. թռնիրն ընկած հաց, 3. մաղած հացահատիկի տականք

Փռշի (**փռշի**) – 1. ճաշի մեջ ավելացվող ալյուր

Դեղ (**տեղ**) – 1. դեղ, 2. թույն

Խաղ (**հաղ**) – 1. խաղ, 2. հոդ

Հով (**հով**) – 1. զովություն, 2. քամի, 3. սովեր

Ածել (**ածել**, **ածիլ**, **ածիլ**) – 1. լցնել, 2. թափել, 3. ձու դնել, 4. նվագել

Նեղանալ (**նեղանալ**) – 1. նեղ դառնալ, 2. սրտնեղել, 3. վիրավորվել, 4. խռովել, 5. բարկանալ

Կտրել (կըտրել, կըտրի, կըդրի) – 1. հատել, 2. կոդոպտել, թալանել, 3. փտորվել (կաթ, թան), 4. դադարել (անձրև, ձյուն)

Քաշել (քաշել, քաշի) – 1. ձգել, 2. քարշ տալ, 3. կրել՝ տանել, 4. նկարել (պատկերը), 5. թորել (օղի), 6. ծխել (ծխախոտ), 7. իջնել (ուռուցքը)

Ման գալ (ման կալ) – 1. զբոսնել, 2. ազատ կյանք վարել, 3. փնտրել

Կպչել (կըպնել, կըբնի, կըմնի) – 1. հպվել, 2. փակչել, 3. կանաչել, 4. վառվել:

Ընդհանուր առմամբ համեմատելով Նորքի, Մեծոփի և Ազնաբերդի խոսվածքների՝ Հայերենի բարբառագիտական ատլասի ծրագրում ընդգրկված 478 բառային զուգաբանությունները՝ կարելի է համոզվել, որ դրանցից մոտ 400 միավորը ընդհանուր է: Սա վկայում է, որ նորսեցի վերաբնակների սերունդները, ապրելով Նորքում, ավելի քան երեք դարապահպանել են հին խոսվածքի բառապաշարի զգալի մասը՝ մոտավոր հաշվարկով շուրջ ութսուն տոկոսը:

Vardanyan Artak – Lexical commonalities of Nork dialect and several dialects of Nakhijevan territory.– There is evidence that after earthquake back to 1679 many inhabitants having moved from **Nors (Noragyugh)** village of Nakhijevan settled in **Cholmakchi** village near Yerevan and renamed it **Nork**.

Study of old dialect lexis of Nork, being one of Yerevan districts today, proves that in the course of about three centuries it has preserved significant commonalities with dialect lexis of **Metsop** and **Aznaberd** villages, neighboring to Nors.

Варданыан Артак – Лексические общности Норкского говора и некоторых говоров территории Нахиджевана.– Есть сведения, что после землетрясения 1679 года в селе **Чолмакчи** близ Еревана поселились мигрировавшие из нахиджеванского села **Норс (Норагюх)** многочисленные жители и переименовали село в **Норк**.

Исследование лексики старого говора Норка, являющегося одним из районов сегодняшнего Еревана, свидетельствует, что в течение более чем трех веков он сохранял значительные общности с лексикой говоров сел **Мецоп** и **Азнаберд**, соседствующих с Норсом.

Վալենտին Խաչատրյան
(ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ)

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՈՐՈՇ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՁԵՌԱԳՐԵՐԻ 17-ՐԴ ԴԱՐԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Հայերեն ձեռագրերի հիշատակարանները, որոնք պատկանում են 5-18-րդ դարերին, լեզվական հարուստ նյութ են տրամադրում: Թեև դրանք մեծ մասամբ գրաբար տեքստեր են, սակայն կան միջին հայերենով և աշխարհաբարով հիշատակարաններ ևս: Ավելի հաճախ պատահում են միջինհայերենյան և աշխարհաբարյան իրողությունների խառնուրդով հիշատակագրություններ՝ գրաբարյան ձևերի գերակայությամբ:

17-րդ դարի հիշատակարանների լեզվական իրողությունների ուսումնասիրությամբ պարզվում է, որ նրանցում գործածվել են հայերենի զարգացման տարբեր շրջափուլերի երևույթներ, այդ թվում և բարբառային իրողություններ, հաճախ նաև այլ ձևերի համաբանությամբ կամ սխալմամբ կազմված ձևեր: Առկայացած որոշ փաստեր էլ վրիպակների, ձեռագրերի աղճատման, հետագա աղավաղումների հետևանք են: Այս ամենն ավելի է դժվարացնում ուսումնասիրողի գործը՝ հատկապես նշյալ երևույթը որևէ տարածքի հատկացնելու առումով: Հարկ է նկատի առնել նաև, որ քիչ հիշատակարաններում է նշված հիշատակագրի ծագումը և, բացի դրանից, հայտնի լինելու դեպքում էլ հաճախ վկայված իրողությունները որևէ աղերս չունեն հետագայում տվյալ տարածքի համար արձանագրված համապատասխան երևույթների հետ: Հարցն ավելի է դժվարանում, երբ որ, ինչպես նկատվում է շատ դեպքերում, ձեռագրերից յուրաքանչյուրում ամեն մի հիշատակության հեղինակ նույնությամբ կամ մասամբ վերցրել է նախորդ հիշատակագրողների տեքստը՝ հավելելով միայն տեղեկություններ իր և մերձավորների մասին: Մասամբ էլ հիշատակագիրները ազդվել են իրենց գրչագրած երկերի լեզվից: Ուստի մեծ ջանքեր են պահանջվում ազդեցությունների բնույթը

բացահայտելու առումով: Այսպիսի պայմաններում առաջադիր կարևորագույն խնդիրը դառնում է նախ

այն, որ գրաբարյան կանոնավոր ձևերի համեմատ անսովոր ձևերի մեջ բարբառային երևույթները հստակորեն առանձնացվեն արհեստականորեն կամ սխալմամբ կազմված ձևերից, զանազան վրիպակներից: Ապա պետք է որոշվեն բարբառային դիտվող միավորների բարբառային հիմքերը:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ չափածո հիշատակարանների հեղինակները, հաճախ հետևելով հանգավորման կանոններին, բառերն օժտել են ոչ իրենց հատուկ քերականական ձևերով, դիմել արհեստական կազմությունների¹: Այդպիսի անսովոր իրողություններ կարելի է նկատել նաև ազատ շարադրանքում: Եթե չափածո խոսքում այն կարելի է բացատրել հանգավորման կամ բանաստեղծական ոտքերի պահպանման համար հիշատակագրի արհեստական միջամտությամբ, ապա արձակում կարող է դիտվել որպես չիմացությամբ պայմանավորված կամ էլ գրաբարյան գերճշգրտության հետևանք, որը պայմանավորված է գրաբար գրելու ձգտումով, բայց և չիմացաբար թույլ տրված զանազան սխալներով²:

Հայերենագիտությամբ զբաղվողները հայերենի զարգացման տարբեր շրջափուլերի երկերում վկայված լեզվական բազմաձևությունը սովորաբար համարում են բարբառային առանձնահատկություններով պայմանավորված: Սակայն պետք է հաշվի առնել, որ բազմաձևության առաջացումը և տարածումը մասամբ էլ գրավոր ավանդույթի հետևանք է՝ հիշենք, որ հատկապես միջին հայերենում տարածված և ընդունված են եղել արհեստական կազմությունները: Այդ ամենին գումարվում են նաև չիմացաբար սպրդած և ավանդաբար տարածված սխալները, գրչագրական վրիպակները և այլն:

Հիշատակագիրներից շատերը, իհարկե, հետևելով հիշատակագրության ավանդույթին, ընդունված բանաձևերին՝ հնարավորինս փորձել են պահպանել դասական

¹ Այսպիսի իրողությունների մասին տե՛ս **ՎՊ Խաչատրյան**, Քերականական արհեստական, անսովոր իրողություններ 17-րդ դարի ձեռագրերի հիշատակարաններում (1601-1640 թթ.)՝ Երիտասարդ լեզվաբանների հանրապետական երկրորդ գիտաժողովի զեկուցումներ, Ե., 2012, հունիսի 14-15, էջ 142-156:

² Տե՛ս **Լ. Հովսեփյան**, ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանների լեզուն, Ե., 1997, էջ 20-29:

հայերենի նորմերը, յուրաքանչյուր բառի քերականական ձևավորման ճշգրիտ պատկերը, սակայն ստույգ չիմանալու դեպքում կա՛մ իրենց բարբառին հատուկ ձևեր են գործածել, կա՛մ էլ այլ ձևերի համաբանությամբ կազմել անսովոր, ոչ ճիշտ ձևեր, երբեմն էլ դիմել նորամուծությունների՝ հետապնդելով տարբեր գեղագիտական նպատակներ:

Այսպիսի հանգամանքներում վկայությունն ստացած իրողությունները, ինչ խոսք, կարող էին գրական ավանդույթով տարածվել՝ հիմք հանդիսանալով նորանոր զուգաձևությունների համար:

Ձեռագրերի 17-րդ դարի հիշատակարաններում առկա են գոյականների հոգնակիակազմության, հավաքականության արտահայտման տարաբնույթ դրսևորումներ: Հատկապես հետաքրքրություն են առաջացնում հոգնակի թվով գոյականների հոլովական ձևերը:

-*Եր* և -*ներ* հոգնակերտներով բառաձևերի սեռական-տրական հոլովը հանդիպում է կա՛մ արևելահայերենի նմանությամբ՝ *ի* հոլովիչով՝ **պապերին** (Բ 278)³, կա՛մ արևմտահայերենին հատուկ *ու* հոլովիչով՝ **թոռներուն** (Բ 328, գրիչ՝ Սարգիս Պալախօրցի, վայր՝ Պալախօր), «և մեծ պապանցն իմ..., և **հարսներուն**՝ Ինախփաշին և Ոսկէհատին, և իմ եղբօր թոռանցն՝ Սահակին և նորաբոյս Կարապետին... (Ա 73), «**հարսներոյն**՝ Թանկհաթունին և Թանկօին» (Ա 170), կա՛մ գրաբարյան *ց* հոլովակազմիչի հավելումով՝ **աբեղաներացն** (Ա 27), «**հարսներացն**՝ Քիչիխաթունին, Հոփսիմին,» (Ա 26), «սոցին **հարսներացն**՝ Նուրիխանին, Շահբեգին,... (Բ 136), «**հարսներացն** իմոց՝ Ինախփաշին և Սօլթանաղին» (Ա 143), «Դէ յիշեցէք **ղարիքներացն**, ողորմի ասացէք, Աստուած զձեզ ողորմի» (Բ 194), «Այլ և երկոսին կողմանց **պապերց** նորին՝ Միրաքին և մահտեսի Պաղտասարին, և **մամերցն**՝ Մարիամին և Շալշուքին» (Գ 101, գրիչ՝ Գասպար Ակնցի, վայր՝ Պօլիս):

³ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ դար (1601-1620 թթ.), հ□ Ա□, կազմ□ Վ□ Հակոբյան, Ա□ Հովհաննիսյան, Ե□, 1974: Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ դար (1621-1640 թթ.), հ□ Բ, կազմ□ Վ□ Հակոբյան, Ա□ Հովհաննիսյան, Ե□, 1978: Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ դար (1641-1660 թթ.), հ□ Գ, կազմ□ Վ□ Հակոբյան, Ե□, 1984:

Անսովոր է *-եր* հոգնակերտ մասնիկի կցումը հետևյալ բազմական բառերին՝ «աս *պատուհասերս* եղև» (Բ 134), «*Մշակերտքս* դեռ տղեք են, կու ձանձրանան, թե շարականն ինչու կու գրես (Բ 369, Գրիչ Ստեփանոս, Վայր՝ Նոր Ջուղայ):

Այք // *եայք* հավաքական վերջավորություններով ձևերից են բխում հետևյալ բառաձևերը՝ *վիմայց* (Բ 36), *կողակցայց* (Բ 517), «իւր *կողակցեայցն*՝ Ներգզին և Հրաթին» (Գ 196), այլ վասն ընչից և *եկեղեցայց* (Բ 289, Բ 665), «...և գրանք *ի յեկեղեցայց* գերացուցին» (Ա 317), լոյսերամ դասք *միակեցայց* (Բ 185), «և գԲաբելացուց և զամենայն *արևելայս*» (Բ 150), «*եկեղեցեայց* լուսերն կու վառե» (Բ 191), եօթանեքին թուղթն *կաթուղիկեայց* (Բ 806, Գրիչ, ծաղկող՝ Մովսես կրօնաւոր, Վայր՝ Էջմիածին):

17-րդ դարի հիշատակարաններում հաճախակի կիրառություն ունեն *գրանք* (Ա 233) // *գրեանք* (Բ 205) // *գիրանք* (Բ 206) բառաձևերը, որ նշանակում են «գրքեր»: *Գրեանք* ձևից էլ աղերսվում են հետևյալ օրինակները՝ *գրենաց* (Բ 149) ձևում առկա է *եա>ե* կանոնավոր շեշտափոխական հնչյունափոխություն, մինչդեռ ուրիշ դեպքերում այդպիսի հնչյունափոխություն առկա չէ, *ե*-ին համապատասխանող հնչյունն էլ մասամբ արտահայտվել է *ի*-ով, ինչպես և նման ուրիշ օրինակներում՝ *գրեանուց* (Բ 166) // սբ. *գրիանացս* (Բ 240), բազումք *ի գրեանաց* (Ա 187):

Հրաչյա Աճառյանը, միջինհայերենյան հոգնակերտների շարքում անդրադառնալով *-տի* մասնիկին, գրում է՝ «□□□այս միևնույն մասնիկը միանալով նախորդ *վի* մասնիկի հետ՝ դառնում է *վտի*, որով ունինք քուրվտի (քույրեր)□ ճիշտ այնպես՝ ինչպես ունինք *ներ*, որ գումարն է *նի* և *եր* մասնիկների»⁴: Այնուհետև հոլովում է *քուրվտոյ* ձևով⁵: 17-րդ դարի հիշատակարաններից մեկում *ու>ը* հնչյունափոխությամբ դրսևորված հետևյալ օրինակը աղերսվում է ևս մեկ հոգնակերտի՝ *-ք*-ի հավելմամբ *քրվտիք* ձևից, քանի որ հոգնակի տրականի *-ց* հոլովակազմիչով է՝ «*քրվտոցս*՝ Ուստիանե և Էմինին» (Ա 376): *Աղբրտիք* բառաձևից էլ բխում է հետևյալը՝ *աղբրտոցն* (Ա 495): Հետագայի հիշատակարաններից մեկում էլ վկայված է սեռական-տրականի *քվեր* հիմքից կազմված

⁴ Տե՛ս *Հ. Աճառյան*, Հայոց լեզվի պատմություն, II մաս, Ե., 1951, էջ 244:

⁵ Նույն տեղում, էջ 245:

քվերտիք-ի տրականը՝ «Քրիստոս Աստուած քո սբ. ծնաւորի բարեխաւսութեամբ ողորմեայ իմ **աղբրրտոցս** և **քրվերտացս**» (Գ 130): Քոյր բառի հոգնակիի հիշյալ դրսևորումների համեմատության հիման վրա կարելի է նույնիսկ կարծել, որ առաջինում տեղի է ունեցել *վ* և *ք* հնչյունների դիրքերի փոփոխություն՝ հետևառաջություն, և ոչ թե առկա է *-վ/ի* հոգնակերտը:

Գրաբարյան դերանվանական ձևերի հետևողությամբ միջին հայերենում գոյականների փոխանցված բացառականի *-մէ* հոլովակազմիչը հետագայում պահպանվել է արևմտահայերենում⁶: Ահա հետևյալ օրինակը կիրառվել է արաբկիրցի հիշատակագրի կողմից՝ «մի՛ մեղադրէք սղալանացս, զի հոգ և տարակուս էի *ի յանիրաւ եղբարցմէ*» (Գ 172, գրիչ՝ Խաչատուր քահանայ, վայր՝ Արափկեր):

Բարբառային ուշագրավ օրինակներ են հետևյալները՝ «Յիշատակ է այս Խազտետրս տէր Կարապետին և յիւր որդոցն՝ Դաւութին և Անտոնին. արժան առնէ// և յիւր **տղերքոցն**» (Բ 259): «□□□ն երբեմն *ի գեղարէնս* գրեցաւ ձեռամբ սուտանուն և անարհեստ գրչի Աւետիս անարժան երիցոյ» (Բ 714, վայր՝ Հոգոց վանք, որը, ըստ տեղանվանագիտական բառարանի, Մեծ Հայքի Վասպուրական աշխարհի Անձնացիք գավառում է⁷): **Գեղարէնք** բարբառային բառաձևի կողքին ՌՄ Ղազարյանը նշել է Ջուղա բնակավայրը⁸: «□□□գայլ **քաղքունէքն**, որ մինչև ի Գուռջստան...» (Բ 194):

13-րդ դարի հիշատակարաններից մեկում *փեսայ* բառը գործածվել է *-նի* հոգնակերտ վերջավորությամբ՝ *յ* վերջնահանգի պահպանումով՝ *փեսայնի*⁹: 17-րդ դարի հիշատակարանների հետևյալ օրինակներում առկա չէ *յ*-ն, որը միջինհայերենյան վաղ շրջանից ի վեր արդեն չէր արտասանվում՝ «**փեսանուն**՝ Ղայէ և Խաշերին» (Գ 116), «յետոյ **փաշանաց** փոփոխում եղաւ, հին պատրիարքն **փաշանուն** կաշառ երետ» (Բ 522),

-ք հոգնակերտ մասնիկի իմաստի մթագնման հետևանք են հավելյալ *-եր* հոգնակերտի կցումով հետևյալ օրինակները. «**Վանքեր** բազում և ջաղջնի» (Բ 250),

⁶ Տե՛ս **ԷՄ Տասնորդ**, Երևան, 1990, էջ 166:

⁷ Տե՛ս **Թ. Պապկոյան**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Ե., 1991, հ. 3, էջ 428:

⁸ Տե՛ս **Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան**, Հայոց լեզվի պատմության գործնական դասընթաց, Ե., 2002, էջ 40:

⁹ Տե՛ս **Լ. Հովսեփյան**, նշվ. աշխ., էջ 19:

բանքեր (Բ 315), «**Լրծքեր** բազում կայր գոմշնի» (Բ 248), «զի Քաշանու խանն Ազախ սէֆէր գնացին՝ **Ճանալքերէն** մանգուլ արին» (Բ 858):

Նկատվում է նաև հակառակ երևույթը, երբ **-ք**-ն ավելանում է **-էր** հոգնակերտին՝ **սպապերքն** (Բ 59), «Վրաց տան **բերդերքն** որ կային, Թումանիս, Տփղիս և Գօրին, Ելին յառաջ շահ Ապասին» (Ա 367):

Տարածված են **-որայք** // **-որեայք** հավաքական մասնիկներով հետևյալ բառաձևերը. **վանորայք** (Ա 206, Գ 185), **արտորայք** (Բ 212), «**զգեղորայքն** այրեց» (Ա 215), «**Բերդորայքն** դատարկ թողին» (Ա 367), **գեղաւրեայք** (Բ 247), ի վերայ **գեղաւրեայցն** (Բ 318), **վանորեայք** (Ա 392), հնչյունափոխված՝ երեք համբայ **գեղորէիքն** (Բ 329), **գիւղորէից** (Ա 265), **ի գեղորէս** (Բ 689): «**գեղաւրէիքն** և յՈստանայ մինչ ի Խօշար» (Գ 204),

Ի վերջնահանգով բառերի նմանությամբ **-աց** վերջավորության փոխարեն տրականի **-եաց** վերջավորությունն է առկա հետևյալ բառաձևերում. **մերձաւորեացս** (Բ 466), «Յոյժ **աւրհնեաց** են արժանի»¹⁰ (Բ 481), **յարդունեաց** իւրոց (Բ 360):

Տեղի բառը հիշատակարաններից մեկում **ո** հոլովման փոխարեն ենթարկվել է **ա** արտաքին հոլովման. «ի քարաժեռ դժուարամուտ **տեղեայն** ի խնդիր ականցն զանազանելոյ» (Բ 533) . կարելի է նաև կարծել, որ **տեղեայք** է եղել սկզբնական ձևը, **ք**-ն ընդօրինակությունների ժամանակ չի գրառվել, մանավանդ որ հոգնակի ներգոյականը միջինհայերենյան սկզբնական շրջանից ի վեր կազմվել է նաև հոգնակի ուղղականից **ի** նախդրով:

Որոշ գոյականներ ցուցաբերում են հոլովական բազմաձևություն: Այդ առումով աչքի է ընկնում հատկապես **քոյր** գոյականը, որը վկայություն է ստացել հետևյալ ձևերով՝ **քուէրն** (435), **քուերն**՝ Ազիզին (Բ 801), **քուէր** (Ա 116), **քուերն** (Բ 810), **քուերցն** (Ա 180, Ա 489), **քվերցն** (Ա 91, 378, 782), **հօրքուերցն** (Ա 372), **հաւրաքուերցն** (Ա 708), **քվերորդի** (Ա 359), **քվերորդցն** (Բ 782), **մաւրքուեր** (Բ 44), **մօրքուերն** (Ա 302), **հօրքուեր** որդւոյն իմոյ (Ա 192), **քիւէր** (Ա 148), **քիւեր** որդոցն իմ // նոցին **քուերն** (Ա 148), **քնէր** (Ա 92, Ա 178, Ա 238, Ա 334), **քրոջ** (Ա 189), **քուրոջ** (Ա 123, Ա 162, Ա 635, Բ 68), **քուրոչն** (Ա 373),

¹⁰ Նոր բառգիրք հայկազեան լեզուի (այսուհետև՝ ՆՀԲ)՝ *օրհն*, ի, ից. գ. նոյն ընդ օրհնութիւն:

հորքուրոջն (Բ 555), **քորոջ** (Ա 256), քորոջ (Ա 491), քուրոջն // քորոջն (Բ 91-92), «**քուրայն** և գեղբարքն իւր» (Բ 44), **քենն** Ղզլարբեկուն (Բ 13), իւր **քաւրն** (Բ 314):

Նշված ձևերն էլ իրենց հերթին բազմաձևության հիմք են տալիս նաև հոգնակի թվի դեպքում. հոգնակի ուղղականի ու հոգնակի հայցականի տարբեր հիմքերից կազմություն՝ **քորք** (Ա 324), քորքն իւր (Ա 324), զքորս իւր զԽրմըզ և զՄարգարիտ (Բ 140), ցեղիցն մերոց և ամենայն զարմի, **զքորքն** իմ, դուք յիշեալ լիջիք ի դպրութիւն կենաց, Ջատկին կիրակին ձեռնադրեցին զտէր Մելքեսէթն (Գ 4), գերկոսին **քուրքն** իմ (Ա 132), **քուէրք** (Ա 338), քուէրքն իւր (267), զքուէրքն իմ (Ա 43,12), քվերքն իւր (Բ 765), հայրաքուէրք, մայրաքուէրք (Բ 141), զհորքւէրքն իմ (Ա 435), զքւէրքն (Ա 316), զհորաքորսն (Բ 433), **քէրք** (Բ 449, Բ 491), զքէոսն (Բ 492). վերջիններից էլ ծագում են հետևյալ թեք ձևերը. իմ **քէրց** Ջանադին և իւր որդւոցն (Բ 635), քերցն իւրոց (Ա 77), **քէոցն** (Բ 808), **քվէրացն** (Ա 262, Ա 334), **քկէրցն** (Ա 408, Բ 353):

Ձուգաձևությունները հաճախ հանդես են գալիս կողք կողքի, ինչպես՝ «**քորոջն**՝ Հոփսիսիմէ և միւս **քենն**՝ Գոհարին» (Գ 31):

Քաւր բառաձևը հավանաբար կազմվել է *մայր*, *հայր* և *եղբայր* բառերի համապատասխան ձևերի համաբանությամբ՝ «իւր **հաւրեղբաւրն**՝ Ուղուրլուին, եւ իւր **քաւրն**՝ Մարթապային» (Բ 314): Կարելի է կարծել, որ **քուէր/ք/** և վերոհիշյալ **տղէրք** բառաձևերն էլ կազմվել են *ուստր*, *դուստր* բառերի *է* ներքին թեքման ձևերի նմանողությամբ:

Այնուհետև նկատվում են հետևյալ զուգաձևությունները՝ **պապուն** (Բ305), պապուս (Ա 395) // **պապոն**՝ Մարտիրոս քահանային (Բ 21), **պապոյն** և **մամուն** (Ա 52, 302), **մամոյն** (Բ 360), **կողակցուն** (Ա 577) // **կողակցին** // **կողակիցին** (Բ 418) // **կողակցոյն** (Բ 231), կողակցոյն (Ա 390, 810) // **կողակցոն** (3 անգամ, Ա 610), կողակցոն (4 անգամ, Բ 255) // **կողակցոյն** (Բ 314) // **կինակցին** (Ա 208) // **կենակցուն** (Ա 620, 623) // **կենակցոյն** իւրոյ (Ա 434), **իրիցուի** (Բ 383, 408, 561, 791), իրիցւի (Բ 33) // **երիցւի** (Բ 263, 560) // **իրիցի** (Բ 222), իրիցիս (Բ 297) // **իրիցոյս** (Բ 301) // **երէցուս** (Բ 699) // **աւագիրիցուն** (Բ 505), **իրիցուէս** (Ա 117) // **երիցուվէս** (Բ 283), յետ **մահուն** (Բ 182) // **մահոյ** (Բ 253), **որդւոցն** (Բ 287) // իւրան Մուրատ **յորդացն** այս անուն... (Բ 414), **յորդացն** (Բ 417),

եղբայրցն (Բ 72) // *եղբորցն* // *եղբարցն* (Բ 496), *հրիցկինին* (Բ 293, 339), *երիցկնչս* (Բ 445) // *երիցակնչ* (Բ 788), յայս *տեղոջ* յիշեա (Բ 438) // *տեղուս* (Բ 342), *գեղիս* // *գեղջի* (նույն տեղում, Ա 363), *պարոնտիրի* եղբորն (Ա 386), պարոնտիրին (Ա 697) // *պարոնտիրոջն* (Ա 460), *պարոնտէրին* (Բ 702), «ի խնդիր աստուածայսէր և բարեմիտ *տանուտրոջն*» (Ա 69), *տանուտրոջն* (Բ 212, 480), տանուտրոջ (Ա 95): «Ես անպիտան մեղօոր Պետրոսն տետրս արետ Շիրագ քաղաքում, ով կար/դ/այ, արժանի լինի *տեսուն* Քրիստոսի, թէ ողորմի ասի գրողացս» (Ա 275) // Աստուծոյ *տեսուն* արժանի արասցէ (Ա 320), «քո սբ. *տիստոյ* արժանի արա» (Ա 144):

Ինչպէս հայտնի է, գրաբարում *ի* հանգով հիմքերի վերջնահնչյունը թեք հոլովներում փոխվել է *ւ*-ի, սակայն միջինհայերենյան շրջանում *ի* վերջնահնչյունը պարզապէս ընկել է: Այս երևույթը հիշատակարաններում վկայված է բազմաթիվ օրինակներով: Այն համակարգային փոփոխության հետևանք է՝ *եկեղեցոյ* (Ա 137, 287, 427), ի մէջ *եկեղեցոջ* (Բ 649), *եկեղեցոյն* խազնան (Բ 651), *եղբարորդոյն* (Բ 140), քիւեր *որդոցն* իմ (Բ 148), «յիշատակ *հոգոյ* իւրոյ» (Բ 207), *հոգոյ* զաւակ (Բ 89), *հոգոցն* (381), ամբիժ *աղաւնոյ* (Բ 449), միոյ *ողորմոյ* (Ա 105), ըստ *արժանոյն* (Ա 343), արփիփայլ *րաբունոյն* (Ա 117, 220), *գերոյ* տէր (Բ 56), «զարդարեցաք *ոսկով* և լազուարդով» (Բ 112), յայսմ *տարոջ* (Գ 104):

Որոշ դեպքերում նկատվում է սեռական - տրականի ձևում հոլովիչից առաջ չպատճառաբանված *ւ*-ի առկայություն: Եթե նախորդը լեզվի բնականոն զարգացման, այն է՝ պարզեցման, կրճատման հետևանք է, ապա վերջինս պայմանավորված է գրաբարյան ձևերը լավ չիմանալով հանդերձ գրաբար գրելու ձգտումով՝ *տիկնոջն*, *ննջեցելոց* (Բ 408, Գրիչ՝ Սիմոն երեց, Վայր՝ Լով), ի լուսակառուց *յաթոռոյն* (Բ 806), *աներոջ* (Բ 807), գեղեցիկ *երանգլոց* (Բ 566):

Յեղ բառը գրաբարում ենթարկվել է *ի* հոլովման, հետագայում՝ նաև *ու* հոլովման, որ և արձանագրվել է 13-րդ դարի հիշատակարաններից մեկում, որը նկատել է

ԼԸ հովսեփյանը¹¹: Բացառականի է հոլովակազմիչից առաջ, ինչպէս հայտնի է, *ու* /*ւ*, վ/-ն պահպանվել է *ու* արտաքին թեքման որոշ բառերում: Այդպիսի

¹¹ Տե՛ս նշվո՞ աշխԸ, էջ 29-30:

դրսևորմամբ է առկայացել *ցեղ* բառը 17-րդ դարի հիշատակարանում □ «Անմեղադիր լերուք խոշորութեան գրոյս, երկու և երեք աշակերտի բան է, վասն այն *ցեղուէ* ցեղ է, մէկ գրիչ չէ» (Բ 368, Գրիչ Ստեփանոս, Վայր՝ Նոր Զուղայ):

Հետևյալ օրինակներում գրաբարյան ներքին թեքման բառերը գործածվել են *n* արտաքին հոլովմամբ՝ ամենայն հավանականությամբ որպես գրաբարյան գեր-ճշգրտության հետևանք՝ «*ամատնոյն* արն էր» (Բ 76), «որդոյս Խանպէկին, և *թոռնոյս* Մինասին» (Բ 40): Մեր կարծիքով՝ քանի որ գրաբարյան *n* արտաքին հոլովումը հետագայում չի պահպանվել, գրաբարին ոչ քաջատեղյակները տարբեր բառեր, այդ թվում և ներքին թեքումով, ենթարկել են *n* հոլովման՝ դրանք կարծելով գրաբարյան ճշգրիտ ձևեր: Հավանաբար նույնպիսի հանգամանքներում է ձևավորվել *քրիստոնէայ* (*քրիստոնէի*) բառի հետևյալ ձևը □ «ի տուն աստուածասէր *քրիստոնոյն* Վարդիկին» (Ա 97), ինչպես նաև՝ *թոռոյն* □ «որդոյն՝ Պաղտասարին, *թոռոյն*՝ Վարդանին» (Ա 754):

Մի շարք բառեր ստացել են կրկնակի հոլովակազմիչ՝ հավանաբար նախորդի հոլովական իմաստի չգիտակցման հետևանքով □ «զամենայն թու/տ/ս *սուլթանիայ* ձրի շնորհեաց» (Բ 55), ընդ *աղբերին* (Բ 54) // *աղբիրի* (40), *դստերին* (Բ 347), «և իւր *դստերին*՝ Սթըլանաթին» (Բ 366): «...որ էր աւարտ գրոյս աւաք հրէց այսմ *գեղջի*» (Բ 363), «յետոյ *ճալալուին* ժամանակն վերուցած» (Ա 538), ի *մենջէ* (Բ 470), «ևս առաւել ի Գրիգոր Տաթևացոյ *քաղւածոյէն*» (Ա 701) , «...գնեցի ի հալալ *վաստակոցէն*, դառն ժամանակի որ իրեզ տարի խիստ դժար սով էր» (Ա 262), «պղերզ գրչի Յակոբ *երիցւի*» (Բ 263) (Բ 560) // *իրիցուի* (Բ 383, 408, 561), «Դարձեալ յիշեցէք Խանումն, Յակոբն, □ □ □ իւրեանց *ամէնեցունին*» (Գ 225):

Հետևյալ օրինակներում սեռական-տրականի ձևին ավելացված *-այ*-ը կարելի է դիտել որպես *ա* որոշյալ հոդ, քանի որ այդ երևույթը առկա է որոշ բարբառներում, ուղղակի ավանդաբար գրության մեջ արտահայտվել է նաև *յ*-ն «...ով ընթերցողք աս իշայտակս ողորմիա ասացէք իմ *հորայ* մղտիսի Յոսուպին և իմ *ծնողացայ* մղտիսի Վարթիսաթուն» (Ա 211), «արծաթէ խաչ մի իմ *աներոջայ* Խաչատրին» (Ա 745):

Հիշատակագիրները հիշատակարանների վերջում հաճախ գրում են, որ տվյալ ձեռագրից օգտվողները «Տէր ողորմեա»-ով հիշեն իրենց հարազատներին: *Ողորմեա* բայաձևը, որը տվյալ պարագայում գոյականի արժեք է ձեռք բերել, հոլովիչից առաջ, հոլովման օրինաչափությանը համապատասխան, պետք է ենթարկվի *եա > է / է /* հնչյունափոխության, ինչպես հետևյալ դեպքում է՝ *ողորմէի* (Բ 194): Բայց ավելի հաճախակի գործածություն ունեն անհնչյունափոխ ձևերը, ընդ որում՝ հաճախ *է* ձայնավորին փոխարինում է *ի*-ն՝ *ողորմեայի* (Ա 557) // *ողորմիայի* (Բ 134), Տէր *ողորմեաի* (Բ 289, 313, 597), *ողորմիաի* (Բ 343): Վկայվել են նաև առանց *է / ի /*-ի օրինակներ, ինչպես՝ *ողորմայի* (Ա 687, 544), վասն միոյ *ողորմայի* (Ա 550): Մի շարք օրինակներում էլ հոլովման ժամանակ չի պահպանվել *եա* երկբարբառը, կամ պարզապես այդ ձևերը աղերսվում են ըղձական եղանակի *ողորմի* (Աստված ողորմի) բայաձևից՝ *ողորմի* (Ա 119, Ա 551, 520), Տէր *ողորմի* (Բ 590), «յիշեցէք միով *ողորմի* տեսողք սորին և վայելողք զսայ, և Աստուած յիշէ զյիշողքդ» (Գ 154), միոյ *ողորմոյ* (Ա 626), «միոյ *ողորմոյ* արժանի առնէք զիս» (Ա 105), «մի բերան ողորմոյ արժանի առնէք» (260): Ըղձական եղանակի *ողորմիս* բայաձևի փոխանվանական կիրառությամբ էլ առկայացել են հետևյալները՝ «*ողորմիս* ասացէք» (Բ 5), «Առ ձեզ գոչեմ աղերսալի, Վասն միոյ *ողորմիսի*» (Ա 592), «որ միով *ողորմիսի* յիշեսջիք...» (Ա 703):

Հոլովման ժամանակ բառավերջյան *այ* երկբարբառի՝ բարբառներում տարածված անկման երևույթներ են նկատվում հետևյալ բառաձևերում՝ Հայր *մեղի* (Բ 518), հմմտ՝ «Քրիստոս որդիի և Հայր *մեղայի* յիշէք ի Քրիստոս» (Ա 124), Հայր *մեղաի* (Ա 472), «յիշէք զիս մի Հայր *մեղայիմն*» (Գ 209), «զփեսայն ի հարսնէ և հարսն *ի փեսէ*, զայր ի կնոջէ և կին այրէ» (Բ 653), *փեսին* (Բ 299, Բ 360), *աբեղի* (Ա 186, 709 կն), *աբեղիմ* (Բ 208), *տղին* (Ա 319), *տղի* (Ա 519), «Եւ կամէի ի Լէհաց տունն երթալ կնկնով, *տղով* և ի հոն տեղ մի կամ ի գյուղ մի մինչև ի մահ կենալ» (Ա 415), ի մեջն այս *տղոցն* (Ա 555), *փաշին* (Ա 95), *խաճի* (Ա 743):

Է՞մ Մկրտչանը իր աշխատություններից մեկում, ընդհանուր գծերով անդրադառնալով ձեռագրերի հիշատակարանների լեզվական իրողություններին, իրավացիորեն

նշում է, որ ամեն հաջորդող դարի հիշատակարաններում հիշատակագիրներն աստիճանաբար ավելի շատ են տուրք տվել իրենց կենդանի խոսվածքին՝ հաղորդելով կենցաղային մանրամասներ¹²:

Առանձնակի հետաքրքրություն ներկայացնող բարբառային իրողությունները, ցավոք սրտի, մեծ մասամբ դրսևորվել են կարճառոտ հիշատակարաններում, որոնցում սովորաբար չի նշվել հիշատակագրի ծագումը: Վերոհիշյալ մի շարք օրինակներ ակնհայտորեն չիմացաբար են դրսևորվել անսովոր ձևերով: Դիտարկված բառաձևերի մեծ մասն էլ սովորական է նաև արդի բարբառային-խոսակցական հայերենի համար: Այնուամենայնիվ, ուսումնասիրությունների ընթացքում ինչ էլ վերհանվի և բացահայտվի, որոշակի ներդրում կլինի հայոց լեզվի պատմության և առհասարակ հայերենագիտության համար:

Хачатрян Валентин

НАН РА институт языка

Некоторые грамматические реалии в колофонах рукописей 17-ого века

В статье рассматриваются нерегулярные и неправильные грамматические формы, которые встречаются в колофонах рукописей. Наличие этих форм в поэзии обусловлено искусственным вмешательством переписчиков для сохранения рифмы и ритма, в прозе эти формы образовались аналогично другим формам.

Khachatryan Valentin

Institute of language of NAS RA

Grammatic Realities in the 17-th Century's Handwritten Colophones

In this article are considered irregular and wrong grammatic forms, which meet in hishatakarans of manuscripts . The avalibility of these forms in the poetry is caused by artificial intervention of witters for conservation of rhyme and rhythm. In the prose these forms were formed by analogy of other words.

¹² Տե՛ս **ՀԺ Մկրտչյան**, Աշխարհաբարի տարրերը միջնադարի գրական հուշարձաններում, ԵՊ, 1980, էջ 62-71:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Բառնասյան Ջեմմա - Կայուն բառակապակցությունները որպես ժողովրդի պատկերավոր լեզվամտածողության ցուցիչ.....	3
Գյուրջինյան Դավիթ - Հայ առաջնաբաղադրիչով հատվածական բաղադրությունների կապակցելիությունը.....	10
Գևորգյան Գայանե - Արևմտահայ խոսվածքների լեզվաաշխարհագրական բնութագիրը. Պարտիզակ.....	20
Զաքարյան Հովհաննես - Օտարաբանությունների գործածության մի քանի դրդապատճառներ.....	31
Խաչատրյան Հասմիկ - Ծիսապաշտամունքային որոշ բառեր Համշենի բարբառում.....	41
Կատվայան Վիկտոր - Մակուի խոսվածքը Գեղարքունիքի մարզում.....	51
Հակոբյան Ֆրիդա - Կորպուսային լեզվաբանության կիրառական ոլորտները.....	59
Հակոբյան Ֆրիդա - Ժամանակակից հայերենի բառակազմության ձևային նկարագրության խնդիրներ.....	66
Հեքեքյան Նարինե - <i>Առավոտ</i> և <i>Էրեկո</i> բառերի իմաստային վերլուծություն.....	76
Պետրոսյան Արմեն - Քաջ բառի ստուգաբանությունը.....	87
Վարդանյան Արտակ - Նորքի խոսվածքի և Նախիջևանի տարածքի որոշ խոսվածքների բառապաշարային ընդհանրությունները.....	92
Խաչատրյան Վալենտին -Քերականական որոշ իրողություններ Ձեռագրերի 17-րդ դարի հիշատակարաններում.	99